

303.8

Արարողության Կրթական
տարբերակների ոլորտում

265

Ա-80

Կ. Պոլիս

1857

2010

1 B 2001.

121

ՀԱՌ
ՄԿՐՏՈՒԹԵԼՆ

ԵՒ

ՎԵՐՍՏԻՆ ԺՆՆԴԵԱՆ

265
5-80

265

5-80

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՐՈՒՆ



ՈՂՋԱՄԻՏ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆԸ ՔԿՆՈՒԹԻՒՆԸ

ՅՕՐԻՆԵԱՅ

ԱԶՆԻՒ ԿՈՉՈՒՅԾ ԿԻՆ ԲԵՐԻԱՅԻՆԵՐՈՒՆ

ՀԵՏԵՒՈՂ ՄԸ

Սիբեւիներ՝ ամէն հոգիի մի հաւատաք . հապա հոգի-
ները փորձեցէք թէ արդեօք Աստուծոյ են : Ա Յ-Կ .
Դ . 1 : Ամէն բան փորձեցէք , բարին ամո՛ւր
բռնեցէք : Ա թէ . Ե . 21 :



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1857

227

Ասանք Թեաստղոնիկէի մէջ եղողներէն աւելի աղին
մարդիկ էին, որ Աստուծոյ խօսքը կատարեալ յօժա-
րութեամբ ընդունեցին, և ամէն օր գիրքերը կը քննէին՝
Թէ աս բաները ասանկ է: Գործ. ժե. 11:



37462-67

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ներկայ տետրակիս մեջ քննուած նիւթերը շատ երեւի ու ամէն մարդու խիստ հարկաւոր են . վասն զի մեր օրհնեալ Տէրը ըսաւ . “ Ան որ հաւատայ՝ ու մըկրտուի , պիտի փրկուի , և ան որ չհաւատայ , պիտի դատապարտուի ” : Մարկ . ԺԶ . 16 : Նաև “ Ճըմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի , Թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի , չկրնար Աստուծոյ Թագաւորութիւնը տեսնել . . . : Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի , չկրնար Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել . . . : Դուն մի՛ զարմանար որ քեզի ըսի , Պէտք է ձեզի նորէն ծնանիլ ” : Յովհ . Գ . 3 , 5 , 7 : Աւրեմս որչափ որ հարկաւոր բան է մարդուս բուն իր հոգւոյն փրկութիւնը , այնքան ալ հարկաւոր է ամէն մարդու ճըմարտասոյէս գիտնալ հաւատոյ և մկրտութեան բնութիւնը , և ջուրէն ու Հոգիէն ծնանելուն ինչ ըլլալը :

Աւստի կ'աղաչեմ , սիրելի ընթերցող որ առանց նախապաշարման կարգաս աս փոքրիկ տետրակը անաչառ մտք և զգուշութեամբ , ինտոր որ ասանկ երեւելի նիւթի մը կը վայլէ : “ Ձեր սրտին մեջը գրէ՛ք ան ամէն խօսքերը՝ որոնք այսօր ձեզի վկայութիւն բերի . . . : Բանդի ասիկայ ձեզի պարտալ բան մը չէ՛ . որովհետև ձեր կեանքն է ” : Ի Օրին . ԼԲ . 46 , 47 : Եսայ . ԾԵ . 3 :

Հոգ չէ՛ Թէ աս նիւթիս վրայ ես կամ ուրիշ մը ինչ

51564-4. h.

կըսենք քեզի, կամ բոլոր մարդիկ ինչ կըսեն. այլ իխառ հարկաւոր է գիտնալ թէ Աստուած ինչ կըսէ : Թէ որ կ'ուզես ճշմարտութեան ինչ ըլլալը գիտնալ, պէտք է որ անոր խօսքին մէջ փնտռես անիկայ. ինչու որ անոր խօսքը ճշմարտութիւն է : Յով. Ժ. 17 : Թէ որ մարդոց խօսքերը կը համեմատին Աստուծոյ խօսքին՝ ընդունուելու են. բայց թէ որ չեն համեմատիր՝ պէտք է մերժել զանոնք, ապա թէ ոչ՝ մեր հոգիներուն կործանմանը կ'առաջնորդեն զվեզ : Գովուեցան Բերիացիք, վասն զի առաքեալի մը անգամ սորվեցուցած բաները չուզեցին ընդունիլ՝ առանց քննելու և տեսնելու թէ համեմատ են անոնք Սուրբ Գրոց : Գործ. Ժ. 11 : Դուն ալ հետևէ ուրեմն անոնց գովելի օրինակին, և Քրիստոսի ամենուս տուած պատուիրանին համեմատ՝ Գիւրքերը քննէ՛ (Յով. Ե. 39), որոնք միամիտները իմաստուն ընելու (Սաղ. ԾԺԹ. 130) արուած են, և որոնք որ մանուկներն ալ կրնան իմաստուն ընել փրկուելու, (Բ. ՏԻՏ. Գ. 15), որ դուն կարենաս գիտնալ թէ « սա բաները ասանկ է » : Գործ. Ժ. 11 : Ասիկայ ըրէ խոնարհաբար աղութելով որ Սուրբ Հոգին քեզ լուսաւորէ, և ճշմարիտ փափաք մը տայ քեզի՝ ճշմարտութիւնը սորվելու և անոր հնազանդելու, և անշուշտ պիտի գանես ճշմարտութեան ճամբան ու պիտի փրկուիս : Բայց թէ որ ասիկայ չընես, շատ հաւանական է որ վճռապէս անպատմելի և յաւիտենական արտմութեամբ պիտի սորվիս՝ թէ « Կայ եղեր ճամբայ մը որ թէպէտ շիտակ էրեցեր է » քեզի, ու նաև շատ ուրիշներուն, « բայց անոր վախճանը մահուան ճամբաներն է » : Առաջ. Ժ. 25 : Թէ որ աս հետևեալ երեսներուն մէջ ըսուածը Սուրբ Գրոց մէջ յայտնուած Աստուծոյ խօսքին համեմատ չես գտներ, մի ընդունիր անիկայ. բայց թէ որ համեմատ կը գտնես՝ ընդունէ անիկայ իբրև ճիշդ ան ճշմարտութիւնը որով որ աշխարհս պիտի դատուի, և որով որ քու յաւիտենական վիճակդ պիտի որոշուի :

Գ Լ Ո Ւ Խ Ա

Մկրտութեան վրայ :

Մկրտութիւնը Քրիստոսէն հրամայուած
կանոն մըն է : Երբ որ խրկեց Տէրն մեր իր
առաքեալները Աւետարանը քարոզելու բոլոր
աշխարհ, չէ թէ միայն պատուիրեց ա-
նոնց որ աշակերտեն ազգերը, այլ նաև մկրտ-
տեն զանոնք : Մատթ. 10. 19 : Ուստի եր-
բոր մարդիկ կը հաւատային Քրիստոսի՝ կը
մկրտուէին, ինչպէս որ կը սորվինք Նոր Ար-
տակարանին մէջի բազմաթիւ օրինակներէն
և ծանօթութիւններէն : Քրիստոնէութեան
առաջին ժամանակէն 'ի վեր, ամէն դարու
և ամէն Քրիստոնէից մէջ աս կանոնը պահ-
ուած է : Բաց 'ի հին ատենի քանի մը մար-
դոցմէ և փոքր ազանդէ մը որ կայ հիմա
Անգղիայի ու Ամերիգայի մէջ Բարեկամք
(կամ անարգութեան համար Քուէյքըրս
Դոդաչոդ) ըսուած, բնաւ չեղան անանկ քր-
րիստոնէաներ որ անհարկաւոր սեպէին
մկրտութիւնը, թէպէտ և տարբեր կար-

Տիրքներ եղած են անոր ինչ մտօք և ինչ աստիճան հարկաւոր ըլլալուն վրայ : Աս նիւթին վրայօք պիտի խօսինք տեարակիս մէջը (Տէ՞ • Գ՛Լ • Ե •) , բայց նախ կ'ուզենք մկրտտութեան ինչ ըլլալը քննել :

Ա • Թէ ինչ է մկրտութիւնը :

Մկրտութիւնը՝ ինչպէս որ վերը ըսինք Քրիստոսէն հրամայուած կանոն մըն է , ու պէտք է որ բոլոր իրեն հետևողները պահեն անիկայ : Միաձայն հաւանութեամբ ընդունուած է թէ մկրտութիւնը միայն հաւատացեալներուն և անոնց տղոցը պէտք է մատակարարուի , և թէ հեթանոս մը կամ անհաւատ մը արժանի չէ մկրտուելու՝ քանի որ դարձի եկած չէ :

Մկրտութիւնը պէտք է կատարուիլ « Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Արբոյ » : Մատթ. • ԻԸ • 19 : Յիրաւի Յովհաննէս Մկրտտիչ աս անունովը չմկրտեց , բայց անոր մկրտութիւնն ալ քրիստոնէական մկրտութիւն չէր , և որ և իցէ մկրտութիւն յանուն Արբոյ Երրորդութեան չմատակարարուած , իբրև քրիստոնէական մկրտութիւն ընդունուելու չէ :

Մկրտութիւնը ջրով կատարուելու է : Աս էր Յովհաննու և Հրէից՝ իրենց մկրտութիւն ըրած ատենը գործածած նիւթը , նմանապէս առաքելոց , և առաջին ատենի քրիստոնէաներուն գործածածը . (Տէ՞ • Գ՞րԺ •

Բ. 36, և 37) . և մինչև ցայսօր բոլոր Քրիստոնեաները ջուրը ըրած են մի միայն գործածելու նիւթ աս խորհուրդին¹ :

Բ . Թէ ի՞նչ է Մկրտութեան գիտաւորութիւնը և օգուտը :

Երեք տեսակ կարծիք ընդունուած է Մկրտութեան գիտաւորութեանը և օգուտին .

¹ Սակայն ոմանք կ'ըսեն՝ թէ որ հեթանոս մը գար մի գայ , և միախաբի մկրտուիլ , բայց տակաւին չմկրտուած մեռցրնեն զինքը , ան մարդը բուն իր արիւնտ վը մկրտուած կ'ըլլայ , և 'ի նախատ աս բանին Քրիստոսի Ձեռնդէտոսի որդւոցը ըրած հարցումը օրինակ կը բերեն . որուն մէջ Քրիստոս իր կրեւը չարչարանքները կը նշանակէր ըսելով . “ Կրնա՞ք խմել ան գաւաթը՝ որ էս պիտի խմեմ , կամ ան մկրտութիւնովք մկրտուիլ՝ որ էս պիտի մկրտուիմ ” : Մատթ . Ի . 22 :

Բայց աս տեղ արդեօք Քրիստոս նկարագրական մկրտութեանը համար կը խօսի , ո՞չ . քանզի թէ որ ան չարչարանքները նկարագրական մկրտութիւն մը ըլլային , ուրեմն նաև նկարագրական գաւաթ մը խմել պիտի ըլլային , ուստի յայտնի է թէ իր խօսքերը այլաբանական էին : Քրիստոս ըսաւ ևս , “ Իմ գաւաթս պիտի խմէք , և ան մկրտութիւնովք որ էս մկրտուելու եմ , պիտի մկրտուիք ” , (Կամար . 23) , այսինքն իմ չարչարանքներու հազորդ պիտի ըլլաք : Եւ աս խօսքիս համեմատ Յակոբոս՝ աս երկուքին մեծը , Հերովդէսէն գլխատուեցաւ , (Գործ . ԺԲ . 2) , բայց Յովհաննէս թէ և շատ չարչարանքներ կրեց , սակայն Քրիստոսի համար չսպաննուեցաւ . ուստի ոչ ալ այլաբանական մտօք կրնայ ըսուիլ թէ

վրայով : Առաջին՝ թէ Մկրտում թիւնը ըստ
ինքեան վերստին ծնունդ, կամ նորէն ծը-
նանիլ է : Երկրորդ՝ թէ անիկայ ըստ ին-
քեան վերստին ծնունդ չէ, հապա վերս-
տին ծնանելու և սկզբնական մեղքէն սրբ-
բուելու միջոցը : Երրորդ՝ թէ անիկայ պար-
զապէս արտաքին նշան մըն է և օրինակ
վերստին ծննդեան . կնիք մը ան հոգևոր

ան իր արիւնովը մկրտուեցաւ, ինչու սր իր արիւնը չը-
թափուեցաւ : Ուստի Յովհաննէս մկրտուած էր ան մկրտ-
ուութեամբը, որով որ Քրիստոս մկրտուեցաւ, թէ-
պէտէ անոր անոճին համար մահ չճաշակեց : Արդ թէ
որ Յովհաննէս չմարտիրոսանաւով՝ ան մկրտութիւնովը
մկրտուած սեպուեցաւ, ապա ուրեմն մարտիրոսութեամբ
մեռնիլը չէ ան մկրտութիւնը : Ասկէց ՚ի զստ, թէ որ մէկ
հեթանոս մը ճմարտապէս հաւատայ, և մկրտուիլ չը-
կրցած մեռնի, անիկայ պիտի չփրկուի՝ ուրիշ մահուամբ
և ոչ մարտիրոսութեամբ մեռնելուն համար : Թէ որ
սպաննուելուն տեղը՝ հիւանդութիւնով մեռնի, իր հաւատ-
քը պիտի չփրկէ՞ զինքը : Այո, թէ որ մէկ մարդ մը
իր հաւատայ, կը փրկուի, թէև ախամայ կամօք չմկրտ-
ուած մեռնի . ուրեմն արիւնով մկրտութիւնը՝ ոչ նկարագ-
րական մտօք ոչ ալ այլաբանօրէն հարկաւորութիւն մը
ունի մարդուս փրկութեանը : Մարտիրոսութեամբ մեռ-
նիլը մկրտութիւն համարուելու չէ . թէ որ ճմարտիտ
հաւատք ունի մարտիրոսը, առանց մկրտուած ըլլալու
կրնայ փրկուիլ . թէ որ չունի ճմարտիտ հաւատք՝ ընաւ
չկրնար փրկուիլ : Ուրեմն չկայ անանկ վարդապետութիւն,
այսինքն՝ արիւնով մկրտուիլ, վասն զի մարմնոյն մկրտ-
ութիւնը միայն ջուրով կ'ըլլայ, և հոգիինը՝ միայն հո-
գևով Սրբով :

ուխտին՝ որն որ ճշմարիտ հաւատացեալը
Քրիստոսով Աստուծոյ հետ կ'ընէ, իրեն
և իր զաւկրներուն համար. գործողութիւն
մը՝ որով անիկայ Քրիստոսի վրայ եղած
իր հաւատքը կը ցուցնէ մարդոց առջև, և
զՔրիստոս գաւանդ ժողովրդոցը թիւը կը
մտնէ, ու երկրիս վրայի անոր անուանեալ
եկեղեցիին անդամը կ'ըլլայ :

Առաջին կարծիքը ընդունողները կը հա-
ւատան թէ վերստին ծնունդ չկայ, բաց 'ի
մկրտութեան արտաքին գործողութենէն.
անանկ որ երբոր շրեայ կամ շեթանոս
մը մկրտուի, ան մկրտութեան լոկ գործո-
ղութիւնն է իր վերստին ծնունդը : Բայց
աս կարծիքը ունեցողներուն թիւը միշտ
քիչ եղած է : Կան ուրիշները որոնք կ'ը-
սեն, թէ մկրտութիւնը ըստ ինքեան վերս-
տին ծնունդ է, որ ատեն միայն ըսել կ'ու-
զեն թէ մկրտութիւնը վերստին ծնունդ
յառաջ բերելու միջոցն է : Բայց ով որ աս
միտքը ունի սկստք չէ որ ան խօսքը ըսէ,
վասն զի վերստին ծնունդը թէ որ մկրտու-
թենէ, յառաջ եկած բան մըն է, ուրեմն
մկրտութենէն զատ բան է. որովհետեւ ար-
դիւնքը մի և նոյն բանը չէ սլատճառին հետ,
հասլատարբեր բան մը անկէց՝ և անով յա-
ռաջ եկած :

Ուրեմն քննենք՝ թէ վերստին ծնունդ
կ'ըլլայ մկրտութիւնով, անանկ որ եթէ մե-
կը մկրտուի, կարենանք ըսել թէ նորէն ծը-
նաւ անիկայ, վասն զի մկրտուեցաւ : Աս հար-
կաւոր խնդիրը սլիտի քննենք յետագայ
դիտոյն մէջ :

Գ Լ Ո Ւ Խ Բ

Թէ Մկրտութիւնը միջոց է վերստին ծննդեան :

Ըստ պատասխանը տալու համար պէտք է քննենք ,

Եւստ Թէ կայ Սուրբ Գրոց մէջ վկայութիւն մը Թէ մկրտութիւնը վերստին ծննդեան միջոցն է . քանզի Թէ որ կայ գրուած ասանկ բան մը , խնդիրը վճռուած է : Բայց տեղ մը այսպիսի վկայութիւն չենք գտներ : Միայն Թէ վերստին ծնունդը ու մկրտութիւնը մէկ տեղ յիշուած երկու վկայութիւն կը գտնենք որոնք հիմա պիտի քննենք :

Ընթացիւնը աս է . “ Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն ջնանի , չկրնար Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել ” : Յովհ . Գ . Ծ : Բայց ըսենք Թէ “ ջուրէն ծնանիլ ” ըսելը , մկրտուիլ ըսել է (որն որ յետոյ պիտի տեսնենք Թէ ամենեւին հաստատ չէ) , սակայն չըսեր Թէ ջուրէն ծնանիլ և Հոգիէն ծնանիլը մի և նոյն բան է , կամ Թէ մէկը միւսէն յառաջ կու գայ . այլ կ'իմացունէ Թէ երկուքն ալ հարկաւոր են , բայց գուցէ ամէն ատեն մէկ տեղ չեն պատահիր : Ըսենք Թէ աս “ ջուրէն ծնանիլ ” խօսքը

մկրտութիւն կրնշանակէ. բայց ահա Տէրն մեր ասոր վրայ ուրիշ մէկ երկրորդ բան մըն ալ աւելցունելով իբրև հարկաւոր, այսինքն Հոգիէն ծնանիլը, կը ցուցնէ թէ աս երկրորդը առջինէն տարբեր է և թէ անկէց յառաջ չգար:

Դարձեալ Տիտ. թղթոյն մէջ գլուխ Գ, համար 5, Առաքեալը կ'ըսէ. «Իր ողորմութեանը համեմատ մեզ փրկեց նորէն ծնանելու աւազանին միջոցովը՝ ու Սուրբ Հոգիին նորոգելովը»։ Հիմա ըսենք թէ աս «նորէն ծնանելու աւազանին», խօսքը մկրտութեան վերաբերութիւն մը ունի, որն որ ետքը պիտի տեսնենք թէ յայտնի չէ, բայց Առաքեալը չըսեր թէ ան աւազանը՝ այսինքն ան մկրտութիւնը նորէն ծնանիլն է, կամ նորէն ծնանիլ կը պատճառէ, այլ թէ անկայ նորէն ծնանելու աւազանը կամ մկրտութիւնն է. ըսել կ'ուզէ, չէ թէ Յովհաննէսին քարոզած ապաշխարութեանը կամ որ և իցէ Հրէական վարդապետութեան մը մկրտութիւնն է, հապա նորէն ծնանելու վարդապետութեանը մկրտութիւնն է։ Օրինակի աղազաւ Յովհաննէսին մկրտութիւնը ապաշխարութեան մկրտութիւն էր, (Մարկ. Ե. 4 : Գործ. Ժ. Գ. 24). չէ թէ իր մկրտութիւնը ապաշխարութիւն էր, կամ ապաշխարութիւն կը պատճառէր. չէ թէ մկրտութեամբ ապաշխարութիւն տալու համար կը մկրտէր, այլ ժողովուրդը կը մկրտուէր իբրև նշան և դաւանութիւն մը իր մեղքերէն զղջանալուն։ Ոչ թէ մկրտութեան

ապաշխարութիւն , այլ ապաշխարութեան մկրտութիւն քարոզեց Յովհաննէս : Նմանապէս թէ որ մկրտութիւնը վերստին ծնունդը լլար կամ պատճառէր , ան առէն Առաքեալը փոխանակ « նորէն ծնանելու աւազանին միջոցովը » ըսելու , պէտք էր ըսեր՝ « աւազանին նորէն ծնանելուն միջոցովը » , ինտոր որ նոյն համարին մէջ կ'ըսէ « Սուրբ Հոգիին նորոգելովը » : Բայց անոր ասանկ ըսելուն նայելով՝ կրտեսներ թէ Առաքեալը աղէկ գիտնարով թէ նոր ծնունդը Սուրբ Հոգիին գործն է , անոր համար կ'ըսէ « Սուրբ Հոգիին նորոգելը » . և թէ մկրտութիւնը միայն մէկ նշան մըն է վերստին ծննդեան , անոր համար կ'ըսէ , « նորէն ծնանելու աւազանը » . այսինքն նորոգելը Սուրբ Հոգիին կուտայ , քանզի անոր գործն է . և աւազանը կամ մկրտութիւնը՝ նորէն ծնանելուն կուտայ , քանզի անոր նշանը ու դաւանութիւնն է :

Երկրորդ՝ Սուրբ Գիրքերը որ չեն ըսեր մեզի թէ մկրտութիւնը նորէն ծնանելու միջոցն է , արդեօք կը ցուցնեն մեզի մէկ ուրիշ միջոց մը՝ որով աս փոփոխութիւնը կ'ըլայ :

Ի կանջ դիր ինչ կ'ըսէ Յակոբոս Առաքեալը . « Իր ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը » : Յակ . Ե . 18 : Ասանկ ալ Պետրոս կ'ըսէ , « Նորէն ծնած ըլլալով՝ չէ՛ թէ ապակհանացու սերմէն , հապա անասականացուէն՝ Աստուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը » : Ե Պե . Ե . 23 : Նաև Պո-

զոս կ'ըսէ, « Հողին սուրբ՝ Աստուծոյ խօսքն է »: Եփես. . Գ. . 17: Հիմայ տես, Յակոբոս չըսեր թէ Հողին Սուրբ Աստուած ծնաւ մեզ մկրտութեամբ, հապա կ'ըսէ թէ ծնաւ ճըշմարտութեան խօսքովը: Պետրոս ալ չըսեր թէ Նորէն ծնած ենք մկրտութեամբ, հապա կ'ըսէ թէ նորէն ծնած ենք Աստուծոյ խօսքովը: Նմանապէս Պօղոս չըսեր թէ Մըկրտութիւնն է ան գործիքը կամ միջոցը, որով կը գործէ Սուրբ Հողին, հապա կ'ըսէ թէ Աստուծոյ խօսքն է ան գործիքը: Ասանկ կ'ըսէ նաև Կորնթացիներուն, « Կը գոհանամ Աստուծմէ, որ ձեզմէ մէկը չըմկրտեցի, միայն թէ Կրիստոսը ու Գայիոսը . . և Ստեփաննէսին ընտանիքը », : Ե. Կորնթ. . Ե. . 14, 15: Ուստի գոհութիւն կու տանք Աստուծոյ թէ ինքը նորէն ծնանելու միջոցը չեղաւ անոնցմէ մէկուն: Միթէ ինքը ան նոյն դիտաւորութեամբը խրկուած չէր որ մարդոց նորոգութեան և վերկութեան գործը յառաջ տանի: Բայց եթէ մկրտութիւնը վերստին ծնունդ սեպուելու է, Պօղոս գոհութիւն կու տայ Աստուծոյ որ ինք միայն անոնցմէ մէկ քանին վերստին ծնաւ, և անմիջապէս ալ կը յարէ, « Ինչու որ Քրիստոս զիս մկրտելու չխրկեց, հապա աւետարանը քարոզելու », (հաճար 17). և դարձեալ, « Քրիստոս Յիսուսով ես ձեզ ծնայ աւետարանովը », . Գլ. . Գ. . 15: Պօղոս յայտնապէս կը սորվեցընէ մեզի աս տեղ թէ ինչ է վերստին ծնանելու միջոցը: Որ և իրաւ Կորնթոսի մէջ շատերը ծնաւ նոր կեանքի

մէջ Սուրբ Հոգիովը . և անոնք թէպէտ իր միջնորդութիւնովը ծնան, բայց անոր գործածած միջոցը չէ թէ մկրտութիւնն էր, հասարակ ճշմարտութեան խօսքին քարոզութիւնը, Աստուծոյ Աւետարանը և խօսքը : Ուրեմն արդէն որոշուեցաւ աս խնդիրը թէ՛ ոչ թէ Մկրտութիւնը, հասարակ Աստուծոյ խօսքն է վերստին ծնունդը կատարող միջոցը : Բայց աս նիւթը աղէկ մը հասկընալու համար, քննենք հիմա թէ ինչ կը նշանակէ վերստին ծնունդը : Ուրեմն,

Ի՞նչ է վերստին ծնունդը :

Վերստին ծնունդը՝ Հոգիին մեր մէջը կատարած մէկ գործողութիւնն է . և որովհետեւ Փրկիչն մեր կ'իմացունէ ասոր փրկիչութեան խիստ հարկաւոր ըլլալը, անտարակոյս Հոգւոյն սրբոյ մեր փրկիչութեանը համար կատարած դիտաւոր գործն է : Ան գործն է աս՝ որով երկինքը կը ստանանք, և առանց որոյ երկինքը կը կորսնցընենք : Վերստին ծնունդ խօսքը՝ յայտնապէս այլաբանօրէն է, սակայն այնպէս ըսուածք մը՝ որուն նշանակութիւնը դիւրաւ կը հասկըցուի : Ասիկայ անանկ մէկ փոփոխութիւն մըն է հոգւոր բաներուն նայելով, ինչպէս որ է բնական ծնունդը բնական բաներուն նայելով : Բնական ծննդեամբ, բնական աշխարհը կը մտնենք և մարդ կ'ըլլանք . վերստին ծննդեամբ Քրիստոսի Հոգւոր թագաւորութեանը մէջ կը մտնենք և Քրիստոսեայ

կ'ըլլանք : Բնական ծննդեամբ մեր երկրա-
 ւոր ծնողացը զաւակները և անոնց ընտա-
 նեացը ու գերդաստանին անդամները կ'ըլ-
 լանք . վերստին ծննդեամբ Աստուծոյ զաւակ-
 ները կ'ըլլանք հոգեւորական մտօք, իր ըն-
 տանիքին մէջը կ'ընդունուինք և իր Հոգե-
 ւոր գերդաստանին անդամները կ'ըլլանք : Բը-
 նական ծննդեամբ շատ նմանութիւն կ'ունե-
 նանք մեր ծնողացը մարմնոյ կողմանէ . կը
 ստանանք անոնց բնութիւնը, և մօտ ու կա-
 յուն միաւորութիւն մը ունինք անոնց հետ .
 վերստին ծննդեամբ Աստուածային բնութեա-
 նը հաղորդ կ'ըլլանք (Ի Պէ՞ . Ե . 4) . Ստեղ-
 ծողին սրտիւնքին պէս կ'ըլլանք (Կող . Գ . 10) .
 և կը միաւորինք անոր հետ անշակտելի մի-
 աւորութեան մը կապովը : Եփե՞ . Ի . 19—
 22 : Բնական ծննդեան փորձառութիւնը մէկ
 անգամ միայն կը կատարուի մեր վրայ . ա-
 նով կատարեալ մարդ կ'ըլլանք ըստ բնու-
 թեան, այլ ոչ ըստ հասակին . մարդու բը-
 նութիւն կ'ունենանք ու չէ թէ թռչունի
 կամ կենդանիի մը . մարմին մը կ'ունենանք
 իր ամէն մասունքները և անդամները կա-
 տարեալ, բայց անոնք փոքր ու տկար, և
 անիւ էտքը մեր անդամները ոչ կ'աւելնան
 և ոչ ալ իրենց ձևը կը փոխեն, հասլա մի-
 այն կ'աճին ու կը զօրանան և կը մեծնան :
 Ասանկ ալ վերստին ծննդեան փորձառու-
 թիւնը միայն մէկ անգամ կ'ըլլայ մեր վը-
 րայ . փոփոխութիւնը կատարեալ է ըստ բը-
 նութեան, այլ ոչ ըստ կատարելութեան :
 վերստին ծնած անձը սկիզբը կատարելու-

Թեան հասած քրիստոնեայ մը չէ, հապա
 Աստուծոյ մէկ զաւակը : Երբեմն շատ չըն-
 չին տկար և անզօր, բայց տակաւին հա-
 րազատ զաւակ մըն է. և անկէ ետքը չկայ
 ուրիշ փոփոխութիւն մը ան իր առջի նո-
 րէն ծնած ատենին պէս, հապա կ'աճի, կը
 զօրանայ և վերջապէս գեղեցիկ, առոյգ, բա-
 րեյարմար և կատարեալ քրիստոնեայ մը կ'ըլ-
 լայ : Եւ որովհետեւ սրբագործութիւնը ըստ
 բնութեան վերստին ծնունդէն չտարբերիր,
 հապա միայն անոր սկսածը յառաջ կը տա-
 նի դէպի կատարելութեան, վասնորոյ վերս-
 տին ծննդեամբ ինչ սկսիլը աղէկ իմանա-
 լու համար պէտք է լաւ հասկընալ սրբա-
 գործութեամբ ինչ բան յառաջ տարուի-
 լը :

«Մարմինէն ծնանը մարմին է, ու Հողի-
 նէն ծնածը՝ հողի է» : Յովհ. Գ. Ե : Ամէն
 ծնեալ իր ծնողին բնութիւնը և անոր նը-
 մանութիւնը կ'ունենայ : Մեր բնական ծը-
 ննդեամբը՝ մարմինէ ծնած ենք և մարմին ե-
 ղած ենք, այսինքն ոչ միայն մարդ կ'ըլլանք
 մարդկային բնութիւն ստացած, այլ նաև
 կ'ըլլանք մեղաւոր՝ ապականեալ և եղծ-
 եալ բնութեան տէր : Մարմնոյ գործքե-
 րը աս բնութեանը ձևացուցած արդիւնք-
 ներն են. անոնցմէ կը սորվինք ան բնութեան
 ինչ ըլլալը՝ ուրկէց որ անոնք յառաջ կու-
 դան : Ուրեմն ինչ են ան գործքերը. «Մար-
 մինին գործքերը յայտնի են, որ ասոնք են.
 չնութիւն, սրունկութիւն, պղծութիւն, գի-
 ճութիւն, կուսպաշտութիւն, կախարդու-

Թիւն, ԹշնամուԹիւններ, կռիւներ, նախանձ
 ներ, բարկուԹիւններ, հակառակուԹիւն-
 ներ, երկսրառակուԹիւններ, բաժանումներ,
 չար նայուածքներ, մարդասպանուԹիւններ,
 գինովուԹիւններ, անառակուԹիւններ, ու
 ինչ որ ասոնց նման են, : Գաղ. Ե. 19—21 :
 “Ան որ իր մարմինն կը սերմանէ՝ ան մար-
 մինէն ապականուԹիւն պիտի հնձէ, : Գաղ. Ե.
 8 : “Ես . . . մարմնով՝ մեղաց օրէնքին
 կը ծառայեմ, : Հռով. Ե. 25 : “Չեր ազա-
 տուԹիւնը մարմնոյ ցանկուԹիւններու պատ-
 ճառ չըլլայ, : Գաղ. Ե. 13 : “Քանզի ամէն
 բան որ աշխարհի մէջ է, մարմնոյ ցանկու-
 Թիւնը, և աչաց ցանկուԹիւնը, և աս կեան-
 քիս ամբարտաւանուԹիւնը, Հօրմէն չէ, հա-
 պա աս աշխարհէս է, : Ե. 3ով. Բ. 16 : “Ա-
 նոնք որ պղծալից ցանկուԹեամբ մարմինի ե-
 տեւէ կերթան, և տէրուԹիւնը կ'անարգեն,
 ինքնահաւան, ու յանդուգն են, : Բ. Պեթ. Բ.
 10 : “Վասն զի մարմնաւոր խորհուրդը
 մահ է քանզի մարմնաւոր խորհուր-
 դը Աստուծոյ դէմ ԹշնամուԹիւն է. ինչու
 որ Աստուծոյ օրէնքին չ'նազանդիր, մա-
 նաւանդ չկրնար ալ : Վասն զի մարմնով
 եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլ-
 լալ : Ինչու որ եթէ մարմնաւորապէս ապրե-
 լու ըլլաք, պիտի մեռնիք, : Հռով. Բ. 6, 7,
 8, 13 : Ուրեմն “Մարմինը, մեր բնուԹեան
 ան ապականուԹիւնը կը նշանակէ, որով ծը-
 նած ենք աշխարհիս մէջ, և ուրկէ որ մե-
 ղաւոր կիրքեր և գործքեր յառաջ կու գան :
 Ահա աս է ան աղբիւրը՝ ուրկէ կը բղխին,

հարարտութիւն, աղահոլութիւն, անձնասիրու-
 թիւն, նախանձ, ատելութիւն սրտի առ Աստ-
 ուած, անհնազանդութիւն իր պատուիրանք-
 ներուն, թշնամութիւն իր սաշտօնին և իր
 ժողովուրդին, չարակամութիւն, ատելութիւն,
 և ամէն չար ու զգուելի գործքեր : Ամէն
 մարդ ունի առ մեղաւոր ապականեալ բը-
 նութիւնը . ամէն մարդ 'ի բնէ մարմինին
 կր ծառայէ, այսինքն ինչպէս որ կ'ըսէ ա-
 ռաքեալը, մեղաց ծառաներն են : Հոով՝
 Գ. 17 : Միայն մարմնոյ գործքերը կր կատա-
 րեն, թէև տարբեր եղանակներով և տար-
 բեր աստիճաններով . կարելի է շատ տար-
 բերութիւն ըլլայ իրենց արտաքին վարու-
 ցը մէջ, բայց Աստուածային աչքը կր տես-
 նէ թէ անոնք բնականաբար նոյն և նման
 են սրտով : Ամէնն ալ հաւասարաբար մար-
 մնոյ և մեղաց կր ծառայեն, թէպէտև տար-
 բեր կերպերով . ուստի անոնց ամէնն ալ
 նոյն կարգին կր վերաբերին, ու թէ որ ան
 վիճակին մէջ մեռնելու ըլլան, ամէնն ալ
 նոյն դատապարտութեան տեղը պիտի եր-
 թան : Անոնցմէ բնաւ մէկը չկրնար երկին-
 քը մտնել, վասն զի չէ թէ միայն ամէնն
 ալ Աստուծոյ սրբազան օրէնքին դատա-
 պարտութեանը տակն են, այլ նաև անոնց-
 մէ ոչ մէկն ալ յարմար է երկինքը ըն-
 դունուելու . թէ որ մէկը հոն ընդունուէր
 իր հիմակու ունեցած ապականեալ պիղծ
 բնութեամբը, մեղանչելէն զատ բան մը պի-
 տի չընէր հոն : Սակայն կր կարդանք թէ
 պիղծ բան մը չկրնար մահնել ան սուրբ տե-

որ : Աստուած՝ չնորոգուած մեղաւոր մը , աւ
 պատամբ և իրեն դէմ թշնամի մը բնաւ
 պիտի չընդունի ան երջանիկ աշխարհը . և
 թէ որ Աստուած հաճելու ալ ըլլար մե-
 ղաւոր մը ընդունիլ հոն , ինչպէս պիտի կրը-
 նար երջանիկ ըլլալ ան մարդը . քանզի իր
 սիրամ մէկ բանը չկայ հոն : Ան կ'ատէ զԱստ-
 ուած , և անոր հանդամանքները , օրէնքը ,
 և պաշտօնը . պիտի չկրնայ տանիլ անոր
 փառացը երևոյթին , և պիտի չկրնայ դրտ-
 նել հոն իրեն յարմար ընկերութիւն , քանզի
 հրեշտակները ու բոլոր սուրբ էակները սոս-
 կալով պիտի փախչին իրմէն , ու իր վրայ
 բնաւ կարեկցութիւն մը պիտի չունենան :
 Չարհուրելի տեղ մը պիտի երևայ երկինքը
 իրեն , և եթէ կարելի է ըսել՝ շատ աւելի
 թշուառութեան մէջ պիտի ըլլայ հոն , քան
 թէ դժոխքին մէջ : Ուստի մեղաւոր մը փրկ-
 կուելու կարող ըլլալու համար , ոչ միայն
 պէտք է որ իրաւունք ունենայ երկինքը մտնե-
 լու , այլ նաև յարմարութիւն . ոչ միայն պէտք
 է անոր որ մեղաց պատիժէն ազատած ըլ-
 լայ ու երկնից դուռը բացուած ըլլայ իրեն ,
 հապա նաև պէտք է որ բուն մեղքէն սրբուած
 ըլլայ , և անանկ փոխուի որ յարմարութիւն
 ունենայ երկինքը բնակելու : Արդ՝ ան փրկու-
 թիւնը որ աւետարանը կը մատուցանէ մեզի ,
 աս երկու բաներն ալ կը պարունակէ իր մէ-
 ջը : Քրիստոս՝ իր չարչարանքներովը և մա-
 հովը մեղաց բաւութիւն ընելու համար , օ-
 րէնքին անէծքէն մեր ազատութիւնը գնեց ,
 երկնային դուռը բացաւ մեզի և անոր յաւի-

տենական երջանկութիւնը վայելելու համար մեզի պէտք եղած ամէն բան ստացաւ : Հոգւոյն Սրբոյ պարգևը գնեց և տուաւ աշխարհի (Յովհ. Ժ.Պ. 7 : Սաղմ. 111. 18.), որ անոր յատուկ գործը մեղաւորները երկնից յարմարցնել ու զանոնք հոն առաջնորդելն է :

Սակայն աս գործը կատարելու համար պէտք է ամբողջ փոփոխութիւն մը սրտի, “վասն զի մարդը իր սրտին մէջը ինչպէս որ կը մտածէ, այնպէս է” : Առախ. ԻՊ. 7 : Սիրտը ամէն բարոյական գործոց աղբիւրն է. “բարի մարդը՝ իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ, և չար մարդը՝ իր սրտին չար գանձէն չար բաներ կը հանէ” : Մատթ. ԺԻ. 35 : “Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ, ո՛չ ալ չար ծառը բարի պտուղ տալ” : Մատթ. Լ. 18 : Պտուղին բնութիւնը ծառին բնութեանը պէս պիտի ըլլայ. պտուղին բնութիւնը փոխելու համար, հարկ է որ առաջ ծառին բնութիւնը փոխուի : Չար մարդ մը բարի բաներ ընելու համար, պէտք է իր սրտէն հանուի չար գանձը, և անոր տեղը բարի գանձ դրուի, “մարմինէն ծնածը”, պէտք է փոխուի “Հոգիէն ծնած ըլլայ” : Եւ ահա աս փոփոխութիւնն է Սուրբ Գրոց վերստին ծնունդը ըսածը. աս էր մեր Փրկիչին ըսել ուզած բանը երբոր անանկ վսեմ եղանակով ըսաւ Նիկողեմոսին, թէ առանց անոր մէկը չըկրնար երկինքը երթալ : Սուրբ Հոգիին յատուկ գործը սրտին մէջ աս մեծ փոփոխութիւնը գործել և անիկայ կատարեալ ը-

րումին հասցունել է, նորէն ծնած անձը պահպանելով՝ զօրացունելով՝ առաջնորդելով և մխիթարելով : Ահա մէկ փոփոխութիւն մը՝ որ արժանի է վերստին Մնունդ կոչուելու, և ասկէց զատ ամենեին ուրիշ բան մը արժանի չէ աս անունին . վասն զի մինակ ասիկայ է նոր կենաց մէջ մրտնել ու նոր գոյութեան սկզբնաւորութիւն :

Ղրդարե երբոր մարդկային հոգին կը ծնանի Սուրբ Հոգիէն, իր մարմնաւոր բնութիւնը բոլորովին չմեռնիր, այլ տակաւին կենդանի է . և քրիստոնեայ մարդը երկու օրէնք կը տեսնէ իր անդամներուն մէջը իրարու դէմ՝ զէնք վերուցած (Հոով. 1 : 23) . իր վիճակը այնուհետև պատերազմի վիճակ մըն է : Վ. Տեմ. 9. 12 : Մարմինը կը ցանկայ հոգիին հակառակ, ու հոգին մարմինին հակառակ . և ասոնք իրարու հակառակ են, (Գաղ. 1 : 17) . անանկ որ չէ թէ բարին որ կուզէք՝ կ'ընէք, հապա չարը որ չէք ուզեր՝ ան կ'ընէք : Հոով. 1 : 19 : « Եւ ասոնք որ Քրիստոսիներն են՝ իրենց մարմինը խաչ հանեցին բնական կիրքերով ու ցանկութիւններով մէկտեղ » : Գաղ. 1 : 24 : Ասոնք « Հոգիով մարմինին դործքերը կը սպաննեն » : Հոով. 1 : 13 : Եւ թէպէտ դժուարին ըլլայ անոնց պատերազմը մարմնոյ հետ, ու կարելի է շատ անգամ տրկարանան, բայց տակաւին « ան որ Հոգիէն ծնած է », « Մարմինէն ծնածը », կ'ատէ, և իր պատերազմը կը շարունակէ անոր դէմ մինչև որ վերջապէս բոլորովին յաղթէ : Հոով. 1 : 23—25 :



Սերը ստորագրուած փոփոխութիւնը
Սուրբ Գրոց մէջ Նոր Ծնունդը ըսուած
փոփոխութիւնը ըլլալը, աւելի յայտնի պի-
տի ցուցընենք հետեւեալ գլխուն մէջ յա-
ռաջ բերուած փաստերովը :

Գ Լ Ո Ւ Խ Գ

Վերստին ծնունդը՝ հոգևոյ փոփոխութիւն մը ըլլա-
լուն համար այլ ևս վկայութիւններ :

Վասխրնթաց գլխուն մէջ հաստատուածին
պէս, վերստին ծննդեան ներքին՝ հոգևոր
փոփոխութիւն մը կամ սրտի նորոգութիւն
մը ըլլալը կ'երևայ նաև սա հետեւեալ
քննութիւններէն :

Ա. Մ'երևայ նախ ան սպառնալէն՝ ու-
րուն համար որ քրիստոս կ'ըսէ թէ հար-
կաւոր է սա փոփոխութիւնը. « Ինչու որ
մարմինէն ծնածը մարմին է, ու Հոգիէն
ծնածը՝ հոգի » . այսինքն մարդիկ բնակա-
նաբար մարմինէ ծնած են ու երկինքի ալ
անյարմար, ուստի պէտք է որ Հոգիէն ծը-
նանին, որպէս զի երկինքի յարմար ըլ-
լան : Ուրեմն յայտնի է որ՝ Հոգիէն ծնած

ու երկինքը ընդունուելու ալ յարմար եղածը, հոգևոր փոփոխութիւնով մը՝ մարմնէն ծնած ու երկինքի անյարմար եղողին ճիշտ հակառակը եղած է :

Բ . 1^ն որ Հոգիէն ծնած է Հոգիին պէս պիտի ըլլայ ըստ բնութեան, ու Հոգիէն ծնած ըլլալուն հաստատութիւնը ան պատուղները պիտի ըլլան, որոնք որ Սուրբ Հոգին կ'արտադրէ վերստին ծնած մարդոց ներսիդին : Քանզի Հոգիին բնութիւնը սուրբ է, և անոր պատուղներն են « սէր, խընդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկայութիւն » : Գաղ . Ե . 22, 23 : Եւ աս պատուղները միայն անոնց քով կը գտնուին՝ որոնք որ Սուրբ Հոգիէն ծնած են :

Գ . Ս երստին ծնունդ կը կոչուի « Սուրբ Հոգիին նորոգելը » . (Տե՛ս . Գ . 5) . աս նորոգութեան ինչ ըլլալը՝ Պօղոս առաքեալ կը բացատրէ ըսելով, « Հին մարդը իր գործքերովը ձեր վրայէն հանեցէք . և հագէք ան նորը գիտութիւնով նորոգուած՝ իր Ստեղծողին պատկերին պէս » : « Որ ձեր վրայէն մէկ դի հանէք ան ձեր առջի վարմունքին պէս եղած հին մարդը՝ խաբեբայ ցանկութիւններով ապականուածը . և ձեր միտքին հոգիովը նորոգուիք, և նոր մարդը վրանսիդ հագնիք, ան որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է, արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով » : Կող . Գ . 9, 10 : Եփես . Գ . 22—24 : Նոր մարդ

ըսուածը ան բանն է՝ որն որ վերստին ծըննդեամբ կը ստացուի : Աստուծոյ թեան բնութիւնը Եղեկիէլի մէջ առաւել պարզ կը տեսնուի, ուր Մարգարէն Քրիստոսի ժամանակին վրայ խօսելով կ'ըսէ . « Չեզնոր սիրտ մը պիտի տամ, ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ, և ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ . և իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու ձեզի՝ իմ օրէնքներուս մէջ քալել պիտի տամ, ու իմ իրաւունքներս պիտի պահէք ու ՚ի դործ դնէք » : Եղեկ . 1. 26, 27 : Կմանապէս կը տեսնուի ան խօսքերուն մէջ՝ որոնք Սուրբ Հոգիին մարդոց սրտին մէջ ըրած դործը մասնաւորապէս կը ստորագրեն : Տե՛ս Հոգի . 1 . 1 : Ե Կորնթ . 1 . 3—11 :

Դ . Ա՛րեւայ վերստին ծնանողներուն համար բոլոր աս ըսուածներէն ,

1 . Ի՞նչ անոնք Քրիստոսը ընդունած են . « Որոնք որ զինքը ընդունեցին . . . որ անոնք . . . Աստուծոյ ծնան » : Յովն . Ե . 12 , 13 .

2 . Ի՞նչ Քրիստոսի հաւատացած են . « Որոնք կը հաւատան իր անուանը » : Յովն . Ե . 12 : « Ամէն ով որ կը հաւատայ թէ Յիսուսը Քրիստոսն է », (այսինքն ճշմարիտ և կենդանի հաւատքով կը հաւատայ), « Աստուծոյ ծնած է » : Ե Յովն . Ե . 1 :

3 . Ի՞նչ անոնք կը սիրեն զԱստուծոյ և զմարդ . « Ամէն ով որ կը սիրէ , Աստուծոյ

մէ ծնած է » : Ե. Յովն . Գ . 7 : « Թէ որ
 մէկը ըսէ՝ Թէ Ես Աստուած կը սիրեմ ,
 ու իր եղբայրը ատէ , անիկայ ստախօս է .
 քանզի ան որ իր եղբայրը չսիրեր՝ որ կը
 տեսնէ , զԱստուած՝ որ չտեսներ , ինտոր
 կրնայ սիրել » : Ե. Յովն . Գ . 20 : Եւ մա-
 նաւանդ անոնք իրենց պէս ուրիշ նորէն
 ծնածներն ալ կը սիրեն : « Ամէն սլ որ
 ծնողը կը սիրէ , անկէ ծնածն ալ կը սի-
 րէ » : Ե. Յովն . Ե . 1 :

4 . Թէ անոնք արդարութիւն կը գոր-
 ծեն . « Ամէն սլ որ արդարութիւն կը
 գործէ , անկէ (Աստուծմէ) ծնած է » : Ե.
 Յովն . Գ . 29 :

5 . Թէ անոնք մեղք չեն գործեր . « Ա-
 մէն սլ որ Աստուծմէ ծնած է , մեղք չը-
 գործեր , ինչու որ անոր սերմը իր մէջը կը
 մնայ , ու չկրնար մեղք գործել , քանզի
 Աստուծմէ ծնած է » : Ե. Յովն . Գ . 9 : « Գի-
 տենք որ ան ամէնը որ Աստուծմէ ծնած
 է , մեղք չգործեր . հապա ան որ Աստուծ-
 մէ ծնած է , իր անձը կը պահէ , ու չարը
 իրեն չգպչիր » : Ե. Յովն . Ե . 18 : Ար-
 դարեւ անիկայ բոլորովին ազատ չէ մեղքէ ,
 մարմինը իր մէջը տակաւին կենդանի է ,
 բայց չթագաւորեր իր վրայ : Իր յանցա-
 ւոր գտնուած մեղքերը , սրտին մեղքերն
 են , կամ անոնք են՝ որոնցմէ փորձութեամբ
 խաբուելով յաղթուած գտնուեցաւ : Անիկայ
 չմեղանչեր ուրիշներուն պէս , ոչ ալ բուն
 առջի իր գործած մեղքերուն պէս : Չմե-
 ղանչեր գիտութեամբ , կամաւ և ունակա-

բար : Այլ ևս չծառայէր մեղքի , հապա
կ'ատէ զանիկայ , կը մաքառի անոր դէմ , և
Աստուածային շնորհաց օգնութեամբը՝ կը
յաղթէ անոր : Աս մտօք կ'ըսուի թէ ա.
նիկայ չմեղանչեր , և թէ “ Ան որ մեղք
կը գործէ՝ Սատանայէն է ” : Ե. Յովն . Գ . 8 :

6 . Թէ անոնք աշխարհի կը յաղթեն .
“ Ան ամէնը որ Աստուծմէ ծնած է , աշ-
խարհին կը յաղթէ ” : Ե. Յովն . Ե . 4 :
Փոխանակ աշխարհը սիրելու , զանիկայ փրն-
տուելու և անոր ծառայելու , իբրև թըշ-
նամի կը համարի իրեն , և կը յաղթէ ա-
նոր : Եւ աս բանը անիկայ հաւատքով կ'ը-
նէ , “ Ասիկայ է յաղթութիւնը՝ որ աշխար-
հին կը յաղթէ , այսինքն սեր հաւատքը ” :
Ե. Յովն . Ե . 4 , 5 :

7 . Թէ անոնք Աստուծոյ որդիքն են .
“ Անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ
որդիներ ըլլալու ” : Յովն . Ե . 12 : Բայց
որոնք են Աստուծոյ որդիները : Անոնք են
որ Քրիստոսի կը հաւատան . “ Ինչու որ
ամէնքդ ալ Աստուծոյ որդիք էք՝ Քրիստոս
Յիսուսի վրայ եղած հաւատքով ” : Գառ .
Գ . 26 : Անոնք են որ Հոգիով կ'առաջ-
նորդուին . “ վասն զի որոնք որ Աստուծոյ Հո-
գիովը կ'առաջնորդուին , անոնք Աստուծոյ
որդիքն են ” : Հովն . Ե . 14 : Անոնք են
որ արդարութիւն կը գործեն , և այսպէս
որոշեալ են չարին զակերներէն : Ե. Յովն .
Գ . 10 : Անոնք են որ կը մաքրեն ինքը-
զինքնին , ինչպէս որ Աստուած մաքուր է :
Ե. Յովն . Գ . 3 : Մէկ խօսքով անոնք են որ

Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն են, և
կը սիրեն անիկայ, կը հնազանդին անոր օ-
րէնքներուն, կ'ապաւինին անոր շնորհացը,
և ժառանգներն են յաւիտենական կենաց :
Հոով . Ը . 17 :

Ահա այսպէս են անոնք, որոնք վերստին
ծնած են : Անոնք Սուրբ Հոգիէն նորոգ-
ուած են, նոր սիրտ մը և նոր հոգի մը
ունին, մաքուր՝ խոնարհ և սուրբ կեան-
քով մը Հոգիին գործողութիւնը կը ցուցու-
նեն իրենց մէջը, և Աստուծոյ սիրելի որ-
դիքը և ժողովուրդն են : Թէ որ մէկը սրբ-
տով և վարքով ասանկ փոխուած չէ, թէ
որ այսպէս չսիրեր զԱստուած, չգործեր
արդարութիւն, չփախչիր մեղքէ, և յայտ-
նի չցուցուներ Հոգիին պատգմները, ան
մարդը թէ՛ մկրտուած ըլլայ և թէ չմկրտ-
ուած՝ վերստին ծնած չէ : Բայց ով որ Հո-
գիին աս գործողութիւնը իր սրտին վրայ
կատարուած ըլլալը յայտնի կը ցուցնէ,
ան մարդը թէ՛ մկրտուած ըլլայ և թէ
չմկրտուած, վերստին ծնած է :

Արդ աս փոփոխութիւնը՝ որով որ մար-
դիկ նորէն ծնած կ'ըլլան, արդեօք մկրտու-
թեամբ ձեռք կը բերուի : Թէ որ անանկ
ըլլայ, ուրեմն ամէն մկրտեալները վերի
յիշուած յատկութիւնները պարտին ունե-
նալ և վերստին ծնեալի վրայ ամէն ըսուած-
ները Մկրտեալին վրայ ալ պարտին ըսուիլ .
և ան ատենը պիտի կարենանք ալ այսպէս
կարգալ, “ Ով որ մկրտուած է, մեղք
չգործեր . . . և չկրնար գործել, վասն զի

մկրտեալ է : Ամէն ով որ մկրտուած է՝ աշ-
 խարհին կը յաղթէ : Թէ որ մէկը մկրտու-
 ած է , անիկայ նոր ստեղծուած մըն է ,
 հինը անցած է և ամէն բան նոր եղած է :
 Արդեօք ասանկ է , և չիա՞ն մկրտեալ
 մարդիկ որ ունակաբար և յօժարակամ
 կը մեղանչեն : Ամէն մկրտեալ մարդիկ
 նոր սիրտ մը և նոր հոգի մը ունին , և
 Աստուծոյ օրէնքին մէջը կը քալե՞ն ու
 սրատուիրանքները կը սլահե՞ն : Ամէն մը-
 կրտեալ մարդիկ իրենց յօժարութիւնները
 վերի բաներուն վրայ կը հաստատեն , չէ
 թէ վարի բաներուն վրայ (Կող . Գ . 2)
 և կը քալե՞ն հողևորապէս ու չէ թէ մարմ-
 նաւորապէս : Հռոմ . Ը . 4 : Մարմինը ի-
 րեն յօժարութիւններովը և ցանկութիւն-
 ներովը խաչը կը հանեն , կը սիրեն զԱստ-
 ուած և իրենց եղբայրները , և մաքուր
 աղօթասէր՝ անձնատեաց և բոլորովին հը-
 նազանդ կեանք մը կը վարեն : Երբոր մէ-
 կը կը մկրտուի , որ իր մկրտուելէն առաջ
 հպարտ՝ անձնասէր՝ յամառեալ մեղաւոր
 մը , մարմինին դործքերը ընող՝ աշխարհը
 սիրող և անոր ծառայող մէկն էր , կը
 տեսնե՞նք արդեօք որ անիկայ շուտով կը
 դառնայ՝ զղջացեալ՝ Աստուծոյ հնազանդ
 օրդի մը կ'ըլլայ , մեղքը կ'առէ , աշխար-
 հիս դէմ՝ կը մարտնչի , անանկ որ յայտնի
 երևայ թէ՛ « Անիկայ Քրիստոս Յիսուսի
 մէջ նոր ստեղծուած մըն է , և իրմէն հի-
 նը անցած ու ահա ամէն բան նոր եղած
 է » : Ի Կորնթ . Ե . 17 : Յիրաւի թէ որ

մկրտութիւնը վերստին ծնանելու միջոցն
 ըլլայ, աս ներգործութիւնները պէտք է
 որ կատարուին ամէն մկրտեալ անձանց
 վրայ, հոգ չէ անոնց ինչ սրտով մկրտ-
 ուելնին : Քանզի աս վարդապետութենէն կը
 հետևի որ մէկը կրնայ մկրտուելու դալ
 անհաւատ և կեղծաւոր սրտով մը, բոլոր
 անմարտութեամբ և չարութեամբ լեցուն
 և իր մկրտուիլը զինքը անկեղծ հաւատաց-
 եալ մը պիտի լնէ, և իր սիրտը չար ցան-
 կութիւններու հպատակութենէն պիտի ա-
 զատէ : Թէ որ մկրտութիւնը աս ներգոր-
 ծութիւնը չունի՝ ուրեմն անիկայ նորէն ծը-
 նանելու միջոցը չէ, վասն զի Հոգին Սուրբ
 Զրշմարտութեան միջոցովը աս բաները կ'ը-
 նէ, և ահա ասիկայ է վերստին ծնունդը :

Ի այց թէ որ աս վարդապետութեանս
 ջատագոյնները կ'ուրանան իրենց վարդապե-
 տութեանը աս հեռուութիւնը և կ'ընդու-
 նին թէ մկրտութեան եկողին հարկաւոր է
 հաւատացող և անկեղծ սիրտ մը ունենալ,
 ան ատենը կը հարցունենք՝ թէ մարդուս
 ապականեալ սրտին մէջ ինտո՞ր կրնայ ըլ-
 լալ ասանկ փոփոխութիւն մը առանց Սուրբ
 Հոգիին նորոգելուն : Ուստի աս ըսելովնին
 չէ՞ որ կը ձգեն ան իրենց վարդապետու-
 թիւնը թէ մկրտութիւնը վերստին ծննդեան
 միջոցն է, և չէ՞ որ կու գան աս նիւթիս
 փրայով մեր գաղափարին կը համաձայնին,
 այսինքն թէ վերստին ծնունդը մէկ ներ-
 բին հոգևոր փոփոխութիւն մըն է՝ որն որ
 պարտի ունենալ մէկ մարդ մը իր մկրտուե-

լէն առաջ, և թէ մկրտութիւնը միայն
 անոր դաւանութիւնը ու նշանն է : Այսու
 ամենայնիւ գուցէ մէկը համարձակի ըսել՝
 թէ մկրտուելու ատեն՝ նորէն կը ծնանի
 մարդ, բայց ընդունած շնորհքը չպահե-
 լով և մեղք գործելով կը կորսուի անի-
 կայ : Եւ թէ անոր համար է որ մկրտուած
 անձը անկէ ետքը վերստին ծննդեան նը-
 շանները չցուցուներ իր վրայ : Բայց ես կը
 հարցընեմ, Տղայ մը որ ծնաւ աշխար-
 հիս մէջ, կրնայ նորէն իր եկած տեղը
 դառնալ, և առաջ ինչ որ էր՝ նորէն ա-
 նանկ ըլլալ. եթէ ոչ՝ ի՞նչպէս կրնայ շո-
 գիէն ծնած մարդ մը նորէն մարմինէ ծը-
 նած մէկու մը պէս ըլլալ : Արդեօք ան
 փոփոխութիւնը՝ որն որ Հոգին կը ներ-
 գործէ վերստին ծնածին վրայ, թեթեւ և
 ժամանակաւոր փոփոխութիւն մըն է : Չէ
 որ անիկայ բնութեան անանկ մէկ փոխուիլն
 է որ հաստատուն կը մնայ : Ասանկ կը
 վկայեն Սուրբ Գիրքերը, « Ամէն ո՛վ որ
 Ատուծմէ ծնած է, մեղք չգործեր, ինչու
 որ անոր սերմը իր մէջը ԿՆ ՄՆԵՅ », և
 չկորսուիր. ան անձը միշտ Ատուծմէ ծը-
 նած կը մնայ, « ու չկրնար մեղք գոր-
 ծել (գիտութեամբ և կամքով), քանզի
 Ատուծմէ ծնած է », : Ե. Յովն. Գ. 9 :
 Մէկը չկրնար այսօր Ատուծոյ որդին ըլլալ,
 ու վաղը Սատանային. անգամ մը որ Հոգին
 Սուրբ բարի գործ մը կը սկսի մարդու մը
 ներսը, ալ անիկայ կատարելութեան կը
 հասցունէ : Փիլիպ. Ե. 6 : Անոնք որ Աս-

տաճմէ ծնած են, « Աստուծոյ զօրու-
թեամբը սրահապանուած են հաւատքովան փր-
կութեանը համար » : Ե. Պէր. Ե. Ծ : « Ա-
նոր սերմը » այսինքն Աստուծոյ բնութիւ-
նը որ բնդունեցին Սուրբ Հոգիէն, « Ի-
բեկնց մէջը կը մնայ » :

Գ Լ Ո Ւ Խ Գ

Բովանդակութիւն վկայութեանց, որոնք վերստին ծննդ-
եան մկրտութեամբ չըլլալ կը ցուցնեն :

Ա. զլուսին մէջ պիտի հաւաքենք և
համառօտիւ ներկայացունենք բոլոր ան վկա-
յութիւնները և փաստերը՝ որոնք կը ցու-
ցունեն թէ վերստին ծնունդը մկրտութիւ-
նով չըլլար :

Ա. Սուրբ Գերբին մէջ մէկ տեղ մը բը-
նաւ վկայութիւն չենք գտներ թէ մկրտու-
թիւնով վերստին ծնունդ կ'ըլլայ :

Բ. ԱՅԼ ընդ հակառակն Սուրբ Գերբը
կը յայտնէ թէ, ոչ թէ մկրտութիւնը,
հասցա Աստուծոյ Խօսքն է միջոցը՝ որով
վերստին ծնունդը կը կատարուի : « Բան-
զի որովհետեւ Աստուծոյ իմաստութեամբը

աշխարհ չճանչցաւ զԱստուած իր իմաստութիւնովը, Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցունելու » : Ե. Կ. րնԻ . Ե . 21 :
 « Հապա զիրքը ի՞նչ կ'ըսէ . խօսքը մօտ է, քու բերնիդ մէջը, և քու սրտիդ մէջն է, այսինքն՝ հաւատքին խօսքը՝ որ մենք կը քարոզենք : Ինչու որ եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս, ու քու սրտիդ մէջը հաւատաս, թէ Աստուած անիկայ մեռելներէն յարուց, պիտի փրկուիս . (վասն զի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու, ու բերնով կը խոստովանի փրկուելու) : Քանզի Գիրքը կ'ըսէ . Ամէն ո՞վ որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ : Ինչու որ խտրութիւն չկայ շրեային ու Յոյնին մէջ տեղը . վասն զի ամենուն Տէրը նոյնն է, բաւական ամենուն՝ որ իրեն կը կանչեն : Քանզի ո՞վ որ Տէրօջը անուր կանչէ՝ պիտի փրկուի : Ուրեմն ի՞նչպէս պիտի կանչեն անոր՝ որուն որ հաւատացին . կամ ի՞նչպէս պիտի հաւատան անոր՝ որուն վրայով չլսեցին . կամ ինտո՞ր պիտի լսեն՝ առանց մէկու մը քարոզելուն . կամ ի՞նչպէս պիտի քարոզեն՝ թէ որ չփրկուին . . . : Ուրեմն հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօսքէն » : Հոով . Ժ . 8—15, 17 : « Սեզ կ'արգիլեն հեթանոսներուն խօսելէն՝ անոնց փրկութեանը համար » : Ե. Թե . Ի . 16 : « Անոնք ճշմարտութեան սէրը չընդունեցին՝ որ փրկուին, անոր համար Աստուած ալ պիտի

խրկէ անոնց ուժով մոլորութիւն մը՝ որ սրտութեան հաւատան . որ դատապարտուին ամէն անոնք՝ որ չհաւատացին ճշմարտութեան , հապա անօրէնութեան յօժարեցան : Բայց մեզի պէտք է միշտ Աստուծմէ գոհանալ ձեզի համար՝ Տէրօջմէ սիրուած եղբայրներ . ինչու որ Աստուծ առաջուց ձեզ ընտրեց փրկուելու Հոգիին սրբելովը՝ ու ճշմարտութեան հաւատքովը . որուն ձեզ կանչեց մեր աւետարանելովը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքը ստանալու » : Ի Թէ . Ի . 10—13 : « Տէրօջը օրէնքը կատարեալ է . հոգին կը նորոգէ . Տէրօջը վկայութիւնը ճշմարիտ է . տգէտը իմաստուն կ'ընէ : Տէրօջը կանոնները շիտակ են . սիրտը կ'ուրախացունեն . Տէրօջը պատուիրանքները պայծառ են . աչքերուն լոյս կուտան » : Սաղմ . ԺԹ . 7 , 8 : « Եւ ըսաւ անոնց . Իմ մայրս ու իմ եղբայրներս ասոնք են , որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու զանիկայ կը կատարեն » : Ղուկ . Ը . 21 :

Գ . Ս'կրտութիւնը յարմարութիւն կամ պատշաճողութիւն չունի մարդուս ներսիդին վերստին ծննդեան պէս փոփոխութիւն մը յառաջ բերելու : Զուրով մարմինը լուալը ի՞նչպէս կրնայ հոգին մաքրել : Ի՞նչ զօրութիւն ունի անիկայ սիրտը նորոգելու : Հաւանական կ'երևայ թէ Սուրբ Հոգին աւսանկ միջոց մը ընտրէ սրտի փոփոխութեան գործը կատարելու համար : Ի՞նչպէս կրնանք ըսել՝ (միայն թէ Սուրբ Գիւրքը յայտնի ըսած ըլլար , որն որ բնաւ ըսած չէ) թէ

Սուրբ Հոգին նիւթական գոյութիւնով մը մարդուս աննիւթ Հոգին վրայ փոփոխութիւն մը կ'ընէ : Բայց Աստուծոյ խօսքը աս գործին կատարեալ յարմարութիւն մը ունի : Բնական է որ մարդուս միտքը համոզուելով շարժուի . ճշմարտութիւնը յարմարութիւն ունի մարդուս սիրտը շարժելու . և պատշաճաւոր է Սուրբ Հոգին որ ճշմարտութեան միջոցովը ներգործէ սրտին , և փոխելով մարդուն յօժարութիւնները ու նոր բնաւորութիւն մը տալով անոր , զանհկայ երկնից յարմար ընէ :

Դ . Թէ որ մկրտութիւնը նորոգութիւն է կամ նորոգութեան պատճառը ու հարկաւոր միջոցն է , ուրեմն կը հետեւի որ նորէն ծնածները մարդու կամքէն ծնած են , և ան ալ շատ սնդամ չար՝ աշխարհասէր՝ գինով՝ հայհոյիչ՝ պոռնիկ՝ շնացող և արուագէտ մարդոց կամքէն , որ բոլորովին հակառակ է Սուրբ Գրքին ան յայտնի վերկայութեանը որ կ'ըսէ “Որ անոնք ոչ . . . մարդու կամքէն , հապա Աստուծմէ ծնան ,” : Յովհ . Ե . 13 : Դարձեալ կը հետեւի որ երախաներուն նորոգուելը կամ ճնորոգուելը՝ ճրնողացը՝ քահանային և կնքահայրներուն կամքէն կախում ունի . և չափահաս մարդ մը որչափ ալ որ սրտով զղջայ , Քրիստոսի հաւատայ . և Աստուծոյ հնազանդի , թէ որ քահանայ մը կամ ուրիշ մէկը կամք չունենայ զինքը մկրտելու , պիտի չկրնայ նորէն ծնանիլ և պիտի կորսուի : Բայց Սուրբ Գրքը կ'ըսէ թէ “հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին , ու պիտի փրկուիս ,” :

Ե . թիւ որ միայն մկրտութիւնով կ'ըլլայ վերստին ծնունդը, ուրեմն բնաւ չմկրտուած մէկը Աւետարանական հաւատք՝ սէր կամ հնազանդութիւն չկրնար ունենալ . քանզի Սուրբ Գիրքը կ'ըսէ . « Ամէն ով որ կը հաւատայ թէ Յիսուսը Քրիստոսն է , Աստուծոյ ծնած է » . բայց մկրտութիւնը նորէն ծանանելու միջոց համարողները կ'ըսեն թէ « Բնաւ չմկրտուած մէկը Աստուծոյ ծնած չէ » : Ուրեմն աս իրենց խօսքը վերի վկայութեանը հետ առնելով կը հետևի թէ բնաւ չմկրտուած մէկը հաւատար թէ Յիսուսը Քրիստոսն է : Դարձեալ Սուրբ Գիրքը կ'ըսէ « Ամէն ով որ կը սիրէ , Աստուծոյ ծնած է » , բայց ասոնք կ'ըսեն թէ « Բնաւ չմկրտուած մէկը Աստուծոյ ծնած չէ » : Ուրեմն բնաւ չմկրտուած մէկը չսիրեր : Եւ դարձեալ , Սուրբ Գիրքը կ'ըսէ « Ամէն ով որ արդարութիւն կը գործէ , անկէ (Աստուծոյ) ծնած է » . բայց ասոնք կ'ըսեն թէ « Բնաւ չմկրտուած մէկը Աստուծոյ ծնած չէ » : Ուրեմն բնաւ չմկրտուած մէկը արդարութիւն չգործեր :

Բայց կուռնելիոս իր մկրտուելէն առաջ « արդար , բարեպաշտ ու Աստուածավախ » , մարդ մըն էր , « ողորմութիւններ կու տար » , որոնք « Աստուծոյ առջևը ելան յիշուեցան » , « ամէն ատեն աղօթք կ'ընէր » , և իր « աղօթքը լուեցաւ » , և ինքը « ընդունուեցաւ Աստուծոյ » : Տե՛ս Գործ . Ժ . 2 , 3 , 22 , 31 , 35 :

Զ . թիւ որ մկրտութիւնը նորոգութեան

միջոցն է, Աւետարանի պաշտօնեաները իրենց պաշտօնին առաջին գործը պարտին համարել մկրտութիւնը: Եւ իրաւ՝ Հռովմէականները այնպէս կը համարին զանիկայ: Պապական քարոզիչներուն գրութեանցը մէջ, որոնք Հաւատոյ Տարածութեան Յիշատակարանք¹ ըսուած ամօրեայ տետրակներուն մէջ կը տպուին, միշտ այսպիսի յայտարարութիւններ կը գտնուին, զորօրինակ՝ «Երկու հեթանոս երախայ ծածուկ մկրտելու մխիթարութիւնն ալ վայելեցի, որոնք քիչ ատենէն ետքը պահապան հրեշտակաց դուռներուն խառնուեցան», : (Յունուար . 1841) : «Քանի մը օր է երջանկութիւն ունեցայ նորոգութեան սուրբ ջուրը տասնևհինգ նորահաւատներու վրայ թափելու . . . Արդէն աս կերպով յիտունէն աւելի նորոգելը եմ», : (Սեպտ, 1843) : «Վեց հազար հեթանոս երախայ մկրտեցինք Ճիշտ իրենց մահուան կէտին», : (Սեպտ . 1843) : «Աս տարի մեր պաշտօնակիցները Պանքօքի մէջ չորս հարիւրէն աւելի մահուան վտանգի մէջ եղող հեթանոս տղաքներ մկրտեցին . ծանրագին հունձ մը որ անշուշտ ուրախացուց հրեշտակները, որչափ որ մեզ մխիթարեց . թէպէտև շատ աշխատութիւն էր մեզի անիկայ ժողովելը : Թէ որ Տարածութեան հաւատոյ բա-

¹ Annales de la Propagation de la Poi.

ընկալալտ անդամները գիտնան ասիկայ, աներկ
բայ կը հաւատամ որ պիտի օրհնեն
զԱստուած, ան պտուղներուն համար, ու
րոնք որ իրենց ողորմութիւնները հեռաւոր
երկիրներու մէջ յառաջ կը բերեն» : (Օ-
գոստ . 1841) :

Հիմա ասոնց բոլորովին հակառակն է Պօ-
ղոսին աս խօսքը, թէ՛ « Կը գոհանամ Աս-
տուծմէ, որ ձեզմէ մէկը չմկրտեցի, միայն
թէ Կրիստոսը ու Գայիոսը : Ինչու
որ Քրիստոս զիս մկրտելու չխրկեց, հապա
Աւետարանը քարոզելու . . . : Քրիստոս Յի-
սուսով ես ձեզ ծնայ Աւետարանովը », և
ոչ թէ մկրտութիւնով : Ե. Կորնթ . Ե . 14 .
17 : Գ . 15 :

Է . Թէ որ նորոգութիւնը մկրտութիւ-
նով ըլլար, ուրեմն ամէն անոնք որ մկրտու-
ուած են պիտի փրկուէին . վասն զի ամէն
անոնք որ Սուրբ Հոգիէն նորոգուած են կը
փրկուին . « Անոր սերմը իրենց մէջը կը
մնայ » : Անոնք չէ թէ ոմանց ըսածին պէս
Աստուծոյ ժառանգ կ'ըլլան, և ետքը նո-
րէն ժառանգութիւնը ստանալէն կը զրկու-
ուին : Պետրոս կ'ըսէ, « Օրհնեալ է Աստ-
ուած՝ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայ-
րը, որ իր առատ ողորմութեանը համե-
մատ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսին
համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յա-
րութիւն առնելովը, անեղծ ու անարատ և
անթաւամ ժառանգութեանը համար՝ որ եր-
կինքը պահուած է ձեզի . որ Աստուծոյ
զօրութեամբը պահպանուած էք հաւատքով

ան փրկութեանը համար՝ որ պատրաստուած է վերջի ժամանակը յայտնուելու » : (Ե . Պե . Ե . 3—5) : Աստուած իր զօրութեամբ կը պահէ զանոնք ան ժառանգութեանը համար , և ան ժառանգութիւնն ալ անոնց համար կը պահէ : Քայց մէկ քանիները կան որոնք նորէն ծնած ըլլալ կ'երևան ու ետքը ուրանալով իրենց հաւատքը՝ մեղքին մէջ կը մեռնին ու կը կորսուին : Արեմն՝ ինչ ըսենք անոնց համար . պէտք է Յովհաննէս առաքելային ըսածը ըսել , « Մեզմէ ելան ու մանք , բայց մեզմէ չէին . ինչու որ եթէ մեզմէ ըլլային՝ մեր հետը պիտի մնային . հասրա մեզմէ ելան , որ յայտնի ըլլան՝ թէ անոնք ամէնը մեզմէ չէին » : Ե . Յով . Ե . 19 : Կրնան ըլլալ շատ կեղծաւորներ և շատ ալ ինքրզինքնին խաբողներ , որոնք իբրև թէ նոր ծնած կ'երևան , բայց երբոր « կ'ելեն » , և ինքրզինքնին մեղքի կուտան , իրենց ճշմարտապէս ինչ ըլլալը յայտնի կը ցուցնեն՝ որն որ առաջուց ծածկուած էր : Սակայն բնաւ մէկը որ ճշմարտապէս նորէն ծնած էր , չկորսուեցաւ :

Քայց ասոր հակառակ գիտենք թէ շատ մկրտուածներ կորսուեցան : Միմոն մոզը մկրտուեցաւ , բայց Պետրոս քիչ մը ետքը ըսաւ անոր թէ մաղձի դառնութեան՝ և անիրաւութեան կասկի մէջ է , և փրկուութեան քանին մէջ մնան ու բաժին չունի . (Գործ . Ե . 20—23) . Անանիա և Սաիիրա (Գործ . Ե . 4—10) չիմենոս՝ Աղեքսանդրոս և Դեմաս (Ե Տեճ . Ե . 20 :

ԲՆՏԻՆ . Դ . Գ .) եկեղեցւոյ անդամներ էին , և անտարակոյս մկրտուած , բայց և այն պէս ամէնն ալ ինկան և կը հաւատացուի թէ կորսուեցան : Մատթէոսի մէջ (1 : 22 , 23) կ'ըսէ Տէրն մեր , “ Ըստեղը անօրը ինձի պիտի ըսեն . Տէ՛ր Տէ՛ր՝ չէ որքու անունովդ մարգարէութիւն ըրինք , և քու անունովդ դէւեր հանեցինք , ու քու անունովդ շատ հրաշքներ ըրինք : Եւ անստեղը անոնց յայտնապէս պիտի ըսեմ՝ , թէ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար . մէկ դի՛ դացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք ” : Աս տեղի խօսուած անձինքը՝ եկեղեցւոյ անդամներ են ու նաև պաշտօնեաներ , և հետեւաբար մկրտուած , բայց Բրիստոս պիտի ըսէ անոնց , “ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար ” : Սակայն Բրիստոս ամէն մարդ կը ճանչնայ , ուրեմն սա ըսուածքը կը նշանակէ՝ թէ “ Ես բնաւ ձեզ իբրև Բրիստոսեաց չէի ճանչնար , այսինքն դուք թէպէտև մկրտուած էիք , բայց վերստին ծննդեամբ իմ աշակերտներս չէիք , մէկդի՛ գացէք քովէս դուք որ անօրէնութիւն կը գործէիք ” :

Ը . Ար տեսնենք հանապաղ բուն մեր աչքովը որ մկրտութիւնը վերստին ծնունդ չարտադրեր : Ո՛րքան անձինք կը ճանչնանք մկրտուած , որոնք բնաւ վերստին ծնածի մը նշան չեն ցուցրներ . այլ աշխարհասէր՝ հպարտ՝ նախանձոտ՝ անպարկեշտ՝ քաբեբայ՝ պիղծ՝ անմաքուր և ամէն կերպ անօրէնութիւն գործող մարդիկներ են :

Նմանապէս վճռութեան՝ վճռելէյ և հազարաւոր անհաւասաններ մկրտուած էին . սրչափ բազմաթիւ տղաքներ ալ մկրտուած են , ու իրենց ետքի վարքէն կը տեսնուի որ չը մկրտուածներէն ամենւին մէկ կերպով մը տարբերութիւն չունին :

Թ . Նորոգութիւնը մկրտութեամբ ըլլալ հաստատողները , բոլորովին կը կործանեն աւետարանական ան մեծ սկզբունքը թէ փրկութիւնը միայն հաւատքով է . կ'ըսեն թէ՛

“ Մկրտութիւնը սկզբնական մեղքէ ազատութիւն է , ներգործական մեղքէ ազատութիւն , Աստուծոյ որդեգրութիւն , Քրիստոսի անդամ ըլլալ , Քրիստոս իր վերան հագածի պէս ըլլալով անոր հետ միանալ , և ճշմարտապէս ու իսկական վերստին ծնունդ , և յաւիտեանական կենաց պատճառ ” : “ Թէև մէկ մարդ մը սրբտով Քրիստոսի հաւատայ , և աւետարանական պատուիրանքները ամէնն ալ պահէ , մինչև որ մկրտութեամբ եկեղեցւոյ մէջ մանելով Աստուծոյ ժառանգ , և Քրիստոսի ժառանգակից չըլլայ , Քրիստոսի արեամբը մեղի համար ստացուած յաւիտենական փառացը չկրնար արժանի ըլլալ , ոչ անոր հաւատքը խեր կ'ընէ , և ոչ աւետարանի պատուիրանացը համեմատ գործ գործելը ” :

Նմանապէս կ'ըսեն թէ՛

“ Ղոկ հաւատքով հոգին կը միանայ ընդ Աստուծոյ . բայց քանի որ մարմինը Աստուծոյ տաճար , և Քրիստոսի անդամ չէ , հոգին՝ Աստուծոյ հետ չկրնար միանալ . և մարմինը Քրիստոսի անդամ՝ մկրտութեամբ կ'ըլլայ ” :

Նաև աս ալ կը խոստովանին , թէ՛

“ Մկրտեալ մարդը միայն մկրտութեան զօրութեամբ

Աստուածային փառացը հասնիր, թէև նոյն փառացը օրինաւոր ժառանգ է. բայց ժառանգութեանը հասնելու համար քրիստոնէին ապսպրուած գործքերը պէտք է ընել» :

Այ խօսքերուն վրայ կը հարցընենք .

1 . Անչպէս կրնայ ըլլալ որ աստուածաշին արդար կառավարութեան տակը տալիոյս մը ըլլայ՝ թէ օրինաւոր ժառանգը կը հասնի՝ արդեօք իր ժառանգութեանը : Միթէ Աստուած ժառանգութիւն պիտի չտայ անոնց որ ինքը օրինաւոր ժառանգ ըլլալու ընտրեց :

2 . Անչպէս կրնայ մկրտութիւնը կոչուիլ « սկզբնական մեղքէ ազատութիւն, ներգործական մեղքէ ազատութիւն, Աստուծոյ որդէգրութիւն, Քրիստոսի անդամ ըլլալ, Ճշմարտապէս և իսկական վերստին ծնունդ, և յաւիտենական կենաց պատճառ », ու տակաւին ըսուի, թէ « Մկրտեալ մարդը միայն մկրտութեան զօրութեամբը Աստուածային փառացը հասնիր, հասա պէտք է որ քրիստոնէին ապսպրուած գործքերը ընէ » : Մենք ալ կը խոստովանինք թէ ան գործքերը հարկաւոր են : Բայց աս է խնդիրը . թէ որ մկրտութիւնը ան է ինչ որ ստորագրուած է՝ թէ է, պէտք չէ ուրեմն որ անշուշտ և հարկաւ մկրտուած անձը մկրտութեան զօրութիւնովը բարեգործ ըլլայ : Ահա Ճշմարտութեան միջոցով վերստին ծնածը միշտ աս փոփոխութեան զօրութիւնովը բարեգործ կ'ըլլայ : Կորէն ծնած մարդը՝ բարեգործութիւն կ'ը-

նէ, ինչու որ նորէն ծնած է : Թէ որ Մկրտութիւնը վերստին ծնունդ է, պէտք չէ՞ որ մկրտուած մարդը բարեգործութիւն ընէ վասն զի մկրտեալ է. և հետեւաբար պէտք չէ՞ որ մկրտուելուն պէս իր վերջապէս փրկուիլը ստոյգ ըլլայ :

3. Թէ որ հոգին միաւորուած է Աստուծոյ հետ « լոկ հաւատքով », ի՞նչպէս կրնայ ըսուիլ թէ « Հաւատք ունեցողը քանի որ մկրտուած չէ, Աստուծոյ հետ չըկրնար միանալ » : Թէ որ հաւատքը մարդը Աստուծոյ հետ կը միացնէ, ուրեմն ան որ մկրտուելէն առաջ կը հաւատայ՝ արդէն միացած է, և միութեանը համար մկրտութեան չկարօտիր : Ուրեմն՝ Հաւատքը մկրտութեամբ կու գայ պիտի ըսուի. ան ատենը կը հակառակիս դուն Սուրբ Գրքին որ կ'ըսէ, թէ՛ « Հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօսքէն » . և կը պահանջէ որ միայն հաւատացողը մկրտուի . ինտոր որ կը կարգանք ներքինիին պատմութեանը մէջ . « Ըսաւ ներքինին . Ահա՛ ջուր, ալ ի՞նչ բան զիս կ'արդիլէ մկրտուելէն . և Փիլիսոսոս ըսաւ անոր . Թէ որ քու բոլոր սրտովդ կը հաւատաս, կարելի է » : Գործ . Ը . 36, 37 :

Իսկ թէ որ ըսես թէ « Հոգին հաւատքով կը միանայ, բայց մկրտութիւնը՝ մարմինը Քրիստոսի անդամ ընելու համար հարկաւոր է », ադ ըսածդ անանկ բան մը կ'ըլլայ, որ ամենեւին վկայութիւն մը չունիս անոր՝ Սուրբ Գրքէն . ուր գրուած կայ թէ հոգին այս-

ինչ կերպով կը միանայ և մարմինը այն
ինչ կերպով :

Դարձեալ՝ թէ որ մկրտութեամբ մար
դը Հոգւոյն Արքոյ տաճար կ'ըլլայ, ինչպէս
իր հոգին մկրտուելէն առաջ հաւատքով
Աստուծոյ հետ կը միանայ : Միթէ իր Հո
գին միացած է Աստուծոյ հետ, և ինքը
դեռ Սուրբ Հոգւոյն տաճար եղած չէ՞ :
Ասկէ զատ թէ որ հոգին կը միանայ Ա
ստուծոյ հետ լոկ հաւատքով, և մարմինը
Քրիստոսի անդամ կ'ըլլայ միայն մկրտու
թեամբ, ուրեմն երբոր մէկ մարդ մը իր
մկրտուելէն առաջ կը հաւատայ, իր հոգին
Աստուծոյ՝ այսինքն Քրիստոսի հետ կը մի
անայ, ու նոյն ատենը իր մարմինը ան
դամ չէ Քրիստոսի, հապա Սատանայի :
Թէ որ նոյն վիճակին մէջ մեռնի, այսինքն
հաւատալէն ետքը ու մկրտուելէն առաջ՝
ինչ պիտի ըլլայ ան մարդուն . իր հոգին
միացած է Քրիստոսի հետ հաւատքով և
պիտի վերկուի, բայց մարմինը մկրտուած
չըլլալուն համար Սատանային անդամն է :
Ուստի յարութեան օրը ո՛ր պիտի երթայ
ատ մարմինը : Երկինքը չկրնար երթալ,
քանզի Քրիստոսի անդամ չէ . բայց հո
գին երկինքն է, վասն զի հաւատքով մի
ացած է ան՝ Քրիստոսի հետ : Ուրեմն ո՛ր
պիտի երթայ մարմինը . միթէ հոգին առանց
մարմինի՞ մնալու է :

Թէ որ Մկրտութիւնը « ճշմարտապէս և
իսկական վերստին ծնունդ է, և յաւիտե
նական կենաց պատճառ », , lxx lxx . ինչպէս

կրնանք ըսել թէ, « թէև մէկ մարդ մը Քրիստոսի հաւատայ, և աւետարանական սպառուիրանքները ամէնն ալ սրահէ, մինչև որ մկրտութեամբ եկեղեցւոյ մէջ մտնելով Աստուծոյ ժառանգ, և Քրիստոսի ժառանգակից չըլլայ՝ Քրիստոսի արեամբը մեզի համար ստացուած յաւիտենական փառացը չկրնար արժանի ըլլալ » : Արնայ մէկ մարդ մը մկրտուելէն առաջ՝ սրտիւ Քրիստոսի հաւատալ, և աւետարանական սպառուիրանքները ամէնն ալ սրահել, ուրեմն մկրտութիւնը վերստին ծնունդ չէ, վասն զի ան դեռ չմկրտուած՝ Քրիստոսի հաւատացող և սպառուիրանքները սրահողը վերստին ծնեալ է : Բայց թէ որ մկրտութիւնն է վերստին ծնունդ չէ, ինտո՞ր կրնայ մարդ մը աս բաները ընել մկրտուելէն առաջ, այսինքն իր նորէն ծնանելէն առաջ, մեղքէ ազատելէն առաջ, մինչդեռ ինքը տակաւին « մարմինն է », ծնած մէկն է, որ « մարմինին ուզածը կ'ընէ, և ո՛չ թէ հոգիին » : Դարձեալ թէ որ հոգին կը միանայ Աստուծոյ հետ լոկ հաւատքով, ինչպէս կրնայ ըսուիլ թէ անոր հաւատքը խեր չընէր իրեն . արդեօք Աստուծոյ հետ միացնող բանը խեր չընէր անոր :

Բայց այլ ևս չերկնցունենք մեր խօսքը այսպիսի մոլորութիւններու և հակասութիւններու վրայ, որոնց մէջ կ'իյնան միշտ աս վարդապետութեան Զատագոյնները : Հապացուցնենք միայն թէ որչափ հակառակ է Սուրբ Գրոց մէջ յայտնուած փրկութեան

պայմաններուն , աս իրենց կարծիքը : Բան
 զի կ'ըսեն թէ առանց մկրտութեան՝ Քրիստոսի
 հետ միանալ չըլլար . ոչ ալ մեղքէ ազատութիւն
 և ոչ ալ փրկութիւն .
 “ ոչ հաւատքը խեր կ'ընէ , և ոչ աւետարանի
 պատուիրանացը համեմատ գործ գործելը ” : Արդ հաւատացեալները որ Քրիստոսի
 պատուէրները կը պահեն , անշուշտ պիտի
 մկրտուին թէ որ պատեհութիւն ունենան ,
 վասն զի մկրտութիւնը ան պատուէրներէն
 մէկն է : Բայց ով որ կրնայ մկրտուիլ
 ու չմկրտուի՝ գիտնալով որ Քրիստոսի
 պատուէրն է ան , անիկայ կը ցուցնէ
 թէ չհաւատար և կամք չունի հնազանդելու :
 Սակայն դիցուք թէ մէկը հեթանոսաց
 մէջ գտնուելով՝ ուր որ անկարելի է
 մկրտուիլ , կը հաւատայ Քրիստոսի , և
 աւետարանին բոլոր ուրիշ պատուէրները
 կը պահէ , թէ որ ասանկ մեռնի , արդեօք
 պիտի չփրկուի ան մարդը : Աս վարդապետութեան
 ջատագովները կ'ըսեն՝ թէ
 “ Այն , ոչ անոր հաւատքը խեր կ'ընէ՝ և
 ոչ աւետարանի պատուիրանացը համեմատ
 գործ գործելը ” : Բայց նայինք Սուրբ Գիրքը
 ինչ կ'ըսէ . “ Հաւատան Տէր Յիսուս Քրիստոսին
 (միայն Հաւատան) , ու պիտի փրկուիս .
 (Գործ . Ժ.Օ . 31) . նաև “ Ան որ
 հաւատայ՝ ու մկրտուի , պիտի փրկուի ,
 և ան որ չհաւատայ , պիտի դատապարտուի ” :
 Մարկ . Ժ.Օ . 16 : Ինչո՞ւ չըսաւ Փրկիչն մեր ,
 Ան որ չմկրտուիր՝ պիտի դատապարտուի :
 Պատճառը յայտնի է . քանզի մկրտութիւնը

հարկաւոր չէ փրկութեան, ինտոր որ հաւատքը հարկաւոր է: Չափահաս մէկը՝ կարող հաւատալու, չկրնար առանց հաւատքի փրկուիլ. բայց կարելի է որ մէկը հաւատայ, ու չկրնայ մկրտուիլ, և ասանկ մէկը պիտի փրկուի: Ուստի երբոր Սուրբ Գիրքը յառաջ կը բերէ փրկութեան հարկաւոր սրայմանը, միշտ հաւատք (կամ հաւատոյ պտուղին մէկը) կը յիշէ, չէ թէ մկրտութիւնը. զորօրինակ՝ « Հաւատան Տէր Յիսուս Քրիստոսին (չէ թէ Մկրտուէ), ու պիտի փրկուիս »: Գործ. ժ.Օ. 31: « Եւ ինտոր որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, անանկ ալ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ. որ ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝ (ո՛չ թէ մկրտուի) չըկորսուի, հասպա յաւիտենական կեանք ունենայ »: Յով. Գ. 14, 15: « Շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով » (ոչ թէ մկրտութիւնով): Եփե. Բ. 8: « Անոր կը վկայեն բոլոր մարդարէնները թէ ամէն իրեն հաւատացողները (չէ թէ մկրտուողները) իր անունովը մեղաց թողութիւն կ'առնեն »: Գործ. ժ. 43): « Եւ ինքը ըսաւ կնիկանը. Քու հաւատքդ քեզ փրկեց, զնա՛ խաղաղութեամբ » (Ղաւ. 1. 50). ինչո՞ւ երբէք չըսաւ Տէրն մեր, Մկրտութիւնը քեզ ազատեց. զնա՛ խաղաղութեամբ: « Եւ ըսաւ Յիսուսին. Տէր՝ յիշէ՛ զիս, երբոր քու թագաւորութիւնովդ դաս: Յիսուս ալ ըսաւ անոր. Ճշմարիտ կ'ըսեմ՝ քեզի. Դուն այսօր իմ

Տեսո զբախտին մէջը պիտի ըլլաս » (Ղուկ . ԻԿ . 42 , 43) . Ինչո՞ւ չըսաւ անոր [Թէ՞ Քու հաւատքդ խեղ չընէր քեզի և պիտի կորսուիս , որովհետև մկրտուած չես : « Օրէնքին վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալին՝ (չէ [Թէ մկրտեալին՝) արդարութեան համար » : Հոով . Ժ . 4 . Տես նաև Հոով . Գ . 21—26 : Յով . Բ . 35 . 40 : Փիլիպ . Գ . 9 , և : Պօղոս կրկին և կրկին կը յայտնէ [Թէ մենք արդարացած ենք միայն հաւատքով : Հոով . Գ . 27 . 30 : Գ . 2—5 . 11 . 16 . 24 : Ե . 1 : Ժ . 9 , 10 , 11 : Գաղ . Ի . 16 . 20 : Արդ՝ արդարութիւնը ինչո՞ւ համար միայն հաւատքով է . անոր համար որ անիկայ « Շնորհքով է , Յիսուս Քրիստոսով եղած փրկութեամբ » . (Հոով . Գ . 24) . անոր համար որ անիկայ Քրիստոսի արդարութիւնովն է , որ մեզի ձրի տրուած է , և հաւատքը միջոցն է՝ որով կը բանենք ան արդարութիւնը և կ'ընդունինք զանիկայ : Արդարանալը բոլորովին շնորհքով է , և ոչ անոր մէկ մասը գործքով է , եթէ ոչ՝ պարծենալու տեղի կ'ունենայինք : « Ուրեմն ո՞ւր մնաց պարծենալը . խափանեցաւ . ո՞ր օրէնքէն , գործքերո՞ւն օրէնքէն . չէ՛ , հապա հաւատքի օրէնքէն : Ինչո՞ւ որ կը սեպենք [Թէ մարդը հաւատքով կ'արդարանայ՝ առանց օրէնքին գործքերուն » : Հոով . Գ . 27 , 28 :

« Ս՛եղ արդարացընողը Քրիստոսի արիւնն է » , բայց ուրիշ աւետարան կ'ըլլայ ըսելը [Թէ՛

“Այլ մեր բարի գործքերը Քրիստոսի արդեանցը հետ միացրնելով ան արդարութիւնը մերը կ'ընենք : Մեր գործքերը առանց Քրիստոսի արդեանցը հետ միանալու ոչինչ են . և մինչև որ մկրտութեամբ մենք Քրիստոսի հետ չմիանանք՝ մեր բարի գործքերն ալ Քրիստոսի գործոցը հետ չեն միանար ” :

Եւ ահա ասանկ աւետարան քարոզողին համար է որ “Նզովեալ ըլլայ” կ'ըսէ Պօղոս, թէև երկինքէն իջած հրեշտակ մըն ալ ըլլայ ան . (Գաղ . Ե . 8 , 9) . վասն զի ո՞ւր գրուած է Սուրբ Գիւրգին մէջ , թէ մեր գործքերը Քրիստոսինին հետ միանալու են՝ որ մենք արդարանանք , և թէ անոնք Քրիստոսի արդեանցը հետ կը միանան մեր մկրտուելովը : Ասանկ ըսելը մեր՝ Քրիստոսի արեամբը և արդարութեամբը բոլորովին շնորհքով արդարանալը ուրանալ է , և մեր արդարանալը ըստ մասին բուն մեր գործքերովը ըլլալ հաստատել է . այսինքն՝ կէս մը Քրիստոս , ու կէս մըն ալ բուն մենք կ'ըլլանք մեր փրկիչը , և այսպէս՝ մեր փրկութեան փառքին կէսը մեզի կը վերաբերի : Բայց չէ՞ մեր տկար գործքերը՝ որոնց ամենէն աղէկը մեղքով աւրուած է և թողութեան կը կարօտի , մեր արդարանալուն օգնելու բան մը չեն կրնար ընել : Մենք կամ բոլորովին Քրիստոսով կ'արդարանանք հաւատքով՝ կամ բնաւ չենք արդարանար . ճշմարիտ քրիստոնեան նախ կը՝ հաւատայ ու կ'արդարանայ , ու ետքը բարեգործութիւն կ'ընէ , իբրև բնական պտուղները հաւատոյ , և ան նորոգուած

քնութեանը՝ որն որ վերստին ծնելու
 թեան ատենը ստացաւ : Ար սարսափի ան՝
 արդարանալու համար իր պիղծ բարեգոր-
 ծութիւնը օրհնեալ Փրկչին արդարութեա-
 նը հետ միացրնելու : Իր փրկուելուն բու-
 լոր փառքը , և միանգամայն բոլոր իր բա-
 րեգործութիւնները Քրիստոսով եղած Աւ-
 տուծոյ անհուն շնորհացը կու տայ : Գիտէ ,
 թէ “ Առանց սրբութեան մէկը չկրնար տես-
 նել Տէրը ” : Եբր . ժԲ . 14 : Գիտէ որ ա-
 ռանց բարեգործութեան , կամ առանց
 պատրաստ սրտի մը զանիկայ ընելու , փրկ-
 ւելութիւն չկայ . բայց անով արդարա-
 նալու մտածմունքէն կը դարչի :

Վերստին ծնած ըլլալուն մի միայն վա-
 կայութիւնը , սուրբ կեանք մը վարելն է :
 Փրկուելու հաւատք ունենալուն ալ մի մի-
 այն վկայութիւնը ան է որ սիրտը ան հա-
 ւատքովը կը մաքրուի (Գործ . ժԵ . 9) ,
 ու աւետարանական հնազանդութիւն կը
 հետեի : Ասոր համար՝ ինչպէս որ հաւա-
 տացեալներուն՝ անանկ ալ ապաշխարողնե-
 րուն փրկութիւն խոստացուած է , ինչու
 որ ապաշխարութիւնը կը գտնենք միշտ հա-
 ւատոյ հետ միացած . և հաւատքով Քր-
 իստոսի հետ կը միաւորինք , դատապար-
 տութենէ կ'ազատինք , և յաւիտենական
 կենաց ժառանգորդ կ'ըլլանք :

Եւ այսպէս յայտնի կը տեսնենք թէ
 ինչու երբեմն Սուրբ Գիրքը սա եղանակովս
 կը խօսի մկրտութեան վրայով , զորօրինակ
 “ Դուք ամէնքդ որ Քրիստոսով մկրտուե-

ցաք, Քրիստոսը վրանիդ հազած էք» (Գաղաթ. Գ. 27) . ասիկայ է պատճառը, որ մկրտա-
տուծիւնը նշան՝ կնիք և դաւանութիւն է
հաւատոյ : Պօղոս ըսել չուզեր աս տեղ,
թէ մկրտութիւնով իսկապէս Քրիստոս վը-
րանին հազան, և Աստուծոյ զաւակները
եղան, քանզի աս խօսքին ճիշդ առջի հա-
մարին մէջ կ'ըսէր՝ «Ամէնքդ ալ Աստու-
ծոյ որդիք էք՝ Քրիստոս Յիսուսի վրայ ե-
ղած ՀԱՒԱՏՔՈՎ» (Կամար 26) . բայց
որովհետև Գաղատացւոյ հաւատքին դաւա-
նութիւնը իրենց մկրտութիւնն էր, անոր
համար կ'ըսէ անոնց . «Դուք ամէնքդ որ
Քրիստոսով մկրտուեցաք, Քրիստոսը վը-
րանիդ հազած էք» :

Ասոր պէս ուրիշ օրինակներ ալ կան .
զորօրինակ Հռովմայեցւոյ . Թ. գլուխ 3 և 4
համարներուն մէջ Պօղոս կ'ըսէ . «Չէք
գիտեր, թէ մենք որ Յիսուս Քրիստոսով
մկրտուեցանք, անոր մահուանը մկրտուե-
ցանք : Անոր հետ թաղուեցանք մկրտու-
թիւնով մահուանը համար, որ ինչպէս Քր-
իստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ
մեռելներէն, անանկ ալ մենք կենաց նո-
րոգութեան մէջ պտղաւինք» : Անոնք որ մը-
կրտուեցան՝ Քրիստոսի մահուանը մկրտուե-
ցան, և մկրտութիւնով մահուան համար
անոր հետ թաղուեցան, այսինքն միացան
Քրիստոսի հետ իր մահովը, որ կարենան
ան մահուան բարութիւններուն ժառան-
գորդ ըլլալ . որ ինչպէս որ Քրիստոս յա-
րութիւն առաւ մեռելներէն, անանկ ալ

անոնք կենաց նորոգութեան մէջ պարտին :
 Բայց մի՞թէ Պօղոս՝ լոկ մկրտութեան արարողութեամբը աս ամէնը եղաւ ըսել
 կ'ուզէր, թէ ան հաւատքովը՝ որուն նշանը
 և դաւանութիւնը մկրտութիւնն է .
 ինք կ'իմացնէ մեզի իր միտքը, Աող. Բ. 12
 համարին մէջ, ըսելով՝ « թաղուելով անոր
 հետ մկրտութիւնով, որով նաև անոր հետ
 յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը
 հաւատարով » : Ինտոր որ ըսաւ Հռովմայեցւոյ,
 նոյնը կ'ըսէ Աողոսացւոյ, Գուք թաղուեցաք ու
 յարութիւն առիք Քրիստոսի հետ մկրտութեամբ,
 բայց մի խորհիք թէ անիկայ լոկ մկրտութեան արարողութիւնովն
 էր, այլ Աստուծոյ զօրութեանը հաւատարովն էր՝
 որուն նշանը և դաւանութիւնն է մկրտութիւնը . և ան
 ձեր դաւանութեամբը ու խոստումովը կասուած էք
 Քրիստոսինը ըլլալու, մեղքին մեռնելու
 ինտոր որ Քրիստոս մեղքին համար մեռաւ,
 և կենաց նորոգութեան մէջ պարտելու :
 Նաև ուրիշ տեղ կ'ըսէ անոնց « թէ Մեղքէն
 ազատ են », « մեղաց ծառայ չեն », հասլա
 « արդարութեան ծառայ » եղած են (Հռովմ. Բ. 7 . 17 . 18 . 22) :
 Բայց որովհետև շատ մկրտուած մարդիկ,
 մեղաց ծառայ են և ոչ արդարութեան,
 և ամէն կերպ չարութիւնը կը գործեն,
 ուրեմն Առաքեալին ըսած մկրտութիւնը (չէ
 թէ լոկ արարողութիւն մըն է, այլ Քրիստոսի
 վրայ եղած ճշմարիտ և անկեղծ հաւատոյ
 դաւանութիւնը, և ձիշդ աս հաւ

ւատքն է անոր ըսածը՝ որ Քրիստոսի մահուանը հետ կը միացունէ, և կ'առաջնորդէ կենաց սրբութեան և փրկութեան :

Ժ . Սերճապէս նորոգութիւնը մկրտութեամբ չկրնար ըլլալ, վասն զի ամէն մկրտութեան տուողներէն (բայց 'ի պշտիկ տղաքներէն որոնց համար ետքը պիտի խօսինք) կը պահանջուի որ նախ վերստին ծնանին, ու ետքը մկրտուին . քանզի հաւատքը հարկաւոր պայման է մկրտութեան . ինտոր որ կ'ըսուի, “Ան որ հաւատայ՝ ու մկրտուի, ” . Մարկ . Ժ.Վ . 16 : Փիլիպպոսի և ներքինիին պատմութիւնը կը ցուցնէ աս բանը : “Երբոր իրենց ճամբան կ'երթային, ջուրի մը քով եկան . ու ըսաւ ներքինին . Ահա ջուր, ալ ինչ բան զիս կ'արդիլէ մկրտուելէն . և ան ըսաւ անոր . Թէ որ քու բռնոր սրտովդ կը հաւատաս, կարելի է . ա նիկայ պատասխան տուա՛ւ ու ըսաւ . Ար հաւատամ թէ Յիսուս Քրիստոսը Որդի Աստուծոյ է, ” : Գործ . Ը . 36, 37 : Փիլիպպոս յայտնի ըսաւ ներքինիին թէ, թէ որ ճշմարիտ հաւատք չունիս, հաւատք՝ բոլոր սրտով, իրաւունք չունիս մկրտուելու : Ներքինին խոստովանեցաւ թէ ունիմ ան հաւատքը, ու ան ատենը Փիլիպպոս մկրտեց զանիկայ : Բայց ահա ան մարդը՝ որ ասանկ կը հաւատայ, Աստուծմէ ծնած է : Ը . Յովն . Ե . 1 : Ուստի նոր ծնունդը մկրտութեամբ չէ, այլ պէտք է որ մկրտութեանէն առաջ ըլլայ :

Պետրոսի հարցումը կուռնելիոսի ու ա-

նոր բարեկամներուն վրայով, նոյն բանը
կը հաստատէ . “ Կրնայ մէկը ջուրը ար-
դիլել որ ասոնք չմկրտուին, որոնք Հոգին
Սուրբն ալ ընդունեցին մեզի պէս ” : Ա-
նոնք ընդունելու էին Սուրբ Հոգին, և վե-
րասին ծնած կին Հոգիէն, ուստի և կրը-
նային մկրտուիլ՝ իսկ թէ որ Սուրբ Հոգին
ընդունած չըլլային, իրաւունք պիտի չու-
նէնային մկրտուելու : Գործ . Ժ . 47 : ԺՆ .
15, 16, 17 :

Պօղոս առաքեալ՝ Փիլիպպեցի բանտապե-
տը՝ Լիզիա՝ Սիմոն Մոգ՝ (Գործ . Ժ.Պ .
14, 15 . 31—34 : Ը . 12, 13), և ան ա-
մէնը որոնց մկրտութիւնը յիշուած է, նախ
հաւատացին, և իրենց հաւատալը խոստա-
վանեցան, այսինքն նորէն ծնանիլը՝ ու ետ-
քը մկրտուեցան :

Եկեղեցւոյ հին ատենները՝ ինտոր որ
կը պատմէ Տերտուղիանոս, որ երկրորդ
դարուն ծագկեցաւ, եկեղեցւոյ սաշտօնեան
կը հարցընէր մկրտուելու նորընծային .
“ Կը հրաժարի՞ս Սատանայէն . և կը հա-
ւատան քրիստոսի ” : Եւ նորընծան կը պա-
տասխանէր, “ Կը հրաժարիմ, կը հաւատամ ” :
Տերտուղիանոս կը կոչէ ասիկայ՝ “ Սքօնաթօ-
նէ՛՛՛ Սալուտի ” , այսինքն՝ “ Խոստումն
փրկութեան ” . և կըսէ թէ՛ “ Հոգին կը
նուիրուի Աստուծոյ՝ ոչ թէ լուացուելով ,

Հասրա սրատասխան տարով, ։ Յայտնի է որ
 ոչ մէկը կրնայ ճշմարտութեամբ խոստովանիլ իր Սատանայէն հրաժարելը և Քրիստոսի հաւատալը, եթէ ոչ ան՝ որ վերստին ծնեալ է. ուստի կ'երևի թէ քրիստոնէութեան առջի դարերուն մէջ կրտասանջուէր որ չափահաս անձ մը նախ վերստին ծնանէր ու ետքը մկրտուէր՝ ի նշան կամ ՚ի դաւանութիւն իր վերստին ծնանելուն, ոչ թէ կը մկրտուէր որ անով վերստին ծնունդը ստանայ ։

Գ Լ Ո Ւ Խ Ե

Ա . Մկրտութիւնը կը մաքրէ՞ սկզբնական մեղքը ։
 Բ . Ի՞նչ է Մկրտութիւնը, և ինչո՞ւ կը մկրտենք ։ Գ .
 Մկրտութիւնը ի՞նչ մտօք հարկաւոր է փրկութեան ։

Ա . Մկրտութիւնը կը մաքրէ՞ սկզբնական մեղքը ։

Ի՞նչո՞ք որ կը հաստատեն թէ մկրտութիւնը վերստին ծնունդ՝ կամ անոր միջոցն է, կ'ըսեն նաև, թէ Մկրտութիւնն է միմիայն միջոց սկզբնական մեղաց մաքրուելուն ։ Աս բանին վրայով կը զրէ մէկը,

“ Հին օրէնքը արդարութեան կը պատուիրէր . բայց չէր կրնար ընել տալ , քանզի սիղբնական մեղքը վերջնեկու խորհուրդ մը չունէր ” :

Նիմա նայինք թէ առաքեալը ի՞նչպէս բողոքովին տարբեր պատճառ մը կը դնէ Հին օրէնքին տկարութեանը , քանզի կ'ըսէ թէ ոչ է թէ օրէնքը ըստ ինքեան պակասութիւն մը ունէր այլ տկար էր մարմնով . (Տես . 2-րդ , Բ . 3) . ըսել կ'ուզէ թէ մարդկային բնութիւնը ապականեալ էր , անոր համար Հին օրէնքը որ արդարութիւն կը պատուիրէր , չէր կրնար ընել տալ : Նմանապէս վերը յիշուած նոյն տեղը առաքեալը կը ցուցնէ թէ՛ Նոր Օրէնքին աւելի զօրութիւնը չէ՛ թէ սկզբնական մեղքը վերջնոզ մկրտութիւն մը ունենալէն է , հապա անկէ , որ “ Աստուած իր Արդին խրկեց մեղանշական մարմինի նրմանութեամբ , ու մեղքի համար , և դատապարտեց մեղքը ան մարմինին մէջ ” , որ այսպէս՝ (իր զոհուելովը) մեղ ազատէ օրէնքին դատապարտութենէն , և Հոգւոյն Արքայ մեր մէջը գործողութիւնովը մեղքը խափանէ , “ որ օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջը , որ մարմնաւորապէս չենք քալեր՝ (խօսք մը չկայ մկրտութեան վրայ) հապա հոգւորապէս ” : 2-րդ , Բ . 4 : Յիրաւի բողոքովին տգէտ են ան մարդիկը Աւետարանին վրայով , որոնք կը կարծեն թէ անոր զօրութիւնը իր արտաքին արարողութիւններէն յառաջ կու գայ :

Սուրբ Գիւրգը տեղ մը չստէր թէ մկրտ

տութիւնը սկզբնական մեղքը կը վերցը-
 նէ : շուրջմայեցւոյ Թ. գլուխին 3 և 4 հա-
 մարները անտարակոյտ ասանկ չեն նշանա-
 կեր . վասն զի նախ՝ առաքեալը չխօսիր
 հոն սկզբնական մեղաց համար մասնաւորա-
 պէս , այլ ընդհանրապէս մեղքի համար է
 իր խօսքը , և բոլոր ան գլուխին մէջներ-
 դործական մեղքին վրայով կը խօսի . սկզբնա-
 կան մեղքին համար բան մը չըսեր : Եւ
 երկրորդ՝ առաքեալին՝ ան խօսքին վրայ
 տուած մեկնութեանը նայելով , որն որ
 Կող . Բ . 12 . կը գտնենք , յայտնի է որ
 մեղքին մարդուկը չէ թէ մկրտութիւնով
 է , հապա “ Աստուծոյ զօրութեանը ան հա-
 ւատարմը ” , որուն դաւանութիւնը մկրտ-
 ութիւնն է : Բայց սկզբնական մեղքը
 ի՞նչ է . անիկոյ ան մեղքը չէ՞ որ Աստու-
 ծոյ որոշած խորհրդաւոր՝ խմատուն և
 սուրբ կարգադրութեամբը Ազամէն կ'իջնէ
 մեր վրայ . քանզի ան՝ չէ թէ միայն ի-
 րեն համար փորձուելու սահմանուած էր ,
 այլ նաև բոլոր իր յաջորդներուն համար
 ալ : Ազամայ՝ իբրև առաջին մարդ և հայր
 բոլոր մարդկային սեռին , որէնք մը տրուե-
 ցաւ , որուն որ ինք իբրև գլուխ մարդոց՝
 կամ պիտի հնազանդէր կամ պիտի չհնա-
 զանդէր , այսինքն թէ որ հնազանդէր՝ ա-
 մէնն ալ մաքուր բնութեամբ պիտի ծնա-
 նէին : Բայց թէ որ չհնազանդէր ու իյ-
 նար (ինչպէս որ եղաւ) , իր անկուժովը
 չէ թէ միայն ինք , այլ նաև բոլոր իրմէն
 ծնած զաւակներն ալ պիտի ինային , այ-

սինքն անոնք հաղորդ պիտի ըլլային դատա-
 սարտութեան, և պիտի անկէ ընդունե-
 ին բնութեան ան ապականութիւնը, որն
 որ ան՝ իր իյնալովը ունեցաւ: Մենք իբրև
 Ադամին հետ մէկ կը համարուինք. վասն
 զի անիկայ մեր գլուխը սեպուեցաւ, ու
 անոր մեղացը սատձառաւը մենք ամէնս ալ
 մեղաւոր ենք: Գիտենք որ աս խորհրդա-
 ւոր բաները ճշմարիտ են. վասն զի Սուրբ
 Գիրքը կը սորվեցունէ զանոնք, ու նաև
 ամէն օր աչօք կը տեսնենք որ Ադամէն
 իջած բոլոր մարդիկ շարունակ կը մեղան-
 չեն, ու թէ մահ և թէ մեղաց ուրիշ
 հետևանքները կը կրեն: Առաքեալը շուրժ.
 Ե. զխուն մէջ, ասիկայ իբրև անժխտե-
 լի ճշմարտութիւն կը բունէ, և անով բաղ-
 դատութիւն մը կ'ընէ Ադամայ մեղանչե-
 լովը մեր դատասարտուելուն, ու Քրիստո-
 սի արդարութեամբը արդարանալուն մէջ.
 (Համար 12. 18, 19) և կը ցուցնէ թէ
 ինչպէս որ Ադամայ մեղքին սատձառովը
 մենք ալ կը մեղանչենք, անանկ Քրիստո-
 սի արդարութեան զօրութիւնովը սուրբ
 կ'ըլլանք: Համար. 20—21: Սկզբնական
 մեղքը ըսել է ան ամէն հետևանքները որ
 Ադամայ մեղքէն անմիջապէս և ուղղակի
 մեր վրայ կու գան. աս հետևանքները եր-
 կուք են, դատասարտութիւն այսինքն պատ-
 ժասարտութիւն մեղքին համար, և ապա-
 կանութիւն մեր բնութեանը՝ անոր մեղ-
 քին միջոցովը: Ադամայ զաւակները աշ-
 խարհ կու գան, չէ թէ անոր անկումէն

առաջ՝ այլ անկէ ետքը ունեցած նոյն աւ-
պականեալ բնութիւնը ունենալով : Այս-
պէս յատուկ կ'ըսուի՝ թէ Ագամ ծնաւ
Սէթը « իր նմանութեամբը և իր պատ-
կերին պէս » (Ծննդ . Ե . 3), այսինքն չէ
թէ Աստուծոյ նմանութեամբը որն որ ինք
ունէր իյնալէն առաջ, այլ ան նմանու-
թեամբը և ան պատկերին պէս, որ ին-
նալէն ետքը ունեցաւ :

Արդ՝ սկզբնական մեղքին առաջին հե-
տեանքը այսինքն դատապարտութիւնը կամ
պատժապարտութիւնը կը վերցուի Քրիս-
տոսի արդարութեամբը և ոչ թէ մկրտու-
թեամբ . և ան միջոցը՝ որով Քրիստոսի
արդարութիւնը կը վերցունէ ան դատա-
պարտութիւնը, չէ թէ մկրտութիւնն է,
հապա հաւատքը : « Դատապարտութիւն
չկայ Քրիստոս Յիսուսով եզոզներուն » :
Հռոմ . Բ . 1 : « Ան որ կը հաւատայ ա-
նոր՝ (չէ թէ ան որ կը մկրտուի), չը-
դատապարտուի . և ան որ չհաւատար,
անիկայ արդէն դատապարտուած է . ինչու
որ (խօսք չկայ մկրտուելու վրայ) Աս-
տուծոյ միածին Որդոյն անուանը չհաւա-
տայ » : Յովն . Գ . 18 : Ան որ չհաւատար,
թէ և մկրտուած ալ ըլլայ, տակաւին սկրզը-
նական մեղաց դատապարտութենէն ազատ
չէ : Բայց ան որ կը հաւատայ, թէ և չը
մկրտուած ըլլայ՝ սկզբնական մեղքին դա-
տապարտութենէն ազատ է :

Դարձեալ սկզբնական մեղաց երկրորդ
ժաման ալ՝ որ կը կայանայ Աստուծոյ պատ-

կերէն զսկզբնապէս և մեր բնութեան ապահանութեանը վրայ . չմաքրուիր մկրտութեամբ այլ 'ի Հոգւոյն Սրբոյ վերստին ծնանելով : Երբոր վրանիս կը հագնինք "նոր մարդը գիտութիւնով նորոգուած" իր Ստեղծողին սրտկերին սէս" (Կող . Գ . 9 , 10) . ան ատենը սկզբնական մեղաց աս մասը կը մաքրուի : Եւ որովհետեւ վերստին ծնունդը մկրտութեամբ չէ , ինչպէս որ տեսանք թէ չըլար , վասն որոյ սկզբնական մեղաց աս մասը մկրտութեամբ չերթար : Ոմանք կ'ըսեն թէ՛

"Մկրտութիւնով սկզբնական մեղքէն ազատելով մեղաց ծառայութենէ ալ կ'ազատին , շնորհաց տակ կ'ը մտնեն . որ անանկ շնորհք մըն է՝ որ թէպէտ մեղքէ փախչիլը մարդուս դիւրին կ'ընէ , բայց ազատ անձնիշխանութիւնը չվերցուներ . և ով որ անկէջ ետքը մեղք դործէ՝ ազատութեան վիճակէն ինքըզնիքը կամաւ ծառայութեան մէջ ձգած կ'ըլլայ" :

Բայց ի՞նչպէս կրնանք ըսել , թէ անոնք մկրտութիւնով մեղաց ծառայութենէ կ'ազատին , որոնք տակաւին մեղաց ծառայութեան մէջ են : Ի՞նչ վկայութիւն ունինք՝ թէ մկրտութիւնը սկզբնական մեղքը մարբելով՝ մեղքէ փախչին ալ կը դիւրացնէ , քանզի մկրտուած մարդիկ չմկրտուած մարդոցմէ աւելի չեն փախչիր մեղքէ : Թէ որ "Մկրտութիւնը սկզբնական մեղացը դէմ դեղ դրուած է" , յայտնի է թէ ա՛նիկայ անանկ "դեղ" մըն է , որ զօրութիւն չունի . քանզի կը տեսնենք որ ամենեւին մեղքի հիւանդութեան բժշկութիւնը չկա՛

տարեր : Ուրեմն բնաւ մէկ վկայութիւն մը չունինք թէ մկրտութիւնը սկզբնական մեղքը կը մաքրէ : Սուրբ Գիրքը ասանկ վարդապետութիւն չսորվեցրներ, մանաւանդ թէ աս վարդապետութիւնը հակառակ է Սուրբ Գիրքին, և հակառակ նաև մեր ամէն օրուան փորձառութեանը որ կ'ընենք հազարաւոր մկրտեալ անձանց վրայ :

Իսկ թէ որ մկրտութիւնը ոչ վերստին ծնունդ կը պատճառէ և ոչ սկզբնական մեղքը կը վերցունէ, ուրեմն

Բ . Ի՞նչ է մկրտութիւնը, և ի՞նչու կը մկրտենք :

Կը սրտասխանեմ .

1 . Մկրտութիւնը Քրիստոսի հնազանդ գտնուելու գործողութիւն մըն է . մենք կը մկրտենք՝ փասն զի ան այսպէս հրամայեր է մեզի : Մատթ . ԻԸ . 19 :

2 . Մկրտութիւնը ան գործողութիւնն է՝ որով Քրիստոսի տեսանելի կամ անուանեալ եկեղեցիին զուրս եղողները անոր մէջը կը մտնեն :

3 . Մկրտութիւնը գործողութիւն մըն է, որով երբոր մկրտուողը չափահաս է, Քրիստոսի վրայ իր ունեցած հաւատքը կը դաւանի մարդոց առջև . ինտոր որ գրուած է «Մտնք որ սրտանց ընդունեցին անոր խօսքերը, մկրտուեցան» (Գործ . Ի . 41) . և այսպէս վկայութիւն դրին ուրիշներուն թէ հաւատոյ աննոր կանոնը ընդունեցին, այսինքն Քրիստոսի աշակերտները եղան : Եւ դարձեալ՝ «Գացէք բոլոր ազգերը աշակերտե-

ցէք . մկրտեցէք զանոնք , և աստիճանքն՝ նախ ա-
նոնք ինձի աշակերտ ըրէք , և ետքը մկրտ-
տեցէք որ անով իմ աշակերտս ըլլանին
դաւանին : Այսպէս կ'ընեն շատ անգամ
նոր հաստատուած ընկերութիւնները . յա-
տուկ գործողութիւն մը կ'ունենան՝ որով
իրենց նոր անդամը կ'ընդունին , որով կը
հրատարակուի թէ անիկայ ընկերութեան
օրէնքներուն տակը կը մտնէ , և անոր արտօ-
նութիւնները վայելելու իրաւունքը ունի :
Հիմա կրնայ ըսուիլ թէ Քրիստոս երկու
տարբեր ընկերութիւն ունի աս աշխարհիս
մէջ հաստատուած . առաջինը՝ իր ճիշտ-
րիտ՝ ընդհանուր և անտեսանելի եկեղեցին
է , որ կը բաղկանայ բոլոր անոնցմէ՝ (որ
և իցէ ազգէ որ ըլլան) որոնք ճշմարտա-
պէս կը հաւատան Քրիստոսի , և այսպէս
իրենց հաւատքովը անոր մարմնոյն անդամ
ները կ'ըլլան : Իսկ երկրորդն է տեսա-
նելի կամ անուանեալ եկեղեցին՝ (որ կը
պարունակէ զանազան ազգաց եկեղեցիներ
ը) որուն անդամները բոլոր անոնք են որ
կ'ըսեն կամ կը դաւանին թէ Քրիստոսի
կը հաւատանք և անոր մարմնոյն անդամներն
ենք : Ասոր պէս ալ երկու տարբեր գոր-
ծողութիւններ կան , որով կը մտնեն մար-
դիկ աս երկու ընկերութեանց մէջ : Անտե-
սանելի եկեղեցիին մէջ կը մտնեն վե-
րստին ծննդեամբ . բայց տեսանելի կամ
անուանեալ եկեղեցիին մէջ՝ մկրտու-
թիւնով , որ սահմանուած է աս բանին հա-
մար :

Բայց ոչ թէ Քրիստոս բողոքովին նորէն հնարեց մկրտութիւնը, քանզի Յովհաննէս ալ կը մատակարարէր աս արարողութիւնը 'ի նշան ժողովրդոց խոստովանութեանը իրենց ասպաշխարող ըլլալուն, և Մեսիային դալատեանը սլափափատուելուն: Նմանապէս Հրեաները հին ատենէ 'ի վեր հեթանոսութենէ դարձողներուն կը մատակարարէին մկրտութիւնը: Բաբելոնեան ըսուած Թալմուտին մէջ (երկրորդ դարուն վերջերը գրուած) ասանկ կը կարդայուի. «Նորահաւատները չեն կրնար ընդունուիլ թէ ոչ թլփատութեամբ՝ մկրտութեամբ և արիւն ցանելով հրէութիւնը ընդունած չէ մէկը՝ մինչև որ չթլփատուի և չմկրտուի: Քանզի թէ որ չմկրտուի, անկէայ տակաւին հեթանոս է»: Նրուսաղէմեան Թալմուտ ըսուածն ալ նոյն վկայութիւնը կու տայ: Արդ ամենեւին հաւտացուելու բան չէ թէ Հրեաները՝ որ այնքան կ'ատէին քրիստոնէութիւնը, Քրիստոնեաներէն առած ըլլան աս արարողութիւնը: Մանաւանդ իրենց Ռաբբիներն ալ կը հաստատեն՝ թէ մկրտութիւնը Մովսէսին ժամանակէն իջաւ իրենց: Նաև Ախարիանս՝ երրորդ դարուն հայրերէն մէկը, կը վկայէ թէ Քրիստոսէն առաջ Հրեաները «Օրէնքին և Մովսէսին մկրտութիւնը» ունէին: (Նաճակ Արարի . 73): Վերջոպէս Քրիստոսի դալէն առաջ, Հրէից մկրտութիւնն ունենալը իբրև արարողութիւն նոր կրօնք մը դաւանելու՝ յայտնի

կ'երևայ նաև Յովհաննէսին եղած աս
 հարցմունքէն . « Հասրա ինչո՞ւ մկրտութիւն
 կ'ընես , թէ որ դուն Քրիստոսը չես , ու
 ո՛չ Եղիան , և ո՛չ մարգարէն » : Յովհ . Ե .
 25 : Չէին հարցընէր թէ « Ի՞նչ նոր ա-
 րարողութիւն է աս » , այլ թէ « Ինչո՞ւ
 դուն կը մատակարարես անիկայ » . այսին-
 քըն՝ թէ որ դուն Քրիստոսը չես , ու ո՛չ
 Եղիան , և ոչ մարգարէն որ մեր մէջը նոր
 կանոն մը հաստատես , ուրեմն ինչո՞ւ կը
 գործածես աս արարողութիւնը , որն որ
 միշտ հաւատոյ նոր կանոնի մը ընդունե-
 լութեան նշան է :

Արդ Քրիստոնէութիւնը նոր սկզբունքներ
 մանաւանդ Քրիստոսի վրայ հաւատք կը
 քարոզէր , ինտոր որ ըսուած է « Օրէն-
 քը Մովսէսին ձեռքովը տրուեցաւ . բայց
 շնորհքը ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիս-
 տոսի ձեռքովը եղան » (Յովհ . Ե . 17) .
 և դարձեալ . « Թէ որ քու բոլոր սրտովդ
 կը հաւատաս , կալելի է որ մկրտուիս » :
 Գործ . Ը . 37 : Ուրեմն ինչպէս որ Յով-
 հաննու և Հրէից մկրտութիւնը նոր հա-
 ւատք մը ընդունած ըլլալը խոստովանելու
 արարողութիւն մըն էր , ասանկ է նաև
 քրիստոնէից մկրտութիւնը : Ճշմարիտ է որ՝
 թէ բերանով և թէ ուրիշ զանազան կեր-
 պերով կրնանք Քրիստոսի վրայ ունեցած
 հաւատքնիս խոստովանիլ , բայց մկրտու-
 թիւնը յատուկ ան գործողութիւնն է՝ ու
 բով աս հաւատքը խոստովանելով կ'ընդուն-
 ուինք Քրիստոսի տեսանելի կամ անուանեալ
 եկեղեցւոյն մէջ :

4 . Սկրտութիւնը Հոգւոյն Սրբոյ նորոգելու գործին մէկ գեղեցիկ խորհրդական նշանն է . վասն զի Հոգիին գործն է նորոգել սիրտը և մաքրել մեղքէ . իսկ ջուրը սրբելու յատուկ և զլիսաւոր միջոցն է , և մաքրութեան մեծ նշանակը սեպուած է ամէն ատեն և ամէն տեղ : Օրորինակ շրեաները իրենց նուիրական անօթները շատ անգամ ջրով կը մաքրէին . (ՂԽ . Թ . 27 , 28) . նմանապէս քահանաները Աստուծոյ պաշտօնին մէջ մտնելէն առաջ պէտք էր որ իրենց մարմինները լուային ջրով , նշան ան մաքրութեանը՝ որն որ կը վայելէր Աստուծոյ մօտեցողներուն : Եւեց . 1 . 20 : Նաև ծիսական աղտեղութիւնները կը մաքրուէին ջրով լուացուելով : ՂԽ . ԺԷ . 15 , 16 : Նորահաւատն ալ կը մկրտէին՝ ան միտքով որ անոր հեթանոսական ամէն աղտեղութիւններուն մաքրուիլը ցուցնեն : Արդ՝ ինչպէս որ ջուրը մարմինը կը մաքրէ , առանկ ալ Սուրբ Հոգին սիրտը կը մաքրէ : Ուստի ջուրը կը գործածուի Սուրբ Գրոց մէջ՝ Հոգւոյն Սրբոյ իբրև մէկ օրինակը կամ նշանակը , զորօրինակ Քրիստոս ըսաւ . « Ան որ ինձի կը հաւատայ՝ ինչպէս որ Գիւրքը կ'ըսէ , անոր փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բղխեն . աս ըսաւ Հոգիին համար՝ որ իրեն հաւատացողները պիտի առնէին . վասն զի Սուրբ Հոգին տրուած չէր տակաւին , ինչու որ Յիսուս դեռ փառաւորուած չէր » : ՅԹԷ . 1 . 38 ,

39 : Նաև կ'ըսէ Աստուած Եսայի մարգարէին բերանովը «Քանզի ծարաւին վրայ ջուր պիտի թափեմ, ու անջուր երկրին վրայ՝ հեղեղներ . քու սերունդիդ վրայ իմ Հոգիս պիտի թափեմ, և քու որդւոցդ վրայ՝ իմ օրհնութիւնս» : Եսայ . 1^o . 3 : Աս տեղ ջուր կամ Հոգին թափելը՝ յայտնի է որ նոյն բանը կը նշանակէ : Այսպէս է նաև Եղեհ . 1^o . 25—27 . «Եւ ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ, ու պիտի մաքրուիք . . : Եւ իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու ձեզի՝ իմ օրէնքներուն մէջ քայլել պիտի տամ» : Հոս ալ «ջրով մաքրելը» կը նշանակէ Հոգիին ձեռքով սրբուիլը : Նաև Պետրոս առաքեալ մկրտութեան վրայ խօսելով կ'ըսէ թէ, «Մեզ անիկայ կ'ապրեցընէ, չէ թէ մարմինին աղտը մէկ դի ձգելը» (որ ջուրը ասկէ ի զատ բան մը չկրնար ընել), «հասարակ խղճմտանքին վկայութիւնը առ Աստուած», (որ ջուրով մաքրուիլը ասիկայ կը նշանակէ, և ասիկայ է հարկաւորը) «Յիսուս Քրիստոսի յարութիւնովը» (Ն. Պեթ . 4 . 21) . ըսել կ'ուզէ որ միայն ան մարդը կը փրկուի՝ որ իրեն ներսիդին ստացեր է ան մաքրութիւնը՝ որուն արտաքին կնիքը կամ նշանակը մկրտութիւնն է : Նմանապէս Պօղոս կ'ըսէ թէ, «Բայց լուացուեցաք, բայց սրբուեցաք» ինք : Ն. Կորնթ . 6 . 11 : «Իրիկներ՝ սիրեցէք ձեր կնիկները, ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր համար .

որ զանիկայ սրբէ ու մարրէ աւազանին ջրովը՝
 խօսքով» : Եփե՝ . Ե . 25 , 26 : Նկատէ՛
 հիմա որ աս տեղս աւազանին ջուրը յի-
 շելով՝ կ'ըսէ թէ խօսքով է , այսինքն Աս-
 տուծոյ խօսքին միջոցովն է մաքրութիւնը ,
 ոչ թէ մկրտութեամբ : Նոյնպէս Պետրոս
 կ'ըսէ . « Ապաշխարեցէ՛ք , ու ձեզմէ ամէն
 մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի ա-
 նունովը՝ մեղաց թողութեան համար , » ին-
 (Գործ . Ի . 38) . այսինքն՝ Ապաշխարե-
 ցէ՛ք՝ ու հաւատացէ՛ք , և մկրտուեցէ՛ք՝ 'ի
 նշան և 'ի վկայութիւն ձեր ապաշխարած
 ըլլալուն և հաւատքին կամ ձեր վերստին
 ծնած ըլլալուն , և ձեր մեղքերը պիտի
 թողուին ձեզի : Սակայն առաքելոց գործ-
 քերուն երրորդ գլուխ տասնևինը համա-
 րէն յայտնի է որ Պետրոս առաքեալ վերի
 խօսքին մէջ՝ ապաշխարութիւնը գլխաւոր
 բան կը սեպէ , ոչ թէ մկրտութիւնը . ին-
 չու որ ամենևին չիշխելով մկրտութիւնը՝
 միայն կ'ըսէ . « Ապաշխարեցէ՛ք՝ ու դարձի՛ եկէ՛ք ,
 որ մեղքերնիդ ջնջուի , » : Դարձեալ աստուա-
 ծաւլախ Անանիան ասանկ ըսաւ Պօղոսին .
 « Եւ հիմա՝ ալ ի՞նչ կ'ուշանաս , ելի՛ր մկրտու-
 ուէ՛՝ ու մեղքերդ լուս անոր անունը կան-
 շելով » (Գործ . Ի՞ . 16) . այսինքն ելի՛ր ,
 ու մկրտուելովդ քու հաւատքդ հրապա-
 րակաւ խոստովանէ՛ , ու խորհրդաբար նշա-
 նով և օրինակով քու մեղքերուդ լուս-
 ցումը ցուցուր , որոնք չօգւով Սրբով կը
 կը մաքրուին , ինտոր որ մարմնոյդ ան-
 մաքրութիւնները ջրով :

Այս կերպ խօսուածքը բնական ոճ մը ունի և դիւրաւ կը հասկըցուի, քանզի ամէն ազգի մէջ «մեղքէ սրբուիլ» կամ «բարոյական աղտեղութենէ մաքրուիլ» ըսելով՝ իմացուիք ջուրով եղած լուացումը, այլ այնպէս կ'ըսուի, ինչու որ ջուրն է գլխաւոր տարրը ու նշանակ մաքրութեան: Եւ այսպէս ան ըսուածքը «Նորէն ծնանելու աւազանին միջոցովը» (ՏԻՊ. Գ. Ծ) կարելի է որ մկրտութեան բնաւ չվերաբերիր, այլ միայն կը նշանակէ «նորէն ծնանելու մաքրութիւնը»: Այսպէս նաև Յովհաննու ան խօսքը «Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի» (ՅՈՎ. Գ. Ծ), գուցէ մկրտութեան չվերաբերիր, այլ միայն Եսայեայ ըսածին պէս հասկըցուելու է, «Ծարաւին վրայ ջուր պիտի թափեմ, ու անջուր երկրին վրայ՝ հեղեղներ. քու սերունդիդ վրայ իմ հոգիս պիտի թափեմ», ի՞նչ. ուր ջուր թափելը ու Հոգին թափելը որոշակի նոյնը կը նշանակեն. վստահ մէկը միւսին օրինակն է. անանկ որ Յովհաննու աս խօսքը կրնայ իմացուիլ այսպէս «Թէ որ Հոգիէն չծնանիք, որ կը մաքրէ հոգին, ինտոր որ ջուրը մարմինը կը մաքրէ», ի՞նչ: Աս մտօք առնուելով աս խօսքը՝ համեմատ պիտի դայ Մաթէոսի Գ գլխոյն Ա համարին մէջը ըսուածին. «Անիկայ ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու կրակով», քանզի հոն ալ այլաբանօրէն է խօսքը, որովհետև կրակն ալ ջուրին պէս մաքրողական զօրութիւն ունի:

Սերը խօսածնիս մկրտութեան ճշմարիտ
 բնութեանը և նշանակութեանը ուղիղ բա-
 ցատրութիւն մը ըլլալը յայտնի պիտի ըլ-
 լայ ամէն Սուրբ Գիրքերը անկեղծութեամբ
 և ուշադրութեամբ քննողներուն . բայց սա-
 կայն հակառակութեամբ ըսած են ոմանք
 թէ մկրտութիւնը չկրնար նշան մը սեպուիլ
 թլփատութեան պէս , վասն զի « մնայուն
 զգալի նշան մը » չէ , ինչպէս որ թլփատու-
 թիւնը է . բայց ասիկայ տղայական խօսք
 մըն է , վասն զի ինչ է նշան ըսուածը ,
 եթէ ոչ՝ ան բանը որ ուրիշի մը տեղ դըր-
 ուած է , կամ թէ ուրիշ բանը կը ներ-
 կայացունէ և կը նշանակէ : Հարկ չէ որ
 նշանը զգալի կամ մնայուն բան մը ըլլայ .
 մանաւանդ թէ հարկ չէ որ աս երկու յատ-
 կութիւնները մէկ տեղ ունենայ , որ իր
 նշան ըլլալը յայտնի ըլլայ : Զորօրինակ՝ ես
 կայնած տեղէս վար կ'իյնամ , որ նշան մըն
 է իմ տկար ըլլալուս . իյնալս թէպէտ
 զգալի բան մըն էր , բայց չէ թէ մնայուն :
 Դարձեալ՝ « գիտենք որ մահէն կեանքի փոխ-
 ուեցանք . ինչու որ եղբայրները կը սիրենք »
 (Ն. Յով. Գ . 14) . ուստի սերը նշան մը՝
 ցոյց մը և վկայութիւն մըն է մահէն կեան-
 քի փոխուած ըլլալուն , որ ասիկայ մնա-
 յուն նշան մըն է , բայց չէ թէ զգալի :
 Նմանապէս կը կարդանք , « Եւ ըսաւ . Անուշտ
 ես քեզի հետ պիտի ըլլամ . և աս ըլլայ
 քեզի նշան՝ որ ես քեզ խրկեր եմ . եր-
 բոր ժողովուրդը Եգիպտոսէն հանես , աս
 լեռանը վրայ պիտի պաշտէք զԱստուած » :

Եւեց . Գ . 12 : Ահա աս նշանը « մնայուն ,
զգալի , կամ թէ կրկնական » բան մըն
էր : Դարձեալ , « Ու քու երկու որդւոցդ
Ուինիին ու Փենէհեսին գլուխը գալէքը՝ քեզի
նշան ըլլայ , այսինքն երկուքին ալ մէկ օր-
ուան մէջ մեռնիլը » : Ս թափ . Ի . 34 :
Մնայուն նշան մըն էր ասիկայ՝ աս երկու
եղբարց հօրը . կամ թէ կրնար կրկնուիլ
աս նշանը իրենց հօրը շեղիին :

Ոմանք կ'ըսեն թէ՝

« Սկրտութիւնը թէպէտ զգալի բան մըն է , բայց
ինչպէս նշան կրնայ ըլլալ որ մարդ չտեսներ մկրտուած
ատենը հօն ներկայ գտնուողներէն զաս » :

Բայց կ'ըսեն նաև թէ՝

« Քրիստոնէութիւնը ճանչնալու մէկ նշան մը կայ
երեսին խաչակրքերը » :

Ուրեմն մենք ալ կը հարցընենք թէ
ինչպէս կրնայ « երեսը խաչակրքերը » նշան
մը ըլլալ անոնց՝ որոնք ներկայ չեն գտնուիր
անիկայ տեսնելու , կամ կոյրերուն՝ որոնք
բնաւ չեն կրնար տեսնել : Ուստի աս կա-
նոնին նայելով՝ շեղիին երկու որդւոցը մա-
հը նշան չէր իրեն , ինչու որ ինք հօն չէր
որ անիկայ տեսնէր : Բայց ճշմարտիւ՝ շե-
ղիին դէմ Աստուածային բարկութեան նը-
շան մըն էր ան . և իր հօն ներկայ գըտ-
նուիլը կամ չգտնուիլը մի և նոյն բան էր :
Այսպէս ջրով մկրտելը նշան կամ օրինակ
մըն է հոգիին մաքրուելուն և վերստին ծը-
նանսելուն , ամենևին փոյթ մը չըլլալով թէ
ո՛վ կը տեսնէ և ո՛վ չտեսներ :

Սկրտութիւնը՝ իբրև աւետարանական

խորհուրդ՝ ներքին և հողևոր շնորհաց մէկ
 յայտնի նշանն է : Սուրբն Օգոստինոսս կ'ը-
 սէ թէ խորհուրդը սրբազան «նշան մըն»
 է . և «Քրիստոնէական վարդապետութիւն»
 կոչուած զբքի մը հեղինակն ալ, (տպեալ
 'ի Կոստանդնուպօլլա , 1843) , կ'ըսէ թէ
 Աստուած զանազան միջոցներով շնորհք կու-
 տայ իր ժողովուրդին , և «այս շնորհքներս
 տալու արտաքին նշաններուն խորհուրդ կ'ը-
 սենք» : Ուստի որովհետև մկրտութիւնը
 յայտնապէս խորհուրդներուն մէկը պիտի ըլ-
 լայ , վասն որոյ յիշեալ հեղինակն ալ կը
 վկայէ , թէ մկրտութիւնը կրնայ նշան սեպ-
 ուիլ :

Մկրտութիւնը կրկնուելու չէ , վասն զի
 Սուրբ Գիորգէն հրաման կամ օրինակ մը
 չունինք մէկ անգամէն աւելի մկրտելու .
 քանզի առաջին դաւանութիւնը՝ որուն հա-
 մար մկրտութիւնը տրուած է , միայն մէկ
 անգամ կ'ըլլայ . որովհետև երբ որ մկրտու-
 ուած մէկը մեղաց մէջ խնալով կը բա-
 նադրուի եկեղեցիէն , ու ետքը զղջալով
 նորէն կ'ընդունուի , ոչ թէ հեթանոսու-
 թենէ նոր դարձած համարելու է զանիկայ ,
 այլ միայն իբրև եկեղեցիին մոլորեալ ու
 դարձի եկած մէկ անդամը . և ասոր հա-
 մար իր մկրտութիւնը չկրկնուիր :

Ծ . Մկրտութիւնը նաև կնիք մըն է
 «հաւատոյ արդարութեան» . կնիք մըն
 է՝ որ Քրիստոս բուն իր իշխանու-
 թեամբը կու տայ անոնց որ զինքը կը դա-
 ւանին , և աս կնիքը՝ յայտնի հաստատու-

Թիւն մին է հաւատացեալին իր հաւաքովը արդարացած ու փրկուած ըլլալուն, և ան ուխտին որ Աստուած կը հաստատէ հաւատացեալին հետ. բայց մենք ասոր վերայ ուրիշ տեղ երկարօրէն պիտի խօսինք :
 Հիմայ պէտք է քննել ան խնդիրը, թէ

Գ. Մկրտութիւնը ի՞նչ մտօք հարկաւոր է փրկութեան :

Արդէն բաւական հաստատուեցաւ առջի երեսներուն մէջ թէ մկրտութիւնը փրկութեան հարկաւոր չէ, ինչպէս որ Քրիստոսի հաւատալը և Սուրբ Հոգիէն վերատին ծնանիլը հարկաւոր են : Եւ յիրաւի ամէնը ընդունած են թէ կարելի բան է որ մէկը մկրտուելէն ետքն ալ չփրկուի . մանաւանդ թէ կը խօստովանին որ հազարաւոր մկրտուած մարդիկ մեղօք կը մեռնին ու յաւիտեան կը կորսուին . բայց ասոր հակառակ՝ օվ որ ճշմարտապէս կը հաւատայ՝ անշուշտ պիտի փրկուի : Մկրտութիւնը հարկաւոր չէ ան մտօքը թէ սկզբնական մեղքը կը վերցունէ, կամ նորէն ծնանելու պաշտօնը կը կատարէ, վասն զի չկրնար ընել աս բաները : Արդարեւ տղաքը որ երախա յուժեան մէջ կը մեռնին, պէտք է որ սկզբնական մեղքէ ազատին ու Սուրբ Հոգիէն վերատին ծնանին, ասպա թէ ոչ չեն կրնար երկինքը մտնել . բայց տեսանք թէ աս երկու գործողութիւններուն ոչ մէկն ալ մկրտութենէն յառաջ կու գայ կամ

անկէ կախում ունի . ուստի իրենց փրկուածեան հարկաւոր պայմանը մկրտութիւնը չէ : Սակայն կը կարդանք որ երբոր մանր տղաքներ բերուեցան անգամ մը Քրիստոսի , իր դիրկը առաւ զանոնք՝ օրհնեց ու ըսաւ . « Աստուծոյ Թագաւորութիւնը ատանկներունն է » (Ղուկ . ԺԷ . 16) . ասանկ շատ ուրիշ վկայութիւններ ալ կան՝ որոնցմէ պատճառ ունինք հաւատալու , թէ ներգործական մեղք չգործած երախայութեան մէջ մեռնող տղաքները՝ սկզբնական մեղաց դատապարտութենէն ազատ կ'ըլլան Քրիստոսի արդարութիւնովը , և թէ Հոգին Սուրբ զանոնք կը պատրաստէ երկինքը ընդունուելու : Բայց անոնք որ բաւական մեծցած են հաւատք ունենալու , պէտք է որ հաւատան , եթէ ոչ՝ բնաւ չեն կրնար փրկուիլ . պէտք է որ Սուրբ Հոգիէն ծնանին , եթէ ոչ՝ բնաւ չեն կրնար Աստուծոյ Թագաւորութիւնը մտնել : Պէտք է նաև որ մկրտուին , թէ որ շատ զժուար արգելք մը չունենան . քանզի ան անձը որ մկրտութեան հեղինակութիւնը հասկընալով չուզէր մկրտուիլ , բնաւ պիտի չմտնէ Քրիստոսի թէ՛ երկրաւոր և թէ՛ երկնաւոր Թագաւորութեանը մէջ , փանս զի ան որ չուզէր Քրիստոսի զինուորեալ եկեղեցիին անդամ ըլլալ , անշուշտ անոր յարթական եկեղեցիին անգամ ըլլալէն ալ պիտի զրկուի , ասպատակք մեղաւորի մը պէս որ հաւատք չունի և նորոգուած չէ :

Բայց թէ որ մէկը անանկ պարագայի

մը մէջ գտնուի որ չկրնայ մկրտուիլ, մը կըրտուէին եւ մնալը իր փրկութիւնը չար գիշեր : Մեծ սխալմունք է ան « փրկարար ջուր » խօսքը , վասն զի մեղաւորները Փրկողը ոչ թէ ջուրն է , այլ Քրիստոս : « Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին » , ու թէ մկրտուած ըլլաս և թէ չէ , « պիտի փրկուիս » . բայց « ան որ Հաւատար » , թէ մկրտուած ըլլայ և թէ չէ , « պիտի դատաւ պարտուի » : Տէրն մեր ըսաւ թէ՛ « Ան որ Հաւատայ՝ ու մկրտուի , պիտի փրկուի , և ան որ Հաւատայ , պիտի դատաւարտուի » . (Մարկ . յ. 16) . բայց չըսաւ՝ թէ Ան որ մկրտուի պիտի դատաւարտուի : Ասիկայ Հաստատուն վկայութիւն մըն է որ մկրտութիւնը փրկութեան հարկաւոր պայմաններէն մէկը չէ :

Քրիստոս՝ Նիկողեմոսի հետ ըրած խօսակցութեանը մէջ միայն անգամ մը կը յիշէ ջուրէն ծնանիլը , բայց Հոգիէն ծնանիլը երեք անգամ , ցուցնելով թէ իր միառիւս մէջը ոչ թէ առաջինը՝ այլ վերջինն էր մեծ ու հարկաւոր պայմանը : « Քրիստոս Յիսուսով ոչ թէ քրիստութիւնը բան մըն է , ոչ ալ անթլիստութիւնը . հասարակ (չյիշէր մկրտութիւնը) նոր ստեղծուած ըլլալն է բանը » : Գաղ . Բ . 15 : Այսպէս մենք ալ կրնանք ըսել՝ Չէ՛ թէ մկրտութիւնը բան մըն է , հասարակ նոր ստեղծուած ըլլալը , Հոգին Սուրբէն վերստին ծնանիլը : Ասիկայ ըսել չէ , թէ՛ « մկրտութիւն եղեր չէ եղեր՝ հոգ չէ » , քանզի

շատ հոգ է . մկրտութիւնը Քրիստոսական
կանոնին մէկ հարկաւոր սահմանադրու-
թիւնն է . չենք կրնար զանիկայ զանց բ-
նել և անմեղ սեպուիլ , բայց թող հաս-
կրցուի թէ փրկութիւնը անով չէ . ուրիշ
է փրկութեան հարկաւոր սրայմանը :

Գ Լ Ո Ւ Խ Զ

Ինչո՞ւ համար տղաքը կը մկրտենք :

Թէ որ մկրտութիւնը տղոցը փրկուե-
լուն հարկաւոր չէ , ու նաև թէ որ անի-
կայ նշան կամ օրինակ մըն է վերստին
ծննդեան , և Քրիստոսի վրայ եղած հա-
ւատոյ դաւանութեան գործողութիւնը , ու-
րեմն ինչո՞ւ համար տղաքը կը մկրտենք՝ ո-
րոնք ոչ հաւատք ունին , ոչ վերստին ծը-
նած են , և ոչ ալ կրնան դաւանութիւն
ընել :

Ար պատասխանենք թէ՛ որովհետև մկր-
տութիւնը թլփատութեան տեղը դրուած
է , ուստի հաւատացեալ ծնողքները հիմա
ալ նոյն իրաւունքը ունին , մանաւանդ թէ
նոյն պարտաւորութեանն ալ տակն են ի-

րենց զաւակները մկրտելու, ինտոր որ Քրիստոսի զալէն առաջ եղող հաւատացեալ ծնողքները ունէին իրաւունք, մանաւանդ թէ պարտաւորած ալ էին իրենց զաւակները թլփատելու :

Ասիկայ խիստ երևելի ու ընդարձակնիւթ մըն է, և զանիկայ հաստատող շատ մկայ յութիւններ կան . մենք աս տեղ անոնց մէ մէկ քանիները միայն յառաջ կը բերենք, քանզի թէ որ ամէնը յառաջ բերելու ըլլանք շատ պիտի երկարի մեր փորձիկ ճառը :

Աստի մկրտութիւնը թլփատութեան տեղ փոխադրուիլը, և Քրիստոնեայ ծնողաց իրենց զաւակները մկրտելու համար ունեցած իրաւունքը և պարտաւորութիւնը, պիտի տեսնուի աս հետեւեալ քննութիւններէն :

Ա . Աոր Ատակարանի եկեղեցին նոր հաստատուած եկեղեցի մը չէ, այլ շին Ատակարանի եկեղեցիին շարունակութիւնն է, միայն թէ ընդարձակուած է և աւելի կատարեալ եղած : Ասիկայ աղէկ իմանալու համար մտածեցէք նախ՝ թէ ,

1 . Աստուծոյ ճշմարիտ՝ հոգւոր և անտեսանելի եկեղեցին մի և նոյն է ամէն ժամանակ : Աս եկեղեցին կը պարունակէ աշխարհիս մէջ Աստուծոյ բոլոր ճշմարիտ բարեկամները և ծառաները : Ասոնք ամէնալ մէկ սրբազան գերդաստան մը կը կաղմեն, և նոյն հոգւոր վերաբերութիւնները ունին թէ իրարու և թէ Աստուծոյ հետ :

Բայց Քրիստոսի աշխարհիս մէջի տեսանելի եկեղեցին կը բաղկանայ բոլոր անոնցմէ որ ճշմարիտ եկեղեցիին անդամները և Աստուծոյ հարազատ ժողովուրդը ըլլալ կը դաւանին : Արեւմտեան թէ որ ամէն ատեն մէկ է անտեսանելի եկեղեցին , նոյնպէս մէկ է տեսանելի եկեղեցին , այսինքն՝ ազգի , օրհնքի , արարողութիւններու , և սովորութիւններու խտրութիւնները ոչ թէ զանազան եկեղեցիներ կը կազմեն , այլ միայն նոյն անուանեալ եկեղեցիին տարբեր մասունքները կը ցուցնեն :

2 . Այլիւ տնտեսութիւններուն այսինքն հին և նոր օրինաց մէջ եկեղեցին նոյն կրօնքը դաւանած է . և ճշմարիտ կրօնքը նոյնն է ամէն ժամանակ , այսինքն մի և նոյն Աստուածն է որ պիտի պաշտուի , և նոյն հնազանդութիւնն է որ կը պահանջուի անոր պատուիրանքներուն : Միայն մէկ ճամբայ մը եղած է երկրէս երկինքը երթալու , և միայն մէկ ճամբայ մը վերկութեան՝ նոյն Փրկչին ձեռքովը : Աս կրօնքը Աստուածաշունչը կը յայտնէ և կը սորվեցնէ , և անշուշտ Աստուածաշունչին կրօնքը մէկ է : Իսրայէլացիք դաւանեցան զանիկայ ճիշտ ինտոր որ քրիստոնեայք հիմա կը դաւանին . անոնք հին Իսրայէլ էին մենք նոր Իսրայէլ ենք : Եւ մենք ալ այնպէս կ'ընդունինք Հին Ատակարանը ինտոր որ անոնք կ'ընդունէին . քանզի Նոր Ատակարանը ոչ թէ Հին Ատակարանին հակառակն է , այլ անոր վախճանը , լրումը և ընդարձակութիւնն է : Հին Ատակարանին զըլ-

խաւոր վարդապետութիւնները Նոր Կտակարանին մէջ եղածներուն հետ նոյն են . նմանապէս գլխաւոր պահանջմունքները , տանաքանեաց պատուիրանաց օրէնքը ինչպէս որ հրէից օրէնքն էր , անանկ ալ քրիստոնէիցն է :

3 . Հին ատենի եկեղեցիին եղած խոտմունքները և յայտնութիւնները Նոր Կրտակարանին մէջ արուած են նաև Քրիստոնէից եկեղեցիին : Բաղդասաբէ Սաղմ . Խ . 22 , Եբր . Ի . 11 , 12ին հետ : Նաև Եւեյ . ԺԹ . 5 , 6 , Ե Պե . Ի . 9ին հետ : Նաև Աճմ . Թ . 11 , 12 , Գործ . ԺԵ . 14—17ին հետ : Ատուած ըսեր է իր Հին Կտակարանի եկեղեցիին . “ Չեր մէջը պիտի քալեմ , ու ձեզի Ատուած ըլլամ , և դուք ինձի ժողովուրդ պիտի ըլլաք ” : Ղե . Ի . Գ . 12 : Աս խօսքը առաքեալը վկայութիւն կը բերէ , Հին Կտակարանէն առած ուրիշ խօսքերով , և Կորնթացոց եկեղեցիին կ'ուղղէ զանիկայ , ու ետքը կ'ըսէ . “ Ուստի սիրելիք՝ որովհետև մենք աս խոտմունքները ունինք , մեր անձերը . . . մաքրենք , ինչ : Ի Կորնթ . Ի . 1 : Ի՞նչպէս կրնար Պօղոս գրել Կորնթացի եղբայրներուն , թէ աս խոտմունքները ունին և թէ ան խոտմունքներէն հետեցած իրենց անձերը մաքրելու պարտաւորութեանը տակն են , թէ որ իրենք ան նոյն եկեղեցիին չվերաբերէին՝ որուն որ առաջ ան խոտմունքները եղան : Բաղդասաբէ Յետոսայ . Ե . 5 , և Ե Մնայ . ԻԲ . 20 , Եբր . ԺԹ . 5ին հետ : Ա-

մէն քրիստոնեայք այնպէս կը համարին որ
հին ատենի եկեղեցիին մէջ Աստուծոյ
ժողովուրդին եղած հոգևոր խոստամունքնե-
րը, հաւասարապէս կը վերաբերին Նոր կը-
տակարանի եկեղեցիին ժողովրդոցը : Միա-
բան հաւանութեամբ ընդունուած է թէ շին
Միօնին խոստամունքները հաւասարապէս Նոր
Միօնին ալ կը վերաբերին, և անոնցմէ կան
ալ որ յատկապէս ասոր կը վերաբերին : Ե-
սայ . ԻԹ . 18 . 23 հն :

4 . Սուրբ գրոց մէջ մարգարէութիւն-
ներն ալ նոյն բանը կը հաստատեն . Յով-
հաննէս Մկրտիչ գուշակեց իր ետևէն ե-
կողին վրայով ըսելով թէ Պիտի գայ « իր
կալը մաքրելու » ոչ թէ քակելու : Մատթ .
Գ . 12 : Ասոր համեմատ եկեղեցիին աւե-
տարանական անտեսութեան մէջ մտնելով
մաքրուեցաւ՝ ու չէ թէ աւրուեցաւ :

Այգիին առակին մէջ քրիստոս գուշա-
կեց թէ ան այգին կամ եկեղեցին՝ որուն
մէջ շրեաները անանկ չարութեամբ վար-
ուեր էին, պիտի առնուի անոնցմէ և շե-
թանոսներուն արուի : Մատթ . ԻԵ . 43 :
Տես նաև Փիլիպ . Գ . 3 :

Շեթանոսները մէկտեղ ժողովելու վրա-
յով՝ և եկեղեցիին ասպանի յառաջագի-
մութեանը ու փառքին վրայով եղած հին
ատենի բոլոր գուշակութիւնները, շին կը-
տակարանին մէջ յիշուած Միօնին ըսուե-
ցան, ան եկեղեցիին՝ որ հին խորայեւն
մէջն էր, ոչ թէ նորէն հաստատուելու
եկեղեցիի մը : շին եկեղեցին կը յիշուի

ոչ իբրև ոչնչացեալ և իր տեղը ուրիշը յա-
 ջորդած, այլ իբրև այցելութիւն ընդունած,
 մխիթարուած, մաքրուած, յարութիւն ա-
 ռած, ընդարձակուած և փառաւորապէս
 նորոգուած իր կործանմանէն և ապականու-
 թենէն: Օրինակի համար, «Քու անդա-
 ւակութենէդ ետև ծնանելու որդիքդ քու
 ականջներուդ պիտի ըսեն. Աս տեղը ին-
 ծի նեղ է, տե՛ղ տուր ինձի որ բնակիմ:
 Ու դուն քու սրտիդ մէջը պիտի ըսես.
 Ասոնք ինձի ո՞վ ծնաւ. ես անդաւակ ու
 ամուլ էի. ես գերի ու արսորուած էի
 (այսինքն շրեաներէն), ասոնք (այսինքն շե-
 թանտաները) ո՞վ մեծցուց. ահա՛ ես մի-
 նակ մնացեր էի, ասոնք (այսինքն շեթա-
 նտաները) ո՞ւր էին» : Եսայ . 100 . 20, 21 :
 Տե՛ս նաև Եսայ . 1 . 2—4 : ԺԵ . 4—11 :
 ԼԵ . 4—10 : ԽԳ . 1—7 : ԽԹ . 1—26 :
 ԾԵ . 3—5, 11—16 : ԾԿ . 1—15 : ԾԿԲ .
 1—17 :

5 . Երկու տնտեսութիւններուն տակն
 ալ եկեղեցիին մի և նոյն ըլլալը Սուրբ Գիր-
 քին յատուկ վկայութիւններէն ալ կ'երևայ :
 Պօղոս առաքեալ ասիկայ յայտնապէս կը
 սորվեցունէ մեզի, Հռովմայեցոց տասնև-
 մէկերորդ գլխուն մէջ : Չիթենիին ծառը
 այսինքն եկեղեցին (Տե՛ս Եբե՛ժ . ԺԵ . 16)
 ոչ թէ կործանեցաւ՝ արմատէն հանուե-
 ցաւ ու նոր ծառ մը տնկուեցաւ անոր տե-
 ղը, այլ միայն իբր ոտերը (այսինքն ան-
 հաւատ շրեաները) կորուեցան, և շեթա-
 նտաները (որ բնութեամբ վայրի ձիթենի

էին) անոր վրայ պատուաստեցան . անավ
ան ապահանեալ ծառք կենդանացեալ ծառք
կեցաւ . ու երբոր շրեաներն ալ կը հաւա-
տան , նորէն անոր վրայ կը պատուաստին .
և այսպէս ՚ի սկզբանէ անտի միայն մէկ ծառ
մը այսինքն մէկ եկեղեցի մը կայ : Զատ՝
ժ.Վ . 16—26 :

Նոյն առօրեայը կըսէ իր Արիւսացոց
Թղթոյն մէջ . “ Քուտի միաբերնիդ բերէք ,
որ դուք պահեն մը մարմնով հեթանոսներ
բլբալով որ ան ատենը դուք առանց
Քրիստոսի էիք , ու հեռացած էիք խրա-
յէլի քաղաքակցութենէն , և օտարացած
խոստմանէրին ուխտէն , ու յոյս մըն ալ
չունէիք , և աշխարհի մէջ անաստուած էիք . ”
Ե՛իւ . Բ . 11 , 12 : Բայց երբ հաւատա-
ցին Քրիստոսի՝ խրայէլի ճշմարիտ ժողո-
վին մէջ առնուեցան , այսինքն Աստուծոյ
եկեղեցիին մէջ , և բաժանարդ եղան խոստ-
ման ուխտերուն , ուստի մէկ է շրեից և
Քրիստոսից եկեղեցին :

6 . Քրիստոսի հրապարակաւ Քարոզու-
թեան բոլոր ատենները իր աշակերանները
հին եկեղեցոյն անդամներն էին . ան ե-
կեղեցիին տօները կը պահէին , և անոր պա-
հանջած ամէն պարտաւորութիւնները կը
կատարէին . բայց կը տեսնենք որ Քրիս-
տոս հաճեալուալէն ետքը Քրիստոսից եկե-
ղեցիին մէջն էին անոնք , արդեօք հին ե-
կեղեցիէն բաժնուեցան ու նոր եկեղեցիի
մը յարեցան : Թե՛ որ այսպէս է՝ երբ և
կամ ինչպէս եղաւ առ բանը : Արդարեւ

Հարկաւոր փոփոխութիւններ եղան Քրիստոսի մահուան ժամանակ . Հրէից ծիսական և արարողական օրէնքը խափանեցաւ և նոր տնտեսութիւն մը հաստատուեցաւ . ան բաժանող պատը որ Հեթանոսները ներս մըտնելէն խափաներ էր , քակուեցաւ . (Եփես . Բ . 14—17) . ձիթենիին մեռեալ ճիւղերը կտորեցան , և ուրիշ նոր ճիւղեր անոր վրայ պատուաստեցան : Բայց ծառին բունը իր քանի մը կանաչ ճիւղերովը նոյնը մնաց , և շատ նոր ճիւղեր անսկիզբապէս անոնց վրայ աւելցան :

Մտանկ բազմութիւն վկայութիւններով կը յայտնուի՝ թէ եկեղեցին մի և նոյն է երկու տնտեսութեանց տակը . տնտեսութիւնը փոխուեցաւ , բայց ոչ եկեղեցին . յատկութիւնները փոխուեցան , բայց ոչ էութիւնը . ճիւղերը փոխուեցան , բայց ոչ բունը :

Բ . Եկեղեցին թէ Հին Կտակարանի և թէ Նոր Կտակարանի ժամանակը մի և նոյն ուխտին տակն է , այսինքն ան ուխտին տակը՝ որ Աստուած ըրաւ Աբրահամու հետ :

Իսրայէլացւոց՝ ազգին հետ ուրիշ ուխտ մըն ալ հաստատուեցաւ Սինայ լեւը Մովսէսին ձեռօքը , որն որ առաքեալը “հրամաններով եղած պատուիրանքներուն օրէնքը” կը կոչէ . (Եփես . Բ . 15) . որ ժամանակաւոր ըլլալու բան մըն էր , ու միայն “չուք մը գալու բարիքներուն” : Եբր . Ժ . 1 : Ան ուխտը հաստատուած էր օրի նակներով՝ շուքերով և արարողութիւններ

բալ . բայց ան օրինակները՝ երբոր կատարուեցան , խափանեցան . ան շուքերը՝ երբոր իրենց վախճանին հասան , ամէնն ալ դադարեցան . Գաղ . Գ . 24 : Եֆե . Թ . 4 . 9 , 10 : Սակայն աս օրէնքին կամ ուխտին խափանուիլը « խոստմունքով եղած կը տակին » , վրայ զօրութիւն մը չունէր : Տե՛ս Գաղ . Գ . 17 : Ան նոր ուխտը՝ որուն համար կը խօսի Պօղոս , (Եֆե . Լ . 8—13 ,) Նոր կըսուի Սինէականին կամ Մովսիսականին հետ բաղդատելով , որն որ շին կը կոչուի : Բայց աս Նոր ուխտը ճշմարտապէս մի և նոյն էր ան առջի ուխտին հետ որ Աստուած Աբրահամու հետ ըրաւ :

Աստուծոյ Աբրահամու հետ ըրած ուխտը երկու մասէ կը բաղկանար , և երկու նշանակութիւն ունէր , ժամանակաւոր և հողեւոր : Աւխտին ժամանակաւոր մասը կատարուեցաւ Աբրահամի յաջորդներուն վրայ ըստ մարմնոյ , որոնք Իսրայէլացիներն էին : Հողեւոր մասը ան է որ մինչև հիմա կը կենայ , և Քրիստոսի ամէն հաւատացեալներուն (թէ՛ շրեայ թէ՛ շեթանոս) վաշեւած բոլոր օրհնութիւններուն հաստատուն մալրհակն է : Աս ուխտը թէպէտև Եօթը անգամ կրկնուեցաւ Աբրահամին՝ թէ՛ ընդարձակ և թէ՛ համառօտ խօսքերով , (Տե՛ս Ծննդ . ԺԲ . 2 , 3 : ԺԳ . 16 : ԺԴ . 5 : ԺԵ . 2—14 : ԺԶ . 18 : ԻԲ . 17 , 18 .) բայց միշտ մի և նոյն ուխտն էր ինչպէս որ կը կարդանք զանազան տեղեր : Տե՛ս Ղո՛ւ . Է . 72 , 73 : Գործ . Գ . 25 : Ի Օրին . Գ . 31 :

Ըստ ուխտին գլխաւոր դաշնադրութիւնները ասոնք էին, թէ Աբրահամով ու իր սերունդովը երկրին բոլոր ազգերը պիտի օրհնուէին . և թէ Աստուած՝ պիտի ըլլար Աբրահամին և անկէ ետև անոր զաւակներուն Աստուածը, որոնք երկինքի աստղերուն պէս կամ ծովի աւազին պէս անթիւ պիտի ըլլային : Ծանոթ . ժԼ . 7, 8 : ԻԲ . 17, 18 : Պօղոս առաքեալ կ'իմացունէ մեզի թէ ան « Սերունդը », որով բոլոր ազգերը պիտի օրհնուէին, Քրիստոս էր . և թէ ան « անթիւ զաւակները », հոգեորապէս էին, այսինքն հաւատացելոց բազմութիւնը : Գաղ . Գ . 16 . 29 : Գ . 28 : Հռոմ . Թ . 8 :

Ըմէնը կ'ընդունին թէ Հրէից եկեղեցին ինտոր որ Սինէական կամ Մովսիսական ուխտին տակն էր, անանկ ալ ան առջի Աբրահամեան ուխտին տակն էր : Քանզի Աստուած՝ Սինա լեռանը վրայի ուխտը հաստատելէն առաջ, Իսրայէլացիները իրեն ժողովուրդ անուանեց : Եւեց . Գ . 6, 7 :

Ըրդ՝ հաւասարապէս յայտնի է թէ Քրիստոնէից եկեղեցին ալ հիմա Աբրահամեան ուխտին տակն է, վասն զի՝

1 . Չկայ տեղ մը գրուած թէ Աբրահամեան ուխտը խափանուած է :

2 . Ըստ ուխտը կը կոչուի « յաւիտեանական », ուխտ, որ յաւիտեան պիտի մնայ : Ծանոթ . ժԼ . 7 : Ղուկ . Ե . 55 :

3 . Ուխտին համար կ'ըսէ Առաքեալը . « Աս կը զրուցեմ . Ան կտակը՝ որ պռա-

Զուց Աստուծմէ հաստատուեցաւ Քրիստոսով, որէնքը չորս հարիւր երեսուն տարիէն էտե որ դրուեցաւ, չկրնար խախտել՝ խոստմունքը խախանելու համար» : Գող. Գ. 17 : Աս համարէն ոչ միայն յայտնի է որ Աբրահամին հետ եղած ուխտը չխախանեցաւ Աւետական օրինաց հետ, այլ յայտնի է նաև թէ անիկայ Աւետարանական ուխտ մըն է, վասն որոյ տակաւին կը մնայ, ու վաւերական է. քանզի «Աստուած Քրիստոսով հաստատեց զանիկայ» : Եւ ոչ միայն այսպէս, այլ նաև խոստմունքի ուխտ մըն էր, և անով է որ Քրիստոսի հաւատացեալները՝ որոնք որ Աբրահամին հոգեւոր զաւակներն են, երկինքի ժառանգները պիտի ըլլան, որովհետև կ'ըսուի, «Թէ որ դուք Քրիստոսինն էք, ուրեմն Աբրահամին սերունդն էք, ու խոստմունքին նա յետ ժառանգներ» : Ուստի Քրիստոսով եղած նոր ուխտը, Մովսիսականին հետ բազդատելով նոր կ'ըսուի, ոչ թէ Աբրահամին հետ եղած ուխտին նայելով, որուն հետ մէկ է. քանզի Աբրահամին խոստացուած ան զաւակը՝ որով բոլոր ազգերը պիտի օրհնուէին, մեր Քրիստոս փրկիչն է :

Սուրբ Գրոց զանազան տեղերը Աբրահամ յիշուած է իբրև հայր հաւատացելոց, և հաւատացեալները իբրև անոր զաւակները : Առաքեալը կ'ըսէ, «Ասոր համար ժառանգ ըլլալը հաւատքէն է, որ ընտրեցով եղած ըլլայ, խոստմունքը հաստատուն ըլլալու համար բոլոր սերունդին,

չէ՛ թէ միայն անոր՝ որ օրէնքէն է, հա-
պա անոր ալ՝ որ Աբրահամին հաւատքէն
է. որ մեր ամենուն հայրն է, ինչպէս որ
գրուած է, թէ Քեզ շատ ազգերու հայր
ըրի : Զոով . Գ . 16, 17 :

Եսկէ և ասոր պէս ուրիշ ասպացոյցնե-
րէն (Տես Ղուկ . Ե . 67—75 : Գործ . Գ .
25, 26 : Եբր . Զ . 13—18 լւ) յայտնի է որ
Աբրահամին և հաւատացելոց մէջ եղած
ան յատուկ կապակցութիւնը՝ Աբրահամին
հետ Աստուծոյ ըրած ուխտէն կախում ու-
նի . և քանի որ աս կապակցութիւնը
կը մնայ, քանի որ Աբրահամ հայր հաւա-
տացելոց կը մնայ, և անոնք ալ իրեն զաւ-
կրները, այնչափ ատեն ալ աս ուխտը հաս-
տատուն պիտի մնայ :

Գ . Ինչպէս որ աս ուխտին նշանը ա-
ռաջ թլփատութիւնն էր, անանկ ալ հի-
մա մկրտութիւնն է :

(Թլփատութիւնը տրուեցաւ Աբրահամին
իբրև նշան աս ուխտին, (Ծնոր . Ժ . 1 : 11).
որ նաև ետքը Մինէական ուխտին ալ նը-
շանը եղաւ . “Մովսէս ձեզի թլփատու-
թիւնը տուաւ . (որ չէ թէ Մովսէսէն էր,
հապա նախնիքներէն .) լւ : Զով . Ե . 22 :
Եւ որովհետև ան ժամանակը թլփատու-
թիւնը Մովսիսական օրինաց պահպանու-
թեան կապը կը համարուէր, անոր համար
առաքեալը կ'ըսէ, “Եթէ թլփատուիք,
Քրիստոս ձեզի օգուտ մը չըներ : Եւ դարձ-
եալ ամէն (շեթանտութենէ) թլփատ-
ուող մարդու կը վկայեմ, թէ սրտական

է բոլոր օրէնքը կատարելու» : Գաղ . Ե . 2 , 3 : Ուստի թլփատութիւնը՝ իբրև նշան Սինէական ուխտին կամ Ղևտական օրինաց , իսպանութեցաւ . բայց իբրև նշան Աբրահամեան ուխտին՝ մկրտութեան փոխութեցաւ : Եւ աս բանս հաստատելու համար բաւական է մտածել թէ ,

1 . Թէ որ Սկրտութիւնը հիմա Աբրահամեան ուխտին նշանը չըլլայ , ուրեմն ան ուխտը նշան չունի . Աբրահամու հետ եղած ուխտը մինչև հիմա կը կենայ և քրիստոնէական Եկեղեցոյն ուխտն է . բայց ինտոր կրնայ ըլլալ որ անիկայ այնքան դարեր մէկ արտաքին նշան մը ունենայ , ու ետքը ան նշանը վերցուի , և ուխտը առանց նշանի մնայ : Անշուշտ թլփատութիւնը որ Սինէական ուխտին ալ նշանը եղած էր , ան ուխտին հետ վերցուելով , Աստուած մէկնոր նշան մը՝ յիտի տար ան Աբրահամեան հնադոյն և մնայուն ուխտին . և ահա իր տուած նոր նշանը մկրտութիւնն է :

2 . Առջ թլփատութիւնն էր , և հիմա մկրտութիւնն է ան միջոցը որով մէկը դուրսէն կը մտնէ անուանեալ եկեղեցիին մէջ , այսինքն անոնց թիւը կ'ընդունուի՝ որոնց հետ արտաքին դաւանութեամբ աս ուխտը կը հաստատուի , և որոնք որ իրենց խոստովանութեամբ՝ խոստմունքին ժառանգներն են : Ամէնը կ'ընդունին թէ մկրտութիւնը հիմա դուռն է եկեղեցին մանելու . նմանապէս թլփատութիւնն էր եկեղեցին մտնելու դուռը Քրիստոս չեկած : Ըրշ

մարիտ է որ քանի մը ուրիշ ազգեր ալ
 թլփատութիւն կ'ընէին . բայց հիմա ալ կան
 ուրիշներ բաց 'ի քրիստոնէից որոնք մկրտու-
 թիւն կ'ընեն , այսինքն իբրև կրօնական արա-
 բողութիւն ջրով կը լուան . զորօրինակ շր-
 եաները թէ որ ուրիշ ազգէ դարձած
 նորահաւատ մը ընդունելու ըլլան կը մկրտ-
 տեն . նմանապէս Հնդկաստանի մէջ Հե-
 թանտները կը մկրտուին իրենց մեղքէն ա-
 զատութիւն ստանալու համար . և արդա-
 րև մարմինը ջրով լուարով մեղքէ մաքրուե-
 լու վարդապետութիւնը՝ հեթանոսական
 վարդապետութիւն մըն է , ու չէ թէ
 քրիստոնէական : Ստոյգ է որ աս օրինակ-
 ները՝ քրիստոնէական մկրտութիւն չեն .
 որովհետև ոչ Հրեաները և ոչ Հեթանոս-
 ները՝ Սուրբ Երրորդութեան անունովը կը
 մկրտեն : Բայց ասանկ ալ ան ուրիշ ազ-
 գերուն ըրած թլփատութիւնը Աբրահամեան
 չէր . որովհետև ոչ Մովսէսից և ոչ ուրիշ
 ազգերը թլփատուեցան իբրև նշան Աբրա-
 համեան ուխտին : Եւ վերջապէս թլփա-
 տութիւնը հրամայուեցաւ ան ժախնակի՝
 Աստուծոյ բոլոր ժողովուրդին , ճիշտ ինչ-
 պէս որ մկրտութիւնն ալ հիմա . քանզի
 երբոր հեթանոս մը ուզէր եկեղեցին մտ-
 նել , այնքան հարկաւոր էր անոր թլփատ-
 ուիլ , որչափ որ հիմա մէկը եկեղեցի՝
 ընդունուելու համար հարկաւոր է որ մը
 կրտուի :

3 . (Կ) Թլփատութիւնը որոշակի նոյն բա-
 ները կը ցուցընէր , որոնք որ մկրտութիւ-
 նը հիմա կը ցուցընէ :

Ե. • Թլփատուծիւնը հնազանդութեան գործողութիւն մըն էր, ինտոր որ հիմա մկրտութիւնը է :

Բ. • Թլփատուծիւնը ան արտաքին գործողութիւնն էր, որով մարդ մը Աստուծոյ ժողովուրդին անդամ կ'ըլլար, ինտոր որ հիմա մկրտութիւնը է :

Գ. • Թլփատուծիւնը գործողութիւն մըն էր, որով մարդը կը կապուէր Աստուծոյ բոլոր պահանջմունքներուն հնազանդելու, ինտոր որ մկրտութիւնով հիմա կը կապուի : Մարդարէնները շատ անգամ կը գրէին Հրէից համար թէ պարտաւոր են Աստուծոյ հնազանդիլ, ըստ որում իբրև Անոր ժողովուրդ թլփատուած էին . և Պօղոս կ'ըսէ, թէ թլփատուող մարդը պարտական է բոլոր օրէնքը կատարելու : Գաղ . Ե . 3 :

Դ. • Թլփատուծիւնը նշան և կնիք մըն էր հաւատոյ արդարութեան . նոյնպէս և հիմա մկրտութիւնը : Աւաքեալը կը բացատրէ թէ Աբրահամ « ետքը թլփատուծեան նշանը առաւ՝ իբրև անթլփատուծեան ատենէն ունեցած հաւատքին արդարութեանը մէկ կնիք մը, որ ինքը հայր ըլլայ ան բոլոր հաւատացողներուն՝ որոնք անթլփատուծեանէ են, (անոնց ալ արդարութիւն սեպուելու համար) » : Հոով . Գ . 11 : Հաւատաց Աբրահամ և թլփատուծեան նշանը առաւ . հիմայ ալ մարդիկ կը հաւատան և մկրտութիւն կ'ընդունին իբրև հաւատոյ նշանը : Հաւատք հարկաւոր է հիմա հեթանոսի մը՝ եկեղեցին մտնելու համար՝ մկրտա-

ուելէն առաջ . նմանապէս հին ատենը հաւատք հարկաւոր էր հեթանոսի մը՝ եկեղեցին մտնելու համար՝ թլփատուելէն առաջ , այսինքն թլփատութիւնը ան ատենը հաւատոյ խոտովանութեան մէկ գործողութիւնն էր , ինտոր որ հիմա մկրտութիւնը է :

(Թլփատութիւնը « հաւատքի արդարութեան կնիք » մըն էր . կնիքը կը գործածուի գրութեան մէջ անիկայ արժանահաւատ ընելու , կամ անոր արժանահաւատութեանը վկայելու համար : Ասոր համար Աբրահամ « թլփատութեան նշանը առաւ իբրև անթլփատութեան ատենէն ունեցած հաւատքին արդարութեանը մէկ կնիք մը » . (Հոով . 9 . 11 .) որով կնքուեցաւ ու հաստատուեցաւ ան մեծ ճշմարտութիւնը թէ հաւատքը արդարութիւն կը սեպուի , (Հոով . 9 . 3) , այսինքն թէ ամէն անոնք որ Աբրահամու հաւատքը ունին՝ արդարութիւն ունին : Եւ հիմա մկրտութիւնը նոյնը չէ . հաւատքով արդարանալու նոյն մեծ ճշմարտութիւնը չ'վկայելու և զանիկայ չ'հաստատելու :

Բայց ոմանք կ'ըսեն թէ մկրտութիւնը կնիք չէ , վասն զի բրիտանեանութեան կընիքը « գրոշմն » է : Աս բանիս պատասխան՝ կը հարցընենք թէ բոլոր Սուրբ Գրոց մէջ որ տեղ մէկ վկայութիւն կամ հրաման մը կայ գրոշմ ընելու :

Վարձեալ կ'ըսեն թէ մկրտութիւնը կընիք չէ , վասն զի բրիտանեանները « Հոգևով Արքով կնքուած » են , (Եբե . 1 .)

13 . Կ . 30 .) և փաստիւք կը ցուցնեն թէ Հոգւոյն Սրբոյ կնիքը մկրտութեան ատենը չարուիր . քանզի քանի մը մարդիկ մկրտուած էին ու չէին գիտեր թէ Սուրբ Հոգի կայ (ա) : Գործ . ԺԹ . 2 , 3 : Բայց սատասխան կու տանք թէ՛ Հոգւոյն Սրբոյ կնիքը մեր անձնական փրկութիւնը հաստատելու համար սրտի վրայ դրուած կնիք մըն է , բայց մկրտութեան կնիքը մէկ արտաքին և տեսանելի կնիք մըն է « հաւատքի արդարութեան » , այսինքն հաւատքով արդարանալու վարդապետութեանը , որն որ անշուշտ տարբեր բան մըն է : Ո՛վ կ'ուզէ հաստատել թէ Հոգւով Սրբով կրնքուիր , և մկրտութիւնով կնքուիլ նոյն խի բանն է :

Քրիստոնէայ Հայրերը՝ մկրտութիւնը իբրև կնիք կը հաստատեն . զորօրինակ՝ Երմաս որ ժամանակակից էր առաքելոց , (որուն անունը Պօղոս ալ կը յիշէ , Հոմ . ԺԹ . 14) , Աստուծոյ Որդւոյն կնիքին վրայ խօսելով , կ'ըսէ « Բայց ան կնիքը ջուր է » : Կաև Գրիգոր Նազիանզացին չորրորդ դարուն մէջ , յանդիմանելով կին մը իր զաւակը մկրտելու ուշացնելուն համար՝ կ'ըսէ , « Դուն կը վախնաս կնիքը տալու անոր » : Նմանապէս Նոր Ատակարանին դրաբառ լեզուով Թարգմանիչները , յայտնապէս մկրտութիւնը իբրև կնիք համարած

(ա) Բայց ասանկ ըսողները չեն նկատեր որ անմեք միայն Յովհաննու մկրտութիւնով մկրտուած էին :

են, վասն զի (Ե. Կորնթ. Ե. 14—16,)
 ըսելէն ետքը թէ, “Գոհանամ զԱստու-
 ծոյ խնոյ՝ զի ոչ զոր ՚ի ձէնջ մկրտեցի՝
 բայց միայն զկրիստոս՝ և զԳայիոս . զի մի՛
 որ ասիցէ, թէ յիմ՝ անուն մկրտեցարուք, ” .
 կը յարեն, “Տալ եսու հնիք և տանն Ստեփանոս
 նեայ . և զայլ որ ոչ զիտեմ ամենեին՝
 թէ մրտեցի ” : Իսկ՝ Յոյն բնագրին մէջ աս
 երկու բառն ալ “մկրտել ” դրուած է :

Ե . Ինչպէս թլփատու թիւնը հոգևոր նու-
 րոգութիւնը և մաքրութիւնը կը նշանակէր,
 անանկ ալ մկրտութիւնը :

Ոմանք կ'ըսեն թէ՝

“ Թլփատութիւնը հոգևորի չգալէտլ՝ բոլորովն մարմ-
 նաւոր մէկ նշան մըն էր Եսրայէլացոց ազգին համար ” :

Ա՛յ ըսելը բոլորովն հակառակ է Սուրբ
 Գրոց ամենասպարդ յայտնութեանցը : Մար-
 գարէնները՝ ժողովուրդը իրենց աստատմութե-
 անք և չարութեանք վրայով յանդիմա-
 նելով, շատ անգամ “ Սրտով և ականջով
 չթլփատուած ” կը կոչէին զանանք : Ղեւոյ . Ի. Գ. 41 :
 Եբեճ . Գ. 10 : Թ . 26 : Եղե՛կ . Ի. Գ. 7 . 9 :
 Գործ . Ե. 31 : Աստուած պատուի-
 րեց անանց, թէ “ Չէր սրտերուն անթըլ-
 փատութիւնը թլփատեցէք . ու ձեր պարա-
 նոցները ալ մի՛ խատացընէք ” : Ի Օբե՛ն . Ժ . 16 :
 “ Ո՛վ Յուդայի մարդիկներ, ու Երուսաղէմի
 բնակիչներ, Տէրոջը թլփատուեցէք, և ձեր
 սրտին անթլփատութիւնը վերցուցէք, որ
 չըլլայ թէ իմ բարկութիւնս ձեր չար գործ-
 քերուն համար՝ կրակի պէս բորբոքի ու այրէ :
 և մարդ մը չըլլայ ” : Եբե՛ճ . Գ . 4 : Ի

Օրինաց . 1 . զԼ . 6 . համարին մէջ , Աստուած կը խոստանայ , “ Եւ քու Տէր Աստուածդ քու սիրտդ և քու որդւոցդ սիրտը պիտի թլփատէ , որպէս զի քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ ու բոլոր հոգիովդ սիրես , որ սարխա ” : Նաև կ'ըսէ Աւարեալը . “ Չէ՛ թէ ամէն խորայէլէն եղողները խորայէլացի են ” (Զոռճ . Թ . 6) . այսինքն հին ատենի եկեղեցիին մէջ , ինտոր նաև Քրիստոսն էից եկեղեցիին մէջն ալ , շատերը Աստուծոյ ժողովուրդ կոչուած էին որոնք որ խկասպէս չէին : “ Ինչու որ շքեայ չէ ան՝ որ դրսուանց է , և թլփատութիւն չէ ան՝ որ դրսուանց մարմնաւ է . հասլա շքեայ ան է՝ որ ներսուանց է , և թլփատութիւն սրտինը՝ հոգիով , ու չէ թէ գիրով . որուն գովութիւնը չէ՛ թէ մարդիկներէն է , հասլա Աստուծմէ ” : Զոռճ . Թ . 28 , 29 : “ Ինչու որ թլփատութիւնը մենք ենք (այսինքն մենք ենք ճշմարիտ խորայէլ) , որ հոգիով Աստուած կը պաշտենք , ու կը պարծենանք Քրիստոս Յիսուսով , և մարմնի վրայ չէ պարծանքս ” : Փիլիպ . Գ . 3 : Նմանապէս՝ ինտոր վերը յիշեցինք , նոյն Աւարեալը ուրիշ տեղ կ'ըսէ . թլփատութիւնը հաւատքին արդարութեանը մէկ կնիք մըն էր : Զոռճ . Թ . 11 : Ապա ուրեմն բոլորովին “ մարմնաւոր ” մէկ նշան մըն էր թլփատութիւնը , և “ հոգեորին չէր դպէր ” : Անտեղի խօսք . որ ընդհակառակն աս բոլոր վկայութիւններէն յայտնի է որ թլփատութիւնը ճիշտ նոյն

Հաւատքով Արդարութիւնը և Հողիին Նորոգութիւնը կը նշանակէր, ինտոր որ հիմնաւ մկրտութիւնը :

Պօղոս Առաքեալ մկրտութիւնը յատկապէս թլփատութիւն կը կոչէ, քանզի կ'ըսէ Կողոսացւոց, Ի Գլուխ . 11, 12 համարներուն մէջ, « Որ անով դուք անձեռագործ թլփատութիւնով թլփատուեցաք՝ մեղաց մարմինը մերկանալով Քրիստոսի թլփատութիւնովը . թաղուելով անոր հետ մկրտութիւնով, որով նաև անոր հետ յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը հաւատալով . որ ինքը զանիկայ մեռելներէն յարուց » : Հոս՝ կ'ըսէ առաքեալը՝ թէ, « Դուք շէթանոսներ թլփատուած էք », և ինչպէս . « մկրտութիւնով » : Ծճմարիտ է որ՝ հոգևոր թլփատութեան և հոգևոր մկրտութեան վրայ կը խօսի, որ « անձեռագործ » է . բայց նոյն խօսուածքով կը հաստատէ հոգևոր թլփատութեան և հոգևոր մկրտութեան մէկ բան ըլլալը . այսինքն կ'իմացունէ թէ թլփատութիւն և մկրտութիւն հոգևորապէս մի և նոյն նշանակութիւնը ունին :

Թլփատութիւնը օրինակ մը չէր, ոչ մկրտութիւնը անոր լրումը համարուի, կամ շուք մը՝ որ մկրտութիւնը անոր մարմինը և Ծճմարիտ էութիւնը ըլլայ, ինչպէս կ'ըսէն ոմանք . քանզի աս երկուքը մէկ և հաւասար են զօրութեամբ՝ նշանակութեամբ և հարկաւորութեամբ : Մկրտութիւնը անբանն է հիմնա, ինչ որ թլփատութիւնը է :

առաջ , այսինքն թլփատութեան տեղը տրբուած է անիկայ :

Վախնի քրիստոնեայ Հայրերն ալ մկրտութիւնը թլփատութեան տեղը համարած են . զորօրինակ այսպէս կ'ըսէ Օգոստինոս .
 « Մկրտութիւնը երախաներուն ինչ օգուտ ընելը կրնանք թլփատութեան հետ բաղդատելով իմանալ , որն որ նախնի դարերու Աստուծոյ ժողովրդեանը տրուած էր » : Ասեղանակով կը խօսին մկրտութեան վրայ նաև Յուստինոս մկայ , Բարսեղ , Ամբրոսիոս , Յովհանն Ռսկեբերան և ուրիշները :

Հոս հարկ չէ կանանց չթլփատուելուն վրայով դիմադրութիւններ յառաջ բերել , ըսելով թէ անոնք հիմա կը մկրտուին . քանզի թլփատութիւնը անանկ մէկ բան մըն էր որ չէր կրնար կանանց մատակարարուիլ : Սակայն յայտնի է որ անոնք ալ թլփատուած կը սեպուէին , որովհետև ան թլփատ մէկու մը թոյլատուութիւն չկար Պատեքը ուտելու . (Եւեյ . ժ . 48) . բայց կանաք կը հաղորդէին անոր : Ղ . 1 . 41 : Ուրեմն կը տեսնենք որ իբրև թլփատուած կը համարուէին , ուստի հակառակութեան տեղի չկայ աս տեղ :

Դ . Քրիստոսէն առաջ ուխտին կնիքը կամ նշանը Աստուծոյ ժողովրդեան զաւակացը կը տրուէր . և եկեղեցին նոյն ուխտին վրայ կրկայանայ հիմա ալ , ուստի որովհետև Քրիստոս զաւակաց մատակարարելու իրաւունքը և սպարաքը չխափանեց , ուրեմն հիմայ ալ տրուելու է ան՝ բոլոր

հաւատացեալներուն զաւակացը : Աշանին փոխուիլը՝ ոչ ուխտը փոխեց և ոչ ալ աշտը կնիքը հաւատացելոց զաւակներուն տալու իրաւունքը և պարտքը խախտեց :

Հարկ չէր Քրիստոսի՝ որ յատուկ պատուէր տար առաքելոց, զաւակները իրենց հայրերնուն հետ մկրտելու : Քանզի արդէն շրեաները նորահաւաններուն զաւակները իրենց ծնողացը հետ կը թլփատէին և կը մկրտէին ալ . աս գիտնալով առաքեալները հարկաւ պիտի հասկընային թէ Քրիստոս տըղաքներն ալ մկրտեցէք ըսել կ'ուզէ : Թէ որ փոխանակ հրամանն ընելու ան ատենը ան ուխտին մէկ նոր նշանը գործածելու, պատուիրէր անոնց որ հին նշանին գործածութիւնը պահեն, այսինքն թլփատեն իր աշակերտները, պիտի անշուշտ չհասկընային թէ պէտք է որ ան փոքր տղաքներն ալ թլփատեն՝ որոնց ծնողքները Քրիստոսի աշակերտ եղան :

Իայց եթէ ըսուի՝ թէ մկրտելու համար հաւատք հարկաւոր է ու տղաքը չէն կըրնար հաւատք ունենալ, վասնորոյ պէտք չէ որ մկրտուին : Ար պատասխանեմ՝ թէ նմանապէս հաւատք հարկաւոր էր թլփատուելու համար : Ուտի աս կանոնով պէտք էր որ չթլփատուէին տղաքը : Դարձեալ՝ եթէ ըսուի թէ տղաքը չէն կրնար հաւատքը խոստովանիլ, վասնորոյ պէտք չէ որ մկրտուին, կը պատասխանեմ՝ թէ ասանկ ալ խոստովանութիւն հարկաւոր էր թլփատութեան . ուպտի պէտք չէր որ թլփատուէին : Մէկ խօս-

քով ինչ սրտաճառ որ հիմա յառաջ բերուի հաւատացելոց տղաքը մկրտելու սովորութեանը դէմ, նոյնը կրնար շրէից ատենը յառաջ բերուիլ զանոնք թլփատելու սովորութեանը դէմ. սակայն Աստուած սրտուիրեց անոնց իրենց զաւակները թրլփատել և անոր համար կը թլփատէին : Նոյնպէս առաքեալները գացին և մկրտեցին ամբողջ գերդաստաններ միայն իրենց զուխներուն հաւատալովը . զորօրինակ՝ երբոր հաւատաց բանտապետը, Պօղոս մկրտեց զանիկայ ու բոլոր իրենները : Գործ . Ժ.Պ. . 33 : Երբոր Լլղիա հաւատաց, մկրտուեցուինքը և իր տունը : Կամար 1Յ : Եւ կը կարգանք եկեղեցական պատմութեան մէջ թէ տղաքը մկրտելը քրիստոնէից եկեղեցւոյն մէջ ի սկզբանէ անտի միշտ կը գործածուէր :

Հիմա զանք քննելու թէ՛

Ի՞նչ է Տղաքը մկրտելուն նշանակութիւնը :

1 . Տղաքը մկրտելը կը նշանակէ թէ ան տղաքը ապականեալ էակներ են՝ անմաքուր, և մաքրութեան կը կարօտին . վասն զի թէ որ անանկ չըլլային, պիտի չմկրտուէին :

2 . Ար ցուցնէ թէ Աւետարանով կայ մաքրութիւն իրենց համար սրտրաստուած . ցուցնէր թէ իսկապէս կը մաքրուին, այլ միայն թէ մաքրութիւն կայ, որ կըլլայ Հոգւոյն Սրբոյ գործողութեամբը՝ որուն կը կարօտին, և կը յուսանք թէ պիտի յորուի անոնց :

3 . Ար ցուցընէ՝ ոչ թէ անոնց հաւատք ունենալը , այլ փրկութիւնը հաւատքով ըլլալը , և թէ՛ թէ որ ետքը հաւատք ունենան պիտի փրկուին : Ար ցուցընէ նաև թէ անոնք հաւատացեալ ժողովուրդէ մըն են , որուն որ շատ պատուական խոստմունքներ տրուեցան : Տղաքը կը մկրտուին ոչ թէ բուն իրենց հաւատքին իրաւունքովը , այլ իրենց ծնողացը հաւատացեալ ըլլալուն իրաւունքովը : Սուրբ Գրոց նայելով ուրիշ տղաքներ մկրտուելու չեն . վասն զի մկրտութիւնը՝ որ մէկ արտաքին նշան և հաւատոյ խոստովանութիւն մըն է , նշանակութիւն մը չունենար թէ որ տղուն ծնողքը ճշմարիտ հաւատացեալ չեն : Այսպէս Ներսէս Շնորհալին իր ընդհանրական Գիւրքին մէջ « Առ դասս Քահանայից , գրած հատուածին մէջ կ'ըսէ թէ այլազգեաց տղաքները մկրտելը՝ թէև հին սովորութիւն , բայց հակառակ է Քրիստոսի պատուիրանին , և անընդունելի . « Ասեմք և յաղագս զծնունդս այլազգեացն մկրտելոյ , որ սովորութեամբ բերի 'ի հին ժամանակաց , և է ընդդէմ՝ հրամանին Քրիստոսի , որպէս ասաց՝ Ոչ տալ զսրբութիւն շանց (Մատթ . 12 . 6) . զոր արժան էր խափանել , և ո՛չ թողացուցանել . զի զի՞նչ օգուտ է այլով բերանով խոստովանիլ զՔրիստոս , և զգե՞նուլ զնա մկրտութեամբն՝ մինչ անբանն է և անզգայ , և յորժամ զարգանայ հասակաւ՝ մերկանալ դարձեալ ուրացութեամբն , և լինել հայհոյիչ Աստուածային խորհրդոյ տնօրէնութեան նորա՝

ըստ դենին իւրեանց , փոխանակ փառաբա-
նիչ լինելոյ » : Տղաքը մկրտելը կը նշանակէ
թէ անոնք հաւատոյ որդիք են , այսինքն
իրենց ծնողքը հաւատացեալ են , որոնք հա-
ւատք ունին անոնց համար , և զանոնք Ա-
ւետարանի հաւատքին մէջ պիտի մեծցունեն .
որ ասանկ հաւատացելոց սերունդը՝ հաւա-
տացեալ սերունդ պիտի ըլլայ :

4 . Փոքր երեխաներուն մկրտութիւնը աշա-
կերտութեան յարմար մէկ նշանն է , որով
տղաքը կանուխ Քրիստոսի նուիրուած են և
խոստացուած որ անոնք վերջը անոր հետե-
ւողները պիտի ըլլան : Քրիստոսի դպրատանը
մէջ աշակերտութեան նշանը մկրտութիւնն
է : Ան կը պահանջէ որ իրեն հետեւողնե-
րուն փոքրիկ տղաքը իրեն բերուին իր օրհ-
նութիւնը առնելու համար , և իրեն նուիր-
ուին՝ իրը ըլլալու համար , և թէ աշակեր-
տութեան նշանը դրուի անոնց վրայ : Ծը-
նողքը մկրտութեան ժամանակը կը խոստո-
վանին թէ զաւակը իրենցը չէ՛ , այլ Աս-
տուծոյ , երկիւղածութեամբ Աստուծոյ կը
նուիրեն զանիկայ , և խօսք կու տան իրենց
բոլոր կարողութիւնովը կըթել և մեծցունել
որ Աստուծոյ ճշմարիտ մէկ զաւակը ըլլայ :

5 . Փոքր երեխաներուն մկրտութիւնը կնիքն
է ան ուխտին , որ կ'ըլլայ Աստուծոյ և ծնո-
ղացը մէջ իրենց տղին վրայով : Աստուած՝
իր ժողովուրդին և անոնցմէ ետքը անոնց
սերունդին՝ Աստուած ըլլալ (Ծննդ . 1 :
7 : Տե՛ս Կաթ . Եսայ . 10 : 3 : Ան . 23 :
Գործ . 1 . 39 .) կը խոստանայ ան ուխտին

մէջ՝ որուն նշանը և կնիքն է մկրտութիւնը : Ար խոստանայ թէ՛ թէ որ ծնողքները հաւատարիմ կենան իրեն հնազանդելու , և տղաքնին իրեն համար մեծցունելու , պիտի օրհնէ ան տղաքները և իրը ընէ : Ծնոր . ժ. . 19 : Բ Օրէն . 1 . 9 : 1 . 6 : Սաղմ . 21 : 5 , 6 : ՆԳ . 17 : ՆԺԲ . 2 : Առակ . 1 . 7 : ԻԲ . 6 : Վերջապէս կը նըշանակէ՛ որ եթէ Աստուծոյ հետ ուխտ դրած ծնողքները հաւատարիմ ըլլան իրենց որդւոյր , և անոնք Տէրօջը խրատներուն և կրթութեանը մէջ մեծցընեն , Աստուած ալ կը խոստանայ սրբարար շնորհքը տալ անոնց և անոնց Աստուածը և բաժինը ըլլալ թէ աս աշխարհիս մէջ և թէ յաւիտեանս յաւիտենից :

Արեմն տղոց մկրտութիւնը , աս անվրէպ մեկնութիւնովը՝ շատ երևելի բան մըն է . վասն զի անիկայ Աստուծոյ ու ծընողացը մէջ եղած ուխտի մը տեսանելի կնիքն է , այսինքն նշան մը՝ որով աս ուխտին երկու կողմերը կը հաստատեն և ապահով կ'ընեն իրենց դաշնադրութիւնը : Աստուած՝ իր անձառելի մարդասիրութեամբը այսպէս կ'ըսէ ծնողաց . « Թէ որ դուք ինձի կը մատուցանէք աս ձեր զաւակը և հաւատարմութեամբ ինձի համար կը մեծցունէք , ես անոր Աստուածը պիտի ըլլամ » . և ծնողքը կը պատասխանեն , « Ար խոստանոնք հաւատարիմ մնալ քեզի և աս մեր զաւակին . և հիմա հոս յայտնի քեզի կը մատուցանենք անիկայ , և խօսք կու տանք՝

քեզի համար մեծցրնել անիկա » : Արդեօք բոլոր բարեպաշտ ծնողքները՝ պիտի չհամարին թէ ասանկ դաշնադրութիւն մը մեծ սլարտաւորութիւն է իրենց , և միանգամայն ուրախալից արտօնութիւն մը : Երանի՛ թէ ամէն Քրիստոնեայ կոչուած ծնողքները և ամէն մկրտեալ զաւակները աս խորհուրդին ճիշտ նշանակութիւնը հասկընային :

Արդ՝ սիրելի ընթերցող , կ'աղաչեմ որ խոնարհաբար աղօթելով , քննես Սուրբ Գիրքերը , որպէս զի տեսնես թէ աս տետրակիս մէջ բոլոր մեր ըսածները Աստուածային ճշմարտութիւնը չէ : Այլ խնդրեմ նաև որ սրտի մտօք աս հարցումն ալ խորհիս . Արդեօք ես քրիստոնեայ եմ : Քրիստոնեայ ըլլալը ինչ նշանակելուն վրայով շատ անտեղի դադափարներ կան մարդոց մէջ : Ոմանք կը խորհին՝ որ եթէ մէկը անգամ մը մկրտուի , ալ անիկայ միշտ քրիստոնեայ է , թէև յետոյ ան անունը ուրանայ . այսինքն թէ որ անհաւատ՝ հեթանոս՝ կամ անաստուած ալ ըլլայ , տակաւին քրիստոնեայ է վասն զի մկրտուած է : Շատերն ալ կը խորհին թէ որովհետև իրենք եկեղեցիին մէջն են , և անոր օրինադրած քանի մը արտաքին գործքերը կ'ընեն , ուրեմն ճշմարիտ քրիստոնեայ են : Այսպէս մարդիկ արդար և քրիստոնեայ են անուամբ . բայց թէ որ միայն անունով քրիստոնեայ են , պիտի չկրնան

բնաւ երկինքը երթալ, “Չէ՛ թէ ամէն իւրայէլէն եղողները իսրայէլացի են” : Հւռով . Թ . 6 : Պօղոսի՝ Հրէութեան և Թլլիա տուութեան վրայով ըսածը (Հւռով . Թ . 28, 29 .) քրիստոնէի և մկրտութեան համար ալ հաւասարաբար կրնանք ըսել, “Քրիստոնէայ չէ ան՝ որ դրսուանց է, և մկրտութիւն չէ ան՝ որ դրսուանց մարմինով է . հապա քրիստոնէայ ան է՝ որ ներսուանց է, և մկրտութիւն սրտինը՝ հոգիով, ու չէ՛ թէ զիրով . որուն գովութիւնը չէ՛ թէ մարդիկներէն է, հապա Ատուծմէ” : Գիտցած ըլլաւ որ դուն Մկրտութիւնով նորէն ծնած չես . բայց կայ վերստին ծնունդ մը Հոգւով Արքով, որն որ եթէ չունենաս, բնաւ չես կրնար Ատուծոյ Թագաւորութիւնը տեսնել, “Ասան զի Քրիստոս Յիսուսի քով ոչ թլլիատութիւնը (մկրտութիւնը) բան մը կրնայ, ոչ ալ անթլլիատութիւնը (անմկրտութիւնը), հապա հաւատքը՝ որ սիրով ի գործ կը դրուի” : Գաղ . Ե . 6 : “Թէ որ մէկը Քրիստոսի մէջ է, անիկայ նոր ստեղծուած մին է . հիները անցան, և ահա՛ ամէն բան նոր եղաւ” : Թ . Կորնթ . Ե . 17 : Աս սրտի նորոգութիւնը որ մէկ խոնարհ և սուրբ կեանքի մը կ’առաջնորդէ մեզ, ան է՝ որ մենք պէտք է բուն մեր փորձառութեամբը գիտնանք, եթէ ոչ բոլոր մեր յոյսերը ոչինչ են : Փրկութիւնը ոչ թէ արտաքին երևոյթով եկեղեցիին անդամ ըլլալովն է, այլ Քրիստոսի հաւատալով, և Սուրբ Հոգիէն նորոգուելով : “Զանքը ը-

րէք որ նեղ դռնէն մտնէք . քանզի կ'ըսեմ՝
 ձեզի, որ Հատերը մտնել սխաի ուզեն, և
 սխաի չկրնան, » : Ղաւ . Ժ . Գ . 24 : « Ինչու
 որ լայն է ան դուռը՝ ու ընդարձակ ան
 ճամբան, որ դէպ ի կորուստ կը տանի . և
 շատուր են անոնք՝ որ անկէ կը մտնեն : Ինչ
 չու որ նեղ է ան դուռը՝ ու նեղուացք է ան
 ճամբան, որ դէպ ի կեանք կը տանի . և
 քիչուր են անոնք՝ որ զանխկայ կը գտնեն . . . :
 Ո՛չ թէ ամէն մէկը՝ որ ինծի Տէր Տէր
 կ'ըսէ, սխաի մտնէ երկնից թագաւորու
 թիւնը . հապա անխկայ որ իմ երկնաւոր
 Հօրս կամքը կը կատարէ, » : Մատթ . 13 . 13 ,
 14 . 21 : « Պէտք է ձեզի նորէն
 նստնել, » : Յովն . Գ . 7 :

Ս. Ն. Ր. Բ.



ՅԼՆԿ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ե Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ե Ր Ե Ս


| | | |
|------|--|----|
| ԳԼ . | Ա . Մկրտութեան վրայ . . . | 1 |
| | Ի՞նչ է մկրտութիւնը . . . | 2 |
| | Ի՞նչ է Մկրտութեան դիտաւոր թիւնը և օգուտը . . . | 3 |
| ԳԼ . | Բ . Մկրտութիւնը միջոց է վեր- րատին ծննդեան . . . | 6 |
| | Սուրբ Գրոյ մէջ վկայութիւն չունինք . . . | 6 |
| | Լստուծոյ խօսքն է ան միջոցը . . . | 8 |
| | Ի՞նչ է վերատին ծնունդը . . . | 10 |
| ԳԼ . | Գ . Վերատին ծնունդը հողե- ւոր փոփոխութիւն մը ըլլալուն համար այլ ևս վկայութիւն- ներ . . . | 18 |
| | Մկրտութիւնը աս փոփոխու- թիւնը չընէր . . . | 23 |
| ԳԼ . | Դ . Բովանդակութիւն վկա- յութեանց , որոնք վերատին ծննդեան մկրտութեամբ չըլլա- լը կը ցուցնեն . . . | 27 |
| | Ա . Սուրբ Գիրքէն վկայու- թիւն չունինք մկրտութեամբ վերատին ծնունդ ըլլալուն . . . | 27 |
| | Բ . Շատ վկայութիւն ունինք | |


- Թէ Աստուծոյ խօսքն է միջո-
 ցը 27
- Գ . Մկրտութիւնը յարմա-
 րութիւն մը չունի ասանկ փո-
 փոխութիւն մը յառաջ բե-
 րելու 29
- Դ . Թէ որ մկրտութիւնը նո-
 րոգութիւն է , ուրեմն նորէն
 ծնածները մարդու կամքէ ծը-
 նած են 30
- Ե . " " Ուրեմն չմկրտ-
 ուած մէկը հաւատք չի չկր-
 նար ունենալ 31
- Զ . " " Ուրեմն աւետա-
 րանի պաշտօնեաներուն առջի
 գործը պէտք է ըլլալ ան 31
- Է . " " Ուրեմն ամէն մը
 կրտուածները պիտի փրկու-
 ին 33
- Ը . Իրօք կը տեսնենք մկրտու-
 թեան վերստին ծնունդ չար-
 տադրելը 35
- Թ . Նորոգութիւնը մկրտու-
 թեամբ ըլլալ հաստատողները
 հաւատքով փրկուելուն վար-
 դապետութիւնը կը կործա-
 նեն 36
- Ժ . Չափահաս մարդիկ պար-
 տին նախ վերստին ծնանիլ և
 ապա մկրտուիլ 48
- ԳԼ . Ե . Ե . Մկրտութիւնը կը
 մաքրէ՞ սկզբնական մեղքը 50

| | |
|---|----|
| Ի . Ի՞նչ է մկրտութիւնը և ինչո՞ւ կը մկրտենք | 56 |
| Գ . Մկրտութիւնը ի՞նչ մը- տօք հարկաւոր է փրկու- թեան | 67 |
| ԳԼ . Օ . Ինչո՞ւ համար տղաքը կը մկրտենք | 70 |
| Ա . Հին և Նոր Կտակարա- նի եկեղեցիները մի և նոյնն են | 71 |
| Բ . Եկեղեցին՝ թէ՛ հին և թէ՛ Նոր Կտակարանի ժամանակը մի և նոյն ուխտին տակն է . . . | 77 |
| Գ . Մկրտութիւնը նշան է ուխտին, ինչպէս որ առաջ թլփատութիւնը | 81 |
| Դ . Ուխտին կնիքը (այսինքն մկրտութիւնը) հիմա ալ տրը- ուելու է հաւատացեալներուն զաւակացը | 90 |
| Ի՞նչ է տղաքը մկրտելուն նշա- նակութիւնը | 92 |
| Վերջաբանութիւն | 96 |



1857





3038

1100

2951